

Համագործակցության համար մեզ հետ կապվե՛ք

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԴԿ



PARTNERSHIP & TEACHING NGO

«ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՈՒՍՈՒՑՈՒՄ»/ԳՈՒՄ ՀԿ

PARTNERSHIP AND TEACHING/P&T NGO

Տ ԱՐ Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2012-2013
ANNUAL REPORT

Հասցե՝ ք. Գորիս, Խորենացու 41,

Ք. Երևան, Ն. Ջաղյան 73/1

Հեռ. 0284/ 2-23-19, 094 20 18 17

artebagum@gmail.com

Բովանդակություն

- ❖ ԳՈՒԲ ԶԿ-ի ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՍՔ
- ❖ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
- ❖ ՄԵՐ ՄԱՍԻՆ
- ❖ ԳՈՒԲ ԶԿ-ի ԿՈՂՄԻՑ 2012-2013թթ ԻՐԱՎԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 - **ԿՐԹԱՎԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**
 - ✦ «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում»
 - ✦ «Երեխայակենտրոն դպրոց. Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ (SMIS)»
 - ✦ «Ուսուցիչների և դեռահասների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում»
 - **ՀԱՄԱՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**
 - ✦ «Տրամադրել ադմինիստրատիվ աջակցություն համայնքային և քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված գործողությունների իրականացմանը Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում»
 - ✦ 2012-2013թթ Համայնքային ակտիվ խմբերի/ՀԱԽ կողմից իրականացված նախաձեռնություններ
 - Ենթաձեռագիր 1. «Համայնքային նախաձեռնություններ ժամանակակից տեխնոլոգիաներով»
 - Ենթաձեռագիր 2. «Երիտասարդական կենտրոն սահմանամերձ գյուղում»
 - Ենթաձեռագիր 3. «Տարեցների ակումբ Գետափ համայնքում»
 - Ենթաձեռագիր 4. «Համագործակցությամբ նախակրթության բարելավում»
 - Ենթաձեռագիր 5. «Մանկապարտեզ բաց երկնքի տակ»
 - Ենթաձեռագիր 6. «Աղբահանության կայուն մեխանիզմի ներդրում Հալիծոր համայնքում»
 - Ենթաձեռագիր 7. «Քարահունց համայնքի երիտասարդական կենտրոնի վերանորոգում»
 - Ենթաձեռագիր 8. «Ակտիվացնենք համայնքի հասարակական կյանքը»
 - Ենթաձեռագիր 9. «Համայնքային ակտիվություն, բարելավված կյանքի որակ»
 - Ենթաձեռագիր 10. «Խնձորեսկի կենտրոնական փողոցի լուսավորության ապահովում, մանկական խաղահրապարակի հիմնում»
 - Ենթաձեռագիր 11. «Սպորտային և մշակութային առաջընթաց»
 - Ենթաձեռագիր 12. «Անդրադարձ մշակութային արձատներին»
 - Ենթաձեռագիր 13. «Համախմբված համայնք, հաշվետու ՏԻՍ»
 - Ենթաձեռագիր 14. «Իմ համայնքն իմ տունն է»
 - Ենթաձեռագիր 15. «Առաջընթաց քայլ»
 - Ենթաձեռագիր 16. «Համախմբված համայնք»
 - Ենթաձեռագիր 17. «Հալիծորի համայնքային կենտրոնի գործունեության ակտիվացում ի շահ համայնքի համախմբման»
 - Ենթաձեռագիր 18. «Սիսիան քաղաքում սպորտի զարգացում»
 - Ենթաձեռագիր 19. «Համայնքի երիտասարդներն ակտիվ են համայնքի տարբեր նախաձեռնություններում»
 - Ենթաձեռագիր 20. «Մշակութային զարգացում»
 - Ենթաձեռագիր 21. «Ակազա մշակութային քաղաք»
 - Ենթաձեռագիր 22. «Մշակութային կյանքը Գոմք համայնքում»
 - Ենթաձեռագիր 23. «Համակարգչային կենտրոն սահմանամերձ գյուղում»
 - Ենթաձեռագիր 24. «Գրադարանը՝ համայնքի մտավոր կենտրոն»
 - ✦ 2012-2013թթ Համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակումբների/ՀԵՆԱ կողմից իրականացված նախաձեռնություններ
 - Ենթաձեռագիր 1.
 - Փուլ 1. «Ես կամավոր եմ»
 - Փուլ 2. «Պատմամշակութային արշավ»
 - Ենթաձեռագիր 2.
 - Փուլ 1. «Իմ համայնքը»
 - Փուլ 2. «Իրազեկ երիտասարդություն»
 - Ենթաձեռագիր 3.
 - Փուլ 1. «Մշակութային և սպորտային զարգացում»
 - Փուլ 2. «Մշակութային կյանքի զարգացում»
 - Ենթաձեռագիր 4.
 - Փուլ 1. «Կանանց և աղջիկների միասնական նվիրված միջոցառում»
 - Փուլ 2. «Ուլունքագործության դասընթացներ և ցուցահանդեսի կազմակերպում»
 - Ենթաձեռագիր 5.
 - Փուլ 3. «Համայնքի երեխաների զեղազիտական դաստիարակություն»
 - Ենթաձեռագիր 5.
 - Փուլ 1. «Կանանց միասնական նվիրված միջոցառումներ»
 - Փուլ 2. «Հրաժեշտ դպրոցին միջոցառումներ»
 - Փուլ 3. «Ուրախ մարզադպրոց»

Ենթաձեռագիր 6.

Փուլ 1. «Ցերեկույթ՝ նվիրված համայնքի կանանց մեծարմանը»

Փուլ 2. «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշում»

Ենթաձեռագիր 7.

Փուլ 1. «Կանանց տոնին նվիրված միջոցառում»

Փուլ 2. «Գյուղի օրվան նվիրված միջոցառում»

Ենթաձեռագիր 8.

Փուլ 1. «Ձեզ տեսնենք աղջիկներ»

Փուլ 2. «Նկարում են մեր երեխաները» մանկական մրցույթ-փառատոն

Ենթաձեռագիր 9.

Փուլ 1. «Իրազեկ և համախմբված երիտասարդություն»

Փուլ 2. «Պատանի բնասերները»

Ենթաձեռագիր 10.

Փուլ 1. «Ծանաչենք մեր համայնքը»

Փուլ 2. «Նախածեռնում ենք և մասնակցում»

Ենթաձեռագիր 11.

Փուլ 1. «Կանաչ համայնք»

Փուլ 2. «Ակտիվ համայնք»

Ենթաձեռագիր 12.

Փուլ 1. «Տեղկատվությունը որպես համայնքի հզորացման գործիք»

Փուլ 2. «ԴԵՆԱ փառատոն՝ Վայոց Ձոր-2013»

Ենթաձեռագիր 13.

Փուլ 1. «Մարզական նվաճումներին ընդառաջ»

Փուլ 2. «Ծանաչենք մշակութային արժեքները՝ ստեղծելով նոր արժեքներ և մասնակցելով ԴԵՆԱ-2013 մարզային փառատոնին»

Ենթաձեռագիր 14.

Փուլ 1. «Դին և նոր ավանդույթներ»

Փուլ 2. «ԴԵՆԱ փառատոն՝ Վայոց Ձոր-2013 և Մանկական ծամբար»

Ենթաձեռագիր 15.

Փուլ 1. «Ակտիվ համայնքային կյանք»

Փուլ 2. «ԴԵՆԱ փառատոն՝ Վայոց Ձոր-2013»

- ✦ «Համտես-փառատոնի ադմինիստրատիվ աջակցություն»
- ✦ «Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն»
 - «Համայնքային մոբիլիզացման միջոցառումների կազմակերպում և իրականացում Տավուշի և Մեղրիի 26 համայնքներում»
 - **ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆ ԱՎԱՆԻ ԿԱՐՈՂՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**
- ✦ «Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացում՝ ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության»

Ենթաձեռագիր 1

- «Շահագրգիռ կողմերը միասին հանուն Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի հզորացման»
- «Բարելավված հանրային ծառայություններ»
 - ✓ 2012-2013թթ «Համայնքային զարգացման աջակցության ցանցի»/ՀԶԱՑ նախածեռնություններ
- ✦ «Ակտիվ քաղաքացիներ-զարգացած համայնք»
- ✦ «Ակտիվ քաղաքացիներ-զարգացած համայնք 2»
- ✦ «ՏԻՄ ոլորտի կարողությունների զարգացման ծրագիր»
- ✦ «ՏԻՄ-երի համար վերապատրաստման դասընթացների իրականացում»
- ✦ «ՏԻՄ-երի վերապատրաստման դասընթացների իրականացում 2»
- ✦ «Առողջության պահպանման իմ իրավունքը»
- ✦ «Պաշտպանված լինելու իմ իրավունքը»
- ✦ «Ես կարող եմ»
- ❖ ԳՈՒՄ ՍՊԸ-ի ԿՈՂՄԻՑ 2012-2013ԹԹ ՏՐԱՄԱՂԻՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 - ✦ Կրթական ոլորտի դասընթացներ ու խորհրդատվություններ
 - ✦ Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) ուղղված ծառայություններ
 - ✦ Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ ու խորհրդատվություններ
 - ✦ «Կամք+» թերթի տպագրություն
 - ✦ Համակարգչային ծառայություններ
- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի 2012-2013ԹԹ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- ❖ ԳՈՒՄ ՍՊԸ-ի 2012-2013թթ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
- ❖ ԳՈՒՄ ՀԿ/ՍՊԸ 2012-2013թթ ՀԱՋՈՂԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 - ✦ «Արդյունքում ունեցանք գիտակից ընտրողներ»
 - ✦ «Համատեղ քայլերը կտան շոշափելի արդյունքներ»
 - ✦ «Նպաստենք աղքատության նվազեցմանը՝ աջակցելով ամեն անգամ մեկ ընտանիքի»
 - ✦ «Համատեղ ջանքերը մեկ նպատակի համար»
 - ✦ «Ի ուրախություն Գոմք համայնքի բնակիչների և մանուկների»
 - ✦ «Սպորտը՝ առողջ ապրելակերպի գրավական»
 - ✦ «Անկեղծ ու հաճելի գնահատական»
 - ✦ «Թե ուզում ես երգի լսեն, ժամանակի շունչը դարձիր»
- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի ԽՈՐՀՈՒՐԴ
- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի 2012-2013թթ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ
- ❖ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ
- ❖ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
 - ✦ Կրթական նախաձեռնությունների նկարների քրոնիկա
 - ✦ Համայնքային զարգացման ոլորտի նախաձեռնությունների նկարների քրոնիկա
 - ✦ Քաղաքացիական հասարակության և ՏԻՄ կարողությունների զարգացման ոլորտի նախաձեռնությունների նկարների քրոնիկա

❖ ԳՈՒՄ ՀԿ-ի ԴԵԿԱԿԱՐԻ ԽՈՍՔԸ

Հարգելի ընթերցող,

Ինձ համար հասարակական կազմակերպության գործունեության հաջողության գրավականներից մեկն էլ իր շահառուներին, դոնորներին, գործընկերներին ու համախոհներին հաշվետու լինելու նախապայմանն է:

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն իր 14-ամյա գործունեության ընթացքում որդեգրել է այդ գաղափարը և իր գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ձեզ է ներկայացնում արդեն ավանդական դարձած տարեկան ամփոփ հաշվետվությունների տեսքով: ՀԿ-ն արդեն տպագրել է իր 2007թ., 2005-2008թթ., 2009-2011թթ. գործունեության հաշվետվությունները:

ԳՈՒՄ ՀԿ-ի 2012-2013թթ գործունեության հաշվետվությունը նպատակ ունի ներկայացնելու նշյալ ժամանակահատվածում կազմակերպության իրականացրած աշխատանքը, շահառուներին և նրանց կյանքում կատարված փոփոխությունները, ձեռքբերումները հետագա գործունեության ընթացքում որպես այցեքարտ օգտագործելու համար:

2012-2013թթ ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն ընդլայնել է իր գործունեության շրջանակը՝ իրականացնելով նախաձեռնություններ՝ ուղղված կրթական ոլորտի հիմնախնդիրների լուծմանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, Տեղական ինքնակառավարման մարմինների /ՏԻՄ/ կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հանդես եկել համայնքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնություններով:

Հաշվետվությունը ներառում է նաև ԳՈՒՄ ՍՊԸ-ի կողմից 2012-2013թթ ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ի նպատակային խմբերին մատուցված ծառայություններն ու խորհրդատվությունները:

Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը կարող եք գտնել ԳՈՒՄ ՀԿ-ի վեբ կայքում՝ www.gumiso.am:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում հասարակայնության հետ կապերի տարբեր միջոցներով միշտ հետադարձ կապ է հաստատել իր շահառուների, համախոհների և գործընկերների հետ՝ փորձելով նրանց արձագանքն ու առաջարկությունները դարձնել հետագա աշխատանքի ուղենիշ:

Առիթն օգտագործելով՝ ես ևս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր դոնոր, գործընկեր, համագործակից կազմակերպություններին, համախոհներին, բոլոր նրանց, ովքեր աջակցել են մեզ մեր գործունեության ընթացքում իրականացվող բազում նախաձեռնությունները հաջողությամբ կյանքի կոչելու գործում:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր շահառուներին, ովքեր հավաստացել ու վստահել են մեզ՝ որպես իրենց խնդիրների լուծմամբ շահագրգիռ ու մտահոգ կազմակերպություն:

Արտաշես Տոռոզյան, ԳՈՒՄ ՀԿ-ի գործադիր տնօրեն

❖ ՄԵՐ ՄԱՍԻՆ

«Գործընկերություն և ուսուցում» (ԳՈՒՄ) ՀԿ-ն 2000 թվականին հիմնադրված տեղական շահույթ չհետապնդող կազմակերպություն է հետևյալ առաքելությանը՝ կրթություն և համագործակցություն հանուն քաղաքացիական հասարակության զարգացման:

ԳՈՒՄ ՀԿ-ն աջակցում է Հայաստանում քաղաքացիական հասարակության առաջընթացին՝ նպաստելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների(ՔՀԿ), կրթական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների/ՏԻՄ/ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործընթացներին:

ԳՈՒՄ ՀԿ-ն Հայաստանում հայտնի է որպես ծառայություն մատուցող առաջատար կազմակերպություն: ԳՈՒՄ ՀԿ-ն ծառայություններ է մատուցում 2003թ. իր հիմնադրած ԳՈՒՄ ՍՊԸ-ի միջոցով: ՀԿ-ն իր գործունեության ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր և մատուցել ծառայություններ՝ ուղղված կրթական /կառավարում, ուսուցման նոր մեթոդներ, մասնագիտական.../ և համայնքային ոլորտների հիմնախնդիրների լուծմանը, համայնքների զարգացման ռազմավարությունների մշակմանը, ինչպես նաև հանդես եկել հասարակության տարբեր խմբերի շահերի պաշտպանության նախաձեռնություններով:

2009թ. «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն հավաստագրվել է ՔԻ-ի կազմակերպության կողմից, որը գնահատել է իր գործընկեր կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացման համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Գնահատումն իրականացվել է Հայաստանում ԱՄՆ ՄԶԳ և ՔԻ-ի մասնագետների կողմից՝ ըստ վեց հիմնական ոլորտների, որոնք ներառում են՝ կազմակերպության կառավարում և ղեկավարում, ֆինանսական կայունություն, արտաքին կապեր, ծառայությունների մատուցում և որակի վերահսկում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, ֆինանսական կառավարում և դրամաշնորհների ղեկավարում:

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն հավաստագրում ստացավ՝ ևս մեկ անգամ հաստատելով իր համբավը որպես միջազգային չափանիշներով աշխատող հուսալի և առաջատար կազմակերպություն:

2012թ-ից սկսած ԳՈՒՄ ՀԿ-ն ընդլայնել է իր գործունեության ոլորտը

ԳՈՒՄ ՀԿ-ն ներկայումս Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստան կազմակերպության կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության» ծրագրի շրջանակներում՝ որպես գործընկեր կազմակերպություն, բովանդակային և ադմինիստրատիվ աջակցություն է ցուցաբերում Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի ծրագրի շահառու 16 համայնքում իրականացվող աշխատանքներին: Ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ՀԿ-ն աջակցում է շահառու համայնքներում քաղաքացիական նախաձեռնությունների և համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը՝ ապահովելով սերտ համագործակցություն համայնքային աշխատանքային խմբերի, հասարակական կազմակերպությունների, ՏԻՄ-երի ու մասնավոր հատվածի միջև: ԳՈՒՄ ՀԿ-ն նպաստում է նշյալ համայնքներում երիտասարդական խմբերի ձևավորմանն ու զարգացմանը՝ խթանելով նրանց մասնակցությունը համայնքային մշակութային խնդիրների վերհանման և լուծման գործընթացներում:

Իր գործունեության աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով 2013թ ԳՈՒՄ ՀԿ-ն գրասենյակ բացեց նաև Երևան քաղաքում և աշխատակազմը համալրեց նոր աշխատողներով ու կամավորներով:

Մեր առաքելությունը

Կրթություն և համագործակցություն՝ հանուն քաղաքացիական հասարակության

Մեր տեսլականը

Լավ մարդիկ են մատուցում որակյալ ծառայություններ թիրախներին

Մեր կարգախոսը

Համագործակցենք այսօր վաղվա համար

Մեր արժեքները

Թափանցիկություն և հաշվետվողականություն

- ✦ *Հստակ հաղորդակցություն*
- ✦ *Պատասխանատվությունների և իրավունքների հստակություն*
- ✦ *Որակյալ ծառայություններ*
- ✦ *Համագործակցություն*
- ✦ *Մեծ և փոքր աշխատանքների չտարբերակում*
- ✦ *Ոչ ֆորմալ կրթության կարևորում*

Մեր նպատակները

- ✦ *Նպաստել ժողովրդավարական, իրավական և բարեկեցիկ պետության կայացմանը*
- ✦ *Աջակցել քաղաքացիական հասարակության կայացմանն ու զարգացմանը*
- ✦ *Աջակցել հանրային քաղաքականության ոլորտում փոփոխություններ կատարելու գործընթացների իրականացմանը*
- ✦ *Նպաստել հանրապետության կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներին*
- ✦ *Նպաստել կրթական համակարգի կառավարման ժողովրդավարացմանը*
- ✦ *Նպաստել համայնքային զարգացման գործընթացներին*

❖ ՄԵՐ ԴՈՆՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

ԳՈՒՄ ՀԿ-ն 2012-2013թթ իր նախաձեռնություններն իրականացրել է ներքոնշյալ կազմակերպությունների ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ
«Կրթական ծրագրերի կենտրոն»/ԾԻԳ	<ul style="list-style-type: none"> • Կրթական բարեփոխումներ «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում»
«ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի» հայաստանյան գրասենյակ	Կրթական բարեփոխումներ. «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի մշակում ԴԿՏՀ և ներդրում ՀՀ հանրակրթական դպրոցներում»
«Վորլդ Վիժն Հայաստան»	Կրթական բարեփոխումներ. <ul style="list-style-type: none"> • «Ուսուցիչների և դեռահասների ներուժի զարգացման միջոցառումների իրականացում» • «Համայնքային մոբիլիզացման միջոցառումների կազմակերպում և իրականացում Տավուշի և Մեղրիի 26 համայնքներում» • «Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացում՝ ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության» • «Բարելավված հանրային ծառայություններ» • «Շահագրգիռ կողմերը միասին համուժ հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի հզորացման»
«Քաունթերփաթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն	Համայնքային զարգացում. <ul style="list-style-type: none"> • «Տրամադրել ադմինիստրատիվ աջակցություն համայնքային և քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված գործողությունների իրականացմանը Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում» • «Համտես-փառատոնի ադմինիստրատիվ աջակցություն» • «Ակտիվ քաղաքացիներ-զարգացած համայնք» • «Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն» • «ՏԻՄ կարողությունների զարգացում» • «Ակտիվ քաղաքացիներ-զարգացած համայնք 2» • «Առողջության պահպանման իմ իրավունքը» • «ՏԻՄ-երի համար վերապատրաստման դասընթացների իրականացում»

	<ul style="list-style-type: none"> • «ՏԻՄ-երի համար վերապատրաստման դասընթացների իրականացում 2»
«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն	<p>Համայնքային զարգացում</p> <p>«Ես կարող եմ»</p>
«Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ	<p>Կրթական բարեփոխումներ</p> <p>«Պաշտպանված լինելու իմ իրավունքը»</p>

• **2012-2013թթ իր գործունեության ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն համագործակցել է ներքոնշյալ կազմակերպությունների ու կառույցների հետ**

- ❖ «Քաունթերփարթ ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն
- ❖ «Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ»
- ❖ «ՀԿ կենտրոն»
- ❖ «Վորլդ Վիժն Սիսիանի» ՏԶԾ
- ❖ «Վորլդ Վիժն Կապանի» ՏԶԾ
- ❖ «Վորլդ Վիժն Երևանի» ՏԶԾ
- ❖ «Վորլդ Վիժն Ապարանի» ՏԶԾ
- ❖ «Վորլդ Վիժն Տավուշի» ՏԶԾ
- ❖ «Վորլդ Վիժն Ստեփանավանի» ՏԶԾ
- ❖ ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ»
- ❖ ՀՀ ԿԳՆ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»
- ❖ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
- ❖ «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն
- ❖ «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ
- ❖ Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ
- ❖ «Գորիսի սերունդ» ՀԿ
- ❖ «Էկո – Սիս» ՀԿ
- ❖ «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
- ❖ «Իրավունքների տեղեկատվական կենտրոն»/ԻՏԵԿ ՀԿ
- ❖ «Ասպարեզ»ՀԿ
- ❖ «Բարի երթ» ՀԿ
- ❖ «Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ
- ❖ «Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն» ՀԿ
- ❖ «Սյունիքի երիտասարդ բժիշկներ» ՀԿ
- ❖ «Սոսե» կանանց հիմնահարցեր ՀԿ
- ❖ «Գորիսի նոր սերունդ» ՀԿ
- ❖ «Սալվարդ» գյուղական զարգացման հիմնադրամ
- ❖ «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
- ❖ «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
- ❖ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
- ❖ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ

2012-2013թթ ԳՈՒՄ ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

📌 Հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում

Պայմանագրի համարը	18/12/TT
Դոնոր կազմակերպությունը	«Կրթական ծրագրերի կենտրոն»/ԾԻԳ
Ծրագրի իրականացման վայրը	Վայոց Ձորի մարզ
Ծրագրի տևողությունը	2012թ. հունիս - 2012թ. օգոստոս
Դրամաշնորհի չափը	1. 710.112 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Իրականացնել Վայոց Ձորի մարզի 29 համայնքի մաթեմատիկայի ուսուցիչների և դասվարների վերապատրաստման դասընթացներ:

Ծրագրի շահառուներ

Վայոց Ձորի մարզի 29 համայնքի մաթեմատիկայի ուսուցիչներ և դասվարներ

Արդյունքներ

2012թ. ԳՈՒՄ ՀԿ-ն Վայոց Ձորի մարզի 29 համայնքի մաթեմատիկայի ուսուցիչների և դասվարների համար իրականացրել է վերապատրաստման դասընթացներ:

ԳՈՒՄ ՀԿ-ն նախապես պայմանավորվածություն է ձեռք բերել Վայոց Ձորի մարզպետարանի կրթության վարչության և ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոնի Վայոց Ձորի մարզի ուսուցիչների վերապատրաստման գծով մարզային խորհրդատուի հետ վերապատրաստման մասնակիցների ցանկերի ճշտման, վերապատրաստման գրաֆիկի և այլ կազմակերպչական աշխատանքների համար:

ԳՈՒՄ ՀԿ-ն երկկողմ պայմանագրեր է կնքել Վայոց Ձորի մարզի թիրախ 30 դպրոցների հետ՝ դասվարների և մաթեմատիկայի ուսուցիչների վերապատրաստման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Վերապատրաստման դասընթացներն իրականացվել է ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից հաստատված տիպային թեմատիկ պլան-ծրագրի և վերապատրաստման մոդուլի հիման վրա:

Դասընթացներն իրականացվել են ՀՀ Վայոց Ձորի մարզի եղեգնաձոր քաղաքի թիվ 1 դպրոցում: Վերապատրաստվել են 23 դասվար, 21 մաթեմատիկայի ուսուցիչ:

Դասընթացներին մասնակցել են շահառու համայնքների՝ Կարմրաշեն, Արենի, Գնդևազ, Ջեղեա, Բարձրունի, Գոմք, Թառաթունք, Ջերմուկ, Ագարակաձոր, Քարազուլխ, Շատին, Ագատեկ, Ռինդ, Մարտիրոս, Արտավան, Գլաձոր համայնքների միջնակարգ դպրոցների մաթեմատիկայի ուսուցիչներ և դասվարներ/ թվով 44/:

Դասընթացները վարել են փորձառու դասընթացավարներ Սևադա Խոջաբաղյանն ու Նունիկ Ասրյանը: Դասընթացներն իրականացվել են համագործակցային և ինտերակտիվ ուսուցման մեթոդաբանությամբ՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ:

📌 Երեխայակենտրոն դպրոց. Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ (SMIS)

Պայմանագրի համարը	PCA/ARMA/ 2011/06
Դոնոր կազմակերպությունը	«ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի» հայաստանյան գրասենյակ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ ողջ տարածք
Ծրագրի տևողությունը	Օգոստոս 2011-օգոստոս 2012
Դրամաշնորհի չափը	24 96 370 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

- Մշակել դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ /ԴԿՏՀ/ ու փորձարկել Գորիսի և Սիսիանի 6 հանրակրթական դպրոցներում: Աջակցել փորձարարական դպրոցներին՝ ԴԿՏՀ համակարգի կիրառման գործընթացներում:
- Մշակել համակարգի կիրառման ուղեցույց-ընթացակարգ, ներկայացնել ՀՀ ԿԳՆ՝ ապահովելով համակարգի ընդունումն ու կիրառումը ՀՀ հանրակրթական դպրոցներում:

Համագործակից կազմակերպություններ

- ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
- ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ
- ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
- «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն
- Երևանի քաղաքապետարան
- «Սի Էյջ Էս Վերիսել Սերվիս» ՍՊԸ

Ծրագրի շահառուները

ՀՀ հանրակրթական դպրոցների աշակերտներ, ուսուցիչներ և ծնողներ

Աղյուսակներ

«ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի» հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ԳՈՒՄ ՀԿ-ն 2012թ. շարունակել է իրականացնել «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ»/ԴԿՏՀ ծրագիրը:

Հարկ է նշել, որ ծրագիրն իրականացվել է երեք փուլով. ծրագրի առաջին փուլը իրականացվել էր 2009-2010թթ, երկրորդ փուլը՝ 2010-2011թթ: Ծրագրի իրականացման առաջին երկու փուլի աշխատանքներն ամփոփված են ԳՈՒՄ ՀԿ-ի 2009-2011թթ գործունեության հաշվետվության մեջ:

2012թ. ծրագրի շրջանակներում ԴԿՏՀ ներդրման և շահագործման գործընթացների արդյունավետ կազմակերպման նպատակով մշակվել են համապատասխան պաշտոնական փաստաթղթեր: ԳՈՒՄ ՀԿ-ն ձեռք է բերել ՀՀ ԿԳՆ և Երևանի քաղաքապետարանի դրական դիրքորոշումը, ստացել նրանց աջակցությունը ծրագրի ներդրման գործընթացներում: Ձևավորվել է փորձագիտական խումբ, որի կողմից մշակվել է ԴԿՏՀ շահագործման ուղեցույց:

2011-2012թթ ուստարվա ընթացում իրականացվել են այցելություններ դպրոցներ, գործել է թե՛ գծի 2 հեռախոսահամար, էլ. փոսի հասցե, որոնց միջոցով մասնագետները պատասխանել են դպրոցների կողմից առաջադրված բոլոր հարցերին, աջակցել տվյալների մուտքագրման աշխատանքներին:

2012թ. մայիսի 14-ին ՀՀ ԿԳՆ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»/ԿՏԱԿ ՊՈԱԿ-ի և ԳՈՒՄ ՀԿ-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի համաձայն ԴԿՏՀ-ի տեխնիկական շահագործումը՝ տվյալների շտեմարան, օգտագործման ձեռնարկ և ծրագրային կոդ, փոխանցվել է ԿՏԱԿ-ին: Հավաքագրվել են ԴԿՏՀ շահագործման հետ կապված խնդիրները և դրանց լուծման առաջարկությունները, որոնք ևս տրամադրվել են ԿՏԱԿ-ին:

Համակարգն այժմ գտնվում է պետական հոգաժողության շրջանակներում, որը կապահովի համակարգի կիրառման կայունությունը ՀՀ հանրակրթական դպրոցներում:

Հարկ է նշել, որ 2012թ. ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից տպագրվել է «Կամք+» թերթի հատուկ համար՝ նվիրված ԴԿՏՀ-ի ներդրման և կիրառման գործընթացների լուսաբանմանը: Թերթի հատուկ համարի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ այս հղումով՝ <http://www.gumiso.am/uploads/20131701112222132.pdf>:

«Ուսուցիչների և դեռահասների ներուժի զարգացման միջոցառումների իրականացում»

Պայմանագրի համարը	WVA/NOOPS/TR/12/001
Դոնոր կազմակերպությունը	«Վորլդ Վիժն Հայաստան»
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզեր

Ծրագրի տևողությունը	2012թ. հունվար- մայիս
Դրամաշնորհի չափը	4.846.400 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

- Կազմակերպել «Դեռահասների առողջություն», «Առողջ ապրելակերպ» թեմաներով կարողությունների զարգացման միջոցառումներ ուսուցիչների և դեռահասների շրջանում:
- Կազմակերպել հավասարը՝ հավասարին ուսուցում Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների 23, Իջևանի և Բերդի 20, Ալավերդու 10 և Մեղրիի 6 համայնքում:

Ծրագրի շահառուներ

Սյունիքի մարզի Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների 23, Մեղրիի 6, Տավուշի մարզի Իջևանի, Բերդի և Նոյեմբերյանի տարածաշրջանների 20, Լոռու մարզի Ալավերդու 10 հանրակրթական դպրոցների 59 ուսուցիչ և 700 դեռահաս:

Արդյունքներ

Ծրագրի իրականացման փուլում Սիսիանի և Գորիսի 23, Իջևանի, Բերդի, Նոյեմբերյանի 20, Ալավերդու 10 և Մեղրիի 6 համայնքների հանրակրթական դպրոցների առողջ ապրելակերպ դասավանդող ուսուցիչների շրջանում իրականացվել են «Առողջ ապրելակերպ առարկայի դասավանդման ներկա իրավիճակը և հեռանկարները» թեմայով աշխատանքային հանդիպումներ:

Հարկ է նշել, որ հանդիպումները վարել են ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից նախապես ընտրված մասնագետները՝ մարզպետարանի կրթության բաժնի և Կրթության ազգային ինստիտուտի/ԿԱԻ դասընթացավարները:

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել է 59 դասընթաց Սիսիանի և Գորիսի 23, Իջևանի, Բերդի, Նոյեմբերյանի 20, Ալավերդու 10 և Մեղրիի 6 համայնքներում:

Ծրագրի ընթացքում թիրախ համայնքների համար հայտարարվել է «Առողջ ապրելակերպ» թեմայով մրցույթ և ընտրված 16 համայնքում դեռահասների, նրանց ծնողների, ուսուցիչների, համայնքային բուժքույրերի մասնակցությամբ կազմակերպվել են «Առողջ ապրելակերպ» թեմայով համայնքային քարոզարշավներ: Համայնքային քարոզարշավներից հետո կազմակերպվել է 2 մեծ միջհամայնքային միջոցառում՝ նպատակ ունենալով ամփոփել Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերի տարածաշրջանների թիրախ գյուղական համայնքներում իրականացրած աշխատանքները: Առաջին միջոցառումն իրականացվել է Իջևան քաղաքում Տավուշի մարզի ծրագրի շահառու 20, երկրորդը՝ Գորիսում՝ Սյունիքի մարզի 23 համայնքների համար: ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից նախապես կազմվել են միջոցառումների սցենարները, որտեղ մեծ մասնակցություն են ունեցել տարբեր համայնքների հավասարը՝ հավասարին կրթողները: Միջոցառումները ներառում էին համայնքային քարոզարշավների մասին տեսաֆիլմերի, ֆոտոստեճիկների ցուցադրություններ և ինտելեկտուալ խաղ-մրցույթներ համայնքային հավաքականների միջև: Լավագույն ակտիվություն ցուցաբերած մասնակիցներին տրվել են պատվոգրեր և մրցանակներ:

Ծրագրի արդյունքում թիրախ մարզերի համայնքներում իրականացված նախաձեռնություններից պատրաստվել է տեսաֆիլմ, որը ցուցադրվել է մարզային հեռուստատեսությամբ և տարածվել համացանցով: Ծրագրի ավարտից հետո շահառու համայնքները շարունակել են իրականացնել համայնքային քարոզարշավներ՝ մոբիլիզացնելով համայնքի բնակիչներին:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ

 Համայնքային զարգացման և քաղաքացիական հասարակության աջակցության ծրագրերի ադմինիստրատիվ աջակցություն

Պայմանագրի համարը	ARM-C1-PS-RC-S-2013-03
Դոնոր կազմակերպությունը	«Քառուսթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր
Ծրագրի տևողությունը	2012թ. հոկտեմբեր – 2014-հունիս

Դրամաշնորհի չափը	25.091.612 ՀՀ դրամ 9.310.410 ՀՀ դրամ 9.794.689 ՀՀ դրամ 19.997.498 ՀՀ դրամ 17.760.711 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	851.400 ՀՀ դրամ 762.600 ՀՀ դրամ 762.600 ՀՀ դրամ 767.768 ՀՀ դրամ 741.652 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բարձրացնել հանրության տեղեկացվածությունը և արդյունավետ քաղաքացիական մասնակցությունը տեղական և ազգային մակարդակներում, ինչպես նաև նպաստել ավելի մասնակցային, ապակենտրոնացված, արդյունավետ արձագանքող տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորմանը, որը կօժանդակի Հայաստանում ընթացող ժողովրդավարացման գործընթացին:

Ծրագրի շահառուներ

Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի 16 համայնք/Սիսիան, Մեղրի, Կապան, Արծվանիկ, Սպանդարյան, Աշոտական, Խնձորեսկ, Շինուհայր, Հալիձոր, Քարահունջ, Վայք, Գոմք, Գետափ, Բարձրունի, Հերիեր, Արենի/:

Արդյունքներ

Քաունթերփաթեթ ինթերնեշնլի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության» ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ՀԿ-ի համայնքային զարգացման թիմը համակարգել է Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի շահառու 16 համայնքում իրականացվող համայնքային զարգացման գործընթացները: ԳՈՒՄ ՀԿ-ն Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի ծրագրի շահառու համայնքներին տրամադրել է նյութատեխնիկական և ադմինիստրատիվ աջակցություն համայնքային զարգացմանն ուղղված գործողությունների իրականացման նպատակով:

Ծրագրի շրջանակներում շահառու համայնքներում ձևավորվել են Համայնքային ակտիվ խմբեր/ՀԱԽ և Համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակունքներ/ՅԵՆԱ-ներ, որոնց օգնությամբ շահառու համայնքները ներկայացել են համայնքային ժողովների ընթացքում վերհանված և համայնքի բնակիչների կողմից առաջնահերթ ճանաչված խնդիրների հիման վրա պատրաստված ծրագիր-առաջարկներ:

Դրանոր կազմակերպությունը քաղաքային համայնքների կողմից ներկայացված ծրագրերը (ՏԻՄ խրախուսման ծրագրեր) ֆինանսավորել է առավելագույնը 6.2 մլն. դրամի չափով, իսկ ՏԻՄ-երի ներդրումները կազմել են հայցվող գումարի 40% -ը:

Գյուղական համայնքներում իրականացվել են երկու տեսակի ծրագիր` Համայնքային զարգացման և քաղաքացիական նախաձեռնությունների դրամաշնորհային ծրագիր (դրճորի ներդրում 1.7 մլն. դրամ, ՏԻՄ ներդրում 20%-ից ոչ պակաս) և ՏԻՄ խրախուսման ծրագիր(դրճորի ներդրում 3.5 մլն. դրամ, ՏԻՄ ներդրում 40% -ից ոչ պակաս):

Ծրագրերի իրականացման այսպիսի մասնակցային, համատեղ մոտեցումները հիմք հանդիսացան, որպեսզի իրականացված և դեռ իրականացվելիք համայնքային բոլոր ծրագրերը մեկնարկեն և ավարտվեն բարեհաջող:

Ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ՀԿ-ն աջակցում է շահառու համայնքներում քաղաքացիական նախաձեռնությունների և համայնքային զարգացման ծրագրերի նախագծմանը` ապահովելով սերտ համագործակցություն համայնքային աշխատանքային խմբերի, հասարակական կազմակերպությունների, ՏԻՄ-երի ու մասնավոր հատվածի միջև:

2012-2013թթ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում շահառու համայնքներին տրամադրվել են համայնքային զարգացման և քաղաքացիական նախաձեռնությունների ու ՏԻՄ խրախուսման դրամաշնորհներ, որոնց շրջանակներում համայնքները հանդես են եկել համայնքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնություններով: Այս ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ի «Կանք+» թերթը հետևողականորեն լուսաբանել է ծրագրի շրջանակներում ՀԱԽ-երի և ՀԵՆԱ-ների նախաձեռնությունները: Ստորև ներկայացվում են 2012-2013թթ ՀԱԽ-ի և ՀԵՆԱ-ի կողմից իրականացված նախաձեռնությունները:

2012-2013թթ ՀԱԽ-երի կողմից իրականացված նախաձեռնություններ

Ենթածրագիր 1.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-01
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Ծրագրի տևողությունը	2012թ. փետրվար –մայիս
Ծրագրի անվանումը	«Համայնքային նախաձեռնություններ ժամանակակից տեխնոլոգիաներով»
Դրամաշնորհի չափը	1 700 000 մլն ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	425 000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 125 000 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Ակտիվացնել քաղաքացիական մասնակցությունը համայնքային նախաձեռնությունների կազմակերպման և իրականացման գործընթացում, բարելավել համայնքի հասարակական և մշակութային կյանքը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Արծվանիկ համայնքի Համայնքային ակտիվ խումբը/ՀԱԽ սույն դրամաշնորհն նպատակաուղղել էր համայնքային դահլիճի համար ծայնային տեխնիկայի և գույքի ձեռքբերմանն ու կահավորմանը/ուժեղաձայնիչ, աթոռներ, ծայնակարգավորիչ, դինամիկներ, բարձրախոսներ, բեմի վարագույր և այլն/:</p> <p>Համայնքն այժմ ունի ծայնային տեխնիկայով ապահովված համայնքային դահլիճ, որտեղ անց են կացվում տարբեր մշակութային միջոցառումներ: Մեծացել է համայնքի բնակիչների մոտիվացիան և մասնակցությունը հասարակական նախաձեռնությունների կազմակերպման գործընթացում:</p>	

Ենթածրագիր 2.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Բարձրունի
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-02
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Բարձրունի
Ծրագրի տևողությունը	2012թ. մարտ –հունիս
Ծրագրի անվանումը	«Երիտասարդական կենտրոն սահմանամերձ գյուղում»
Դրամաշնորհի չափը	1 699 170 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	687 200 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 386 370 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բարձրունի գյուղի երիտասարդների համար ստեղծել հասարակական գործունեության և ժամանցի հնարավորություններ:

Ամփոփ նկարագրություն

Բարձրունի համայնքում համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում վերանորոգվեց գյուղապետարանի երկրորդ հարկում գտնվող բավականաչափ ընդարձակ մի սենյակ՝ որպես երիտասարդական կենտրոն, որը կահավորվեց նաև թեմիսի դաշտով և հեռուստացույցով: Կենտրոնում այժմ հաճախակի են կազմակերպվում երիտասարդական ցերեկույթներ, տարբեր թեմաներով նկարների, պաստառների ցուցադրություններ: Սահմանամերձ այս գյուղում երիտասարդական կյանքն աննկարագրելի աշխուժություն է ստացել:

Ենթածրագիր 3.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-03
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ
Ծրագրի տևողությունը	2012թ. փետրվար-հունիս
Ծրագրի անվանումը	«Տարեցների ակումբ Գետափ համայնքում»
Դրամաշնորհի չափը	1 699 400 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	698 960 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 398360 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Համայնքի տարեցների համար ստեղծել ժամանցային ակումբ:

Ամփոփ նկարագրություն

Համայնքի ակտիվ խումբը/ՀԱԽ որոշեց համայնքային կենտրոնի առաջին հարկում գտնվող քանդված ու չօգտագործվող տարածքը վերանորոգել ու տրամադրել տարեցներին՝ որպես ակումբ: Այս աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին նաև ծրագրի շահառուները՝ համայնքի տարեցները: Այժմ նրանք ունեն տաք ու հարմարավետ սենյակ, որտեղ անց են կացնում իրենց առօրյան: Տարեցների ակումբում երիտասարդների նախաձեռնությամբ կազմակերպվում են մեծարժան երեկոներ, տարբեր թեմաներով միջոցառումներ:

Ենթածրագիր 4

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-04
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
Ծրագրի տևողությունը	2012թ. փետրվար-հունիս
Ծրագրի անվանումը	«Համագործակցությամբ նախակրթության բարելավում»
Դրամաշնորհի չափը	1 699 842 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	546 660 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 246 502 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Նպաստել Աշոտավան համայնքի 2-5 տարեկան երեխաների նախակրթական գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը՝ բարելավելով նախակրթարանի պայմանները:

Ամփոփ նկարագրություն

Համայնքային նախաձեռնության իրականացման արդյունքում բարեկարգվել են համայնքի նախակրթարանի խաղահրապարակը, գույքային և սենյակային պայմանները:

Նախակրթարանում ձևավորվել է ծնողական խորհուրդ, իրականացվել են քննարկումներ նախակրթարանի հիմնախնդիրների ուղղությամբ, կազմակերպվել է սպորտլանդիա նախակրթարանի սաների մասնակցությամբ:

Ենթաձրագիր 5.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գոմք
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-05
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գոմք
Ծրագրի տևողությունը	2012թ. ապրիլ-հուլիս
Ծրագրի անվանումը	«Մանկապարտեզ բաց երկնքի տակ»
Դրամաշնորհի չափը	1 700 000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	626 000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 326 000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Գոմք համայնքի երեխաների համար ստեղծել երջանիկ մանկության միջավայր՝ ապահովելով խաղալու և զարգանալու համար անհրաժեշտ պայմաններ:

Ամփոփ նկարագրություն

Համայնքային ակտիվ խմբի/ՀԱԽ նախաձեռնությունը պսակվեց մեծ հաջողությամբ, այժմ համայնքն ունի բարեկարգված, ցանկապատված, գեղեցիկ ծաղիկներով ու ծառերով շրջապատված խաղահրապարակ, որտեղ տեղադրված են մաև կառուսելներ և ճոճանակ: Մանկական խաղահրապարակի բարեկարգման աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունեցել մաև երեխաները՝ դույլերով տեղափոխելով ավազը, ներկելով ցանկապատները, տարածքն ազատելով փշերից:

Ենթաձրագիր 6.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Հալիձոր
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-06
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Հալիձոր
Ծրագրի տևողությունը	2012թ. հունվար-ապրիլ
Ծրագրի անվանումը	«Աղբահանության կայուն մեխանիզմի ներդրում Հալիձոր համայնքում»
Դրամաշնորհի չափը	1 690 000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	430 570 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 120 570 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Նպաստել Հալիծոր համայնքում աղբահանության կայուն մեխանիզմի ներդրմանը:

Ամփոփ նկարագրություն

Ծրագրի իրականացման արդյունքում Հալիծոր համայնքի կենտրոնական մասերում և փողոցների խաչմերուկներում տեղադրվել են աղբարկղեր և համայնքի մաքրության պահպանմանն ուղղված կոչերով ցուցանակներ: Համայնքաբնակներից և դպրոցականներից կամավորության սկզբունքով ձևավորվել են ակտիվ խմբեր, որոնք ողջ ընթացքում ակտիվ մասնակցություն են ունեցել կատարվող աշխատանքներին և ապահովել համայնքի բնակիչների իրագրությունը իրականացվող գործողությունների վերաբերյալ: Այժմ համայնքում գործում է աղբահանության կայուն մեխանիզմ, որի շնորհիվ Հալիծորն ավելի ակնհայտ և հյուրընկալ է դարձել դեպի Տաթևեր ճոպանուղի շտապող բազմաթիվ զբոսաշրջիկների համար: Համայնքում տեղադրված աղբամանների տեղափոխման և դատարկման աշխատանքները կարգավորվում է ՏԻՄ-ի կողմից:

Ենթաճրագիր 7.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Քարահունջ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-08
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Քարահունջ
Ծրագրի տևողությունը	2012թ. հունվար-մայիս
Ծրագրի անվանումը	«Քարահունջ համայնքի երիտասարդական կենտրոնի վերանորոգում»
Դրամաշնորհի չափը	1 680 794 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	937 137 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 617 931 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Քարահունջ համայնքի երիտասարդական կենտրոնի վերանորոգման միջոցով նպաստել համայնքի բնակչության համախմբմանն ու մոբիլիզացմանը:

Ամփոփ նկարագրություն

Նախաձեռնության արդյունքում Քարահունջ համայնքում վերանորոգվել և կահավորվել է երիտասարդական կենտրոնը: Կենտրոնը ծառայում է որպես համայնքային հանդիպումների, քննարկումների, քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման վայր: Զգալիորեն բարձրացել է համայնքաբնակ երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը, ինչպես նաև համայնքային հիմնախնդիրները մասնակցային եղանակով բացահայտելու պատրաստակամությունը:

Ենթաճրագիր 8.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-09
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր
Ծրագրի տևողությունը	2012թ. փետրվար-մայիս
Ծրագրի անվանումը	«Ակտիվացնենք համայնքի հասարակական կյանքը»
Դրամաշնորհի չափը	1 696 530 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	815 436 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 511 966 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Համայնքային դահլիճի վերանորոգման միջոցով նպաստել համայնքի բնակիչների համախմբմանն ու մոբիլիզացմանը:

Ամփոփ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում վերանորոգվել է համայնքային դահլիճն ու սանհանգույցը: Համայնքային դահլիճն այժմ հանդիսանում է համայնքային նշանակության հանդիպումների համար նախատեսված լավագույն վայրը: Համայնքաբնակներն այսօր հնարավորություն ունեն մասնակցելու ՏԻՄ-ի նիստերին, կազմակերպվող ժողովներին, միջոցառումներին:

Ենթաձրագիր 9.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-10
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
Ծրագրի տևողությունը	2012թ. փետրվար-մայիս
Ծրագրի անվանումը	«Համայնքային ակտիվություն, բարելավված կյանքի որակ»
Դրամաշնորհի չափը	1 700 000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	734 480 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 434 480 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բարձրացնել համայնքի երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն իրավունքների պաշտպանության և տեղեկատվության ստացման վերաբերյալ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառմամբ, և բարձրացնել համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքային խնդիրների քննարկման, լուծումների մշակման և իրականացման գործում:

Ամփոփ նկարագրություն

Նախաձեռնության իրականացման արդյունքում Սպանդարյան համայնքում ստեղծվել է համակարգչային կենտրոն, ձեռք են բերվել համակարգիչներ, կենտրոնում անց են կացվել համակարգչային դասընթացներ համայնքի անդամների համար: Համայնքի բնակիչներն այժմ հնարավորություն ունեն անվճար օգտվել համակարգչային կենտրոնի ծառայություններից:

Նախաձեռնության շրջանակներում բարելավվել են նաև Սպանդարյան համայնքի հանդիսությունների սրահի գույքային պայմանները:

Ենթաձրագիր 10.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2012-07
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ
Ծրագրի տևողությունը	2012թ. հունվար-ապրիլ
Ծրագրի անվանումը	«Խնձորեսկի կենտրոնական փողոցի լուսավորության ապահովում, մանկական խաղահրապարակի հիմնում»
Դրամաշնորհի չափը	1 643 000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	1 935 400 ՀՀ դրամ
Ներդրում այլ աղբյուրներից	Ջինիշյան հիշատակի հիմնադրամ /1 մլն դրամ/
Ընդհանուր գումարը	4578400 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Խնձորեսկ համայնքի համայնքային ակտիվ խմբի/ՀԱԽ նախաձեռնությունը նպատակաուղղված էր համայնքի կենտրոնական փողոցի լուսավորությանը ու նախակրթարանի մասնակի վերանորոգմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Նախաձեռնության շրջանակներում Ջինիշյանի հիշատակի հիմնադրամի համաֆինանսավորմամբ Խնձորեսկի նախակրթարանում հիմնվել է նաև խաղահրապարակ:</p>	

Ենթաձրագիր 11.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-08
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի
Ծրագրի տևողությունը	2013թ. հունվար- օգոստոս
Ծրագրի անվանումը	«Սպորտային և մշակութային առաջընթաց»
Դրամաշնորհի չափը	2.000.000 մլն ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	560.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.560.000ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Մեղրի համայնքում սպորտային և մշակութային կյանքի ակտիվացմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Մեղրիի Արվեստի մանկական դպրոցը համալրվել է երաժշտական գործիքներով, իսկ Մեղրիի քաղաքային մարզադպրոցը՝ սպորտային պարագաներով: Բարձրացվել է Մեղրի համայնքի անդամների, երիտասարդների մասնակցությունը մշակութային միջոցառումներին:</p>	

Ենթաձրագիր 12.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-14
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-օգոստոս
Ծրագրի անվանումը	«Անդրադարձ մշակութային արձատներին»
Դրամաշնորհի չափը	1 994 600 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	706 200 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2 700 800 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Կապան համայնքի երաժշտական կյանքի ակտիվացմանը՝ բարելավելով Կապանի Ա. Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի նյութատեխնիկական պայմանները:</p> <p>Ամփոփ նկարագրություն Վերազինվել է Կապանի Ա. Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցը. ձեռք են բերվել նոր երաժշտական գործիքներ, դահլիճի համար բեմի վարագույր, ուղեգորգ և երաժշտական գրականություն:</p> <p>Ակտիվացել է երաժշտական կյանքը Կապանում: Ավելացել են երաժշտական միջոցառումները, դրանցում ներգրավված համայնքաբնակների թիվը: Ձարգացել են Կապան համայնքի նախակրթարանների երաժիշտների մասնագիտական կարողությունները:</p>	

Ենթաճրագիր 13.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-01
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-հունիս
Ծրագրի անվանումը	«Համախմբված համայնք, հաշվետու ՏԻՄ»
Դրամաշնորհի չափը	1.950.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	594.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.544.000ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Ակտիվացնել համայնքի բնակչության մասնակցությունը համայնքային խնդիրների լուծման գործընթացներում, Արծվանիկ համայնքում ձևավորել հաշվետու և թափանցիկ աշխատող ՏԻՄ:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ստեղծվել է տեխնիկապես հագեցած, հարմարավետ կենտրոն Արծվանիկ համայնքի ավագանու, ՀԵՆԱ-ների և ՀԱԽ-երի անդամների համար: Բարձրացել է ՏԻՄ-երի, ՀԵՆԱ-ների և ՀԱԽ-երի անդամների աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը: Բարձրացել է Արծվանիկ համայնքի ավագանիների, ՀԵՆԱ-ների և ՀԱԽ-երի անդամների կարողությունները համակարգչային գրագիտություն և բնապահպանական թեմաններով:</p>	

Ենթաճրագիր 14.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Քարահունջ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-06
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Քարահունջ

վայրը	
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-օգոստոս
Ծրագրի անվանումը	«Իմ համայնքը իմ տունն է»
Դրամաշնորհի չափը	2. 000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	521. 800 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.521.800 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Բարելավել Քարահունջ համայնքի աղբահանության պայմանները և նպաստել հարմարավետ համայնքային միջավայրի ստեղծմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ձեռք են բերվել և տեղադրվել աղբամաններ /20 հատ/ և նստարաններ/5 հատ/ Քարահունջ համայնքի թաղամասերում: Բարձրացել է համայնքի բնակիչների, երիտասարդների և երեխաների՝ շրջակա միջավայրի պահպանման և աղբահանության ծառայության վերաբերյալ իրազեկության մակարդակը: Բարձրացել է համայնքում հանրային վերահսկողության մակարդակը և համայնքաբնակների մասնակցությունը համայնքապետարանի կողմից աղբահանության կազմակերպման ծառայության ուղղությամբ:</p>	

Ենթաճրագիր 15.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-07
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-օգոստոս
Ծրագրի անվանումը	«Առաջընթաց քայլ»
Դրամաշնորհի չափը	2.000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	665.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.665.000ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Խթանել Խնձորեսկ համայնքի այլընտրանքային կրթությունը՝ համախմբելով բնակչությանը, կապեր ստեղծելով համայնքի հետ հավանական համագործակցող կազմակերպությունների, ՀԿ-ների միջև, վերանորոգված մշակույթի տանը համայնքային կենտրոնի հիմնման միջոցով:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ստեղծվել է վերանորոգված և կահավորված համայնքային կենտրոն, որը հանդիսանում է հանդիպումների, քննարկումների, միջոցառումների համար նախատեսված հարմարավետ տարածք: Ձևավորվել է աշխատանքային խումբ՝ կենտրոնում տարաբնույթ միջոցառումներ կազմակերպելու իրականացնելու համար: Ակտիվացել է համայնքի մշակութային կյանքը: Ստեղծվել է համագործակցություն համայնքի, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի, կազմակերպությունների միջև:</p>	

Ենթաճրագիր 16.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-10
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր
Ծրագրի տևողությունը	2013թ.ապրիլ-օգոստոս
Ծրագրի անվանումը	«Համախմբված համայնք»
Դրամաշնորհի չափը	1.927.400 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	948.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.875.400ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Շինուհայր համայնքի բնակչության համախմբմանը, մոբիլիզացմանը՝ ակտիվացնելով համայնքի կուլտուր-մշակութային, սպորտային կյանքը, ՏՀՏ օգտագործման ոլորտում բարձրացնելով համայնքի բնակիչների կարողությունները:</p> <p>Ամփոփ նկարագրություն Շինուհայր համայնքում ստեղծվել է հարմարավետ պայմաններով վերանորոգված, կահավորված համայնքային կենտրոն համայնքային տարաբնույթ նախաձեռնություններ իրականացնելու համար: Մշակվել է համայնքի կուլտուր-մշակութային և սպորտային միջոցառումների պլանը: Ծրագրի շրջանակներում ձևավորված երիտասարդ կամավորականների խումբը ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմանը կազմակերպում և իրականացնում է միջոցառումներ ըստ բացահայտված կարիքների:</p>	

Ենթաճրագիր 17.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Հալիձոր
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-13
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Հալիձոր
Ծրագրի տևողությունը	2013թ.ապրիլ-օգոստոս
Ծրագրի անվանումը	«Հալիձորի համայնքային կենտրոնի գործունեության ակտիվացում ի շահ համայնքի համախմբման»
Դրամաշնորհի չափը	1.997.000ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	618.500 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.615.500ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Հալիձոր համայնքի համայնքային կենտրոնի գործունեության ակտիվացմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Հալիձորի համայնքային կենտրոնը ծառայում է որպես հանդիպում-քննարկումների, ուսուցումների, քիզնես կարողությունների բարելավման, երիտասարդական միջոցառումների անցկացման հարմարավետ տարածք: Համայնքն ունի ակտիվ, նախաձեռնող, ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող երիտասարդների խումբ, որը սերտ համագործակցում է ՀԱԽ-ի հետ: Համայնքն ունի շնորհալի, նախաձեռնող, ստեղծագործող, ձեռքի աշխատանքներով և գյուղմթերքի մշակման գործում հմտացած կանանց խումբ: Ակտիվացել է համայնքի մշակութային, երիտասարդական կյանքը:</p>	

Ենթաճրագիր 18.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-11
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը	«Սիսիան քաղաքում սպորտի զարգացում»
Դրամաշնորհի չափը	2.000.000ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	597.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.597.000ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Աջակցել Սիսիան համայնքում առողջ ապրելակերպի և սպորտի զարգացմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Բարելավել է Սիսիանի ՄՊՍԿ-ի սպորտային գույքի հագեցվածությունը: Ստեղծվել է բնակչության ազատ ժամանցի և ակտիվ հանգստի հնարավորություններ: Մշակվել և ներդրվել է բնակիչների սպասարկման և մարզադահլիճի ծառայությունների մատուցման գործուն մեխանիզմ: Բարձրացել է համայնքի բնակչության իրազեկությունը առողջության ամրապնդման և առողջ ապրելակերպի ձևավորման վերաբերյալ: Կազմակերպվել են երտասարդության շրջանում մարզական միջոցառումներ և նրանց շրջանում բարձրացել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը 80 %-ով:</p>	

Ենթաճրագիր 19.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-02
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ- սեպտեմբեր
Ծրագրի անվանումը	«Համայնքի երիտասարդները ակտիվ են համայնքի տարբեր նախաձեռնություններում»
Դրամաշնորհի չափը	2.000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	502.200 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.502.200 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Աշոտավան համայնքում երիտասարդների զբաղվածության և ազատ ժամանցի հնարավորությունների ստեղծմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Աշոտավան համայնքում ստեղծվել է ինտերնետ-համակարգչային կենտրոն և բարձրացել է համայնքի երիտասարդների ինտերնետ-համակարգչային գրագիտությունը: Բարձրացել է երիտասարդների ներգրավվածությունը համայնքային գրադարանի աշխատանքների արդյունավետ կազմակերպման և համայնքային միջոցառումների իրականացման գործում:</p>	

Ենթաճրագիր 20.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
-----------------	----------------------------------

Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-12
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը	«Մշակութային զարգացում»
Դրամաշնորհի չափը	2.000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	500.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.500.000ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Սպանդարյան համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Բարելավել է Սպանդարյան համայնքի ՏԻՄ-ի տեխնիկական միջոցները մշակութային միջոցառումների իրականացման համար, ինչպես նաև բարձրացել է համայնքի երիտասարդների մասնակցությունը համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպման գործում:</p>	

Ենթաձրագիր 21.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-09
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-հուլիս
Ծրագրի անվանումը	«Ապագա մշակութային քաղաք»
Դրամաշնորհի չափը	2.000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	646.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.646.000 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Վայքի մշակութային կյանքի զարգացմանը և դարձնել այն ապագայի մշակութային քաղաք՝ երկու գեղագիտական դաստիարակության կենտրոնների՝ Արվեստի դպրոցի և ՄՍԿ-ի աջակցության միջոցով:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ակտիվացել է մշակութային կյանքը համայնքում. շատացել են մշակութային իրադարձությունները, դրանցում ներգրավված երեխաների և դրանց մասնակցող համայնքի բնակիչների թիվը, ինչպես նաև զարգացել է միջհամայնքային մշակութային կապերը: Ձարգացել են արվեստի դպրոցի և մանկական ստեղծագործական կենտրոնի նյութատեխնիկական կարողությունները. ձեռք են բերվել նոր երաժշտական գործիքներ, իսկ դահլիճը համալրվել է 70 աթոռներով արվեստի դպրոցում, ինչը 120 տեղանոց դահլիճին հնարավորություն կտա գործել ամբողջ հնարավորությամբ, իսկ ՄՍԿ-ի պարի խմբի համար ձեռք են բերվել նոր հագուստներ: Ձարգացել են արվեստի դպրոցի ուսուցիչների և սաների կարողությունները: Իրականացվել է վերաբնակարան դաս արվեստի դպրոցի ուսուցիչների և աշակերտների համար՝ Երևանից և մարզկենտրոնից ժամանած բարձրակարգ մասնագետների կողմից:</p>	

Ենթաձևագիր 22.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գոմք
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-05
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գոմք
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-հուլիս
Ծրագրի անվանումը	«Մշակութային կյանք Գոմք համայնքում»
Դրամաշնորհի չափը	2.000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	522.800 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.522.800 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Ակտիվացնել մշակութային և հանրային կյանքը Գոմք գյուղական համայնքում:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ավելացել են համայնքում մշակութային և հասարակական միջոցառումների թիվը: Ձայնային, լուսային և համակարգչային տեխնիկայի կիրառման շնորհիվ բարձրացել է միջոցառումների որակը, կազմակերպչական մակարդակը: Համայնքային մանկական պարի խումբը մասնակցում է միջհամայնքային և ազգային մակարդակի գեղարվեստական փառատոների:</p>	

Ենթաձևագիր 23.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Բարձրունի
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-03
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Բարձրունի
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-հուլիս
Ծրագրի անվանումը	«Համակարգչային կենտրոն սահմանամերձ գյուղում»
Դրամաշնորհի չափը	2. 000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	500.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.500.000 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել Բարձրունի համայնքի երիտասարդների կարողությունների զարգացմանը և երիտասարդների հասարակական կյանքի ակտիվացմանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Գյուղի առնվազն 30 երիտասարդներ ձեռք են բերել համակարգչային գիտելիքներ, ինչպես նաև գիտելիքներ ինտերնետ ռեսուրսների, սոցիալական ցանցերի և մեդիա-գործիքների, ինտերնետ-տեխնոլոգիաներով շահերի պաշտպանության հնարավորությունների մասին: Զարգացել են համայնքային գրադարանի կարողությունները և ավելացել երիտասարդների կապը գրադարանի հետ: Գյուղի դահլիճը համալրվել է 60 նոր աթոռներով, ինչը հնարավորություն է տալիս ապահովել առավել մեծ մասնակցություն ՀԵՆԱ և ՀԱԽ կողմից կազմակերպվող համայնքային միջոցառումների ժամանակ:</p>	

Ենթաձևագիր 24.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ
Պայմանագրի համարը	ARM-C1-GCD-S-CCBCI-G-2013-04
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-հունիս
Ծրագրի անվանումը	«Գրադարանը՝ համայնքի մտավոր կենտրոն»
Դրամաշնորհի չափը	2.000.000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	766.400 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	2.766.400 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Գետափ գյուղի գրադարանը դարձնել համայնքի մշակութային և մտավոր ժամանակակից կենտրոն՝ մեծացնելով նրա դերակատարությունը համայնքի կայքում:</p> <p>Ամփոփ նկարագրություն Համայնքն ունի պատշաճ վերոնորգված և կահավորված գրադարան համայնքային կենտրոնում: Ձարգացել է գրադարանի նյութատեխնիկական կարողությունները, որը նպաստում է ինչպես գրական ֆոնդի արդյունավետ կառավարմանը, այնպես էլ միջոցառումների հետաքրքիր և որակյալ կազմակերպմանը: Մեծացել է գրադարանի դերը համայնքի մշակութային և հասարակական կյանքում:</p>	

2012-2013թթ ՀԵՆԱ-ների կողմից իրականացված նախաձեռնություններ

Ենթաձրագիր 1.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-02
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Ծրագրի տևողությունը	16.04.12-30.09.12 Փուլ 1 10.07.12-30.05.12 Փուլ 2
Ծրագրի անվանումը	«Համայնքային մոբիլիզացիայի միջոցառումների կազմակերպում» Փուլ 1 «Ես կամավոր եմ» թեմայով պատմամշակութային արշավ Փուլ 2
Դրամաշնորհի չափը	417,350 ՀՀ դրամ Փուլ 1 152500 ՀՀ դրամ Փուլ 2
Համայնքի ներդրումը	325000 ՀՀ դրամ Փուլ 1 90000 ՀՀ դրամ Փուլ 2
Ընդհանուր գումարը	984, 850 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Ակտիվացնել ու խթանել քաղաքացիական մասնակցությունը համայնքային նախաձեռնությունների կազմակերպման և իրականացման գործընթացում, բարելավել համայնքի հասարակական և մշակութային կյանքը, ավելացնել համայնքի կամավորների թիվը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Սույն դրամաշնորհով բարձրացավ համայնքաբնակների մոտիվացիան, մասնակցությունը հասարակական նախաձեռնությունների կազմակերպման գործընթացում, ապահովվեց համայնքային կամավորական նախաձեռնությունների շարունակականությունը, ամրապնդվեց ՏԻՄ-ՀԵՆԱ-ՀԱԽ համայնք կապը, ավելացավ համայնքի կամավորների թիվը, որոշ չափով լուծվել է համայնքաբնակների զբաղվածության հարցը:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Ծրագրի նպատակն է ակտիվացնել ու խթանել կամավորների մասնակցությունը համայնքային</p>	

նախաձեռնությունների կազմակերպման և իրականացման գործընթացում, բարելավել համայնքի երիտասարդների անառային հանգիստը, լուծել նշակութային և բնապահպանական խնդիրներ, անդրադարձ կատարել պատմական արժեքներին:

Ամփոփ նկարագրություն

Ծրագրի արդյունքում բարձրացել է համայնքի անդամների մոտիվացիան, մասնակցությունը հասարակական նախաձեռնությունների կազմակերպման գործընթացում: ՀԵՆԱ-ի անդամներն իրականացրել են բնապահպանական արշավներ՝ այցելելով Երիցվանք և Տաթևեր ճոպանուղի՝ իրականացնելով շրջակա տարածքի մաքրման աշխատանքներ և այս կերպ նպաստել համայնքի երիտասարդության զբաղվածության խնդրի լուծմանը:

Ենթաձրագիր 2.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-08
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
Ծրագրի տևողությունը	16.04.12-30.09.12
Փուլ 1	01.08.12-30.09.12
Փուլ 2	
Ծրագրի անվանումը	«Իմ համայնքը» «Իրազեկ երիտասարդություն»
Դրամաշնորհի չափը	
Փուլ 1	500,000 ՀՀ դրամ
Փուլ 2	500,000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը	
Փուլ 1	245000 ՀՀ դրամ
Փուլ 2	220000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1.465. 000 ՀՀ դրամ

Փուլ 1

Ծրագրի նպատակը

Բարձրացնել համայնքի անդամների մասնակցությունը կամավորական աշխատանքներում, նպաստել երիտասարդների խնդիրների լուծմանը Սպանդարյան համայնքում՝ ակտիվացնելով վերջիններիս մասնակցությունը համայնքային միջոցառումներում:

Ամփոփ նկարագրություն

Համայնքային հանդիպումների, ֆորումների միջոցով բարձրացել է համայնքաբնակների մասնակցությունը համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ նախաձեռնությունների և կամավոր աշխատանքի առումով, իրականացվել են ծառատունկ համայնքի փողոցների երկայնքով և համայնքային կառույցների/դպրոց, համայնքապետարան, առևտրի կետ/ շրջակայքում, ինչպես նաև համայնքի երիտասարդների ներգարվմամբ իրականացվել է համայնքի գրադարանի գրքերի վերանորոգում, սպորտային ու նշակութային տարաբնույթ միջոցառումներ:

Փուլ 2

Ծրագրի նպատակը

Նպաստել Սպանդարյան համայնքի երիտասարդների, համայնքի անդամների իրազեկության բարձրացմանը հանրապետական և տեղական լրատվամիջոցների հրապարակումների վերաբերյալ:

Ամփոփ նկարագրություն

Սույն դրամաշնորհի արդյունքում բարձրացվել է ՀԵՆԱ-ի լրատվական խմբի կարողությունները ինտերնետից ինֆորմացիայի հավաքագրման, լրատվական նյութերի պատրաստման ուղղությամբ:

Ծրագրի արդյունքում Սպանդարյան ՀԵՆԱ-ն ստեղծել է համայնքային թերթ, որտեղ ներառվում են նյութեր քաղաքացիական, բնապահպանական, առողջապահական, կրթական, սոցիալական և այլ ոլորտներին վերաբերվող նյութեր:

Ենթաձրագիր 3.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
-----------------	--------------------------------

Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-06
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	16.04.12-15.10.12 01.08.12-30.09.12
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Մշակութային և սպորտային զարգացում» «Մշակութային կյանքի զարգացում»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	500000 ՀՀ դրամ 500000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	335000 ՀՀ դրամ 220000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1,555,000 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Նպաստել Աշոտավան համայնքի երիտասարդների ակտիվացմանը՝ բարձրացնելով նրանց դերը համայնքային միջոցառումների կազմակերպման և իրականացման գործընթացում:</p> <p>Ամփոփ նկարագրություն Բարձրացվել է համայնքում երիտասարդական միջոցառումների թիվը: 2011թ. համեմատ 2012թ. Աշոտավան համայնքում իրականացվել է 4-5 սպորտային միջոցառումներ, ձևավորվել երկու սպորտային թիմ: Երիտասարդների ցանկությամբ ձևավորվել են ֆուտբոլի և վոլեյբոլի թիմեր, պարբերաբար պարապմունքներ կազմակերպել և միջհամայնքային մրցույթներ կազմակերպել: Ձևավորվել է նաև շախմատի թիմ, ձեռք են բերվել շախմատային պարագաներ, կազմվել շախմատի մրցումներ: Բարձրացել է համայնքում մշակութային միջոցառումներին երիտասարդների մասնակցությունը:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Նպաստել Աշոտավան համայնքում մշակութային միջոցառումների իրականացմանը երիտասարդների ներգրավման միջոցով:</p> <p>Ամփոփ նկարագրություն Բարելավվել է տեխնիկական միջոցները երիտասարդական մշակութային միջոցառումների կազմակերպման գործում, ձեռք են բերվել մշակութային միջոցառումների համար անհրաժեշտ սարքավորումներ՝ ուժեղացուցիչ, միկրոֆոններ, դինամիկներ: Բարձրացվել է երիտասարդների մասնակցությունը համայնքում մշակութային միջոցառումների իրականացման գործում: Երաժշտական սարքավորումները նպաստեցին համայնքի մշակութային միջոցառումների իրականացմանը, ապագայում նաև՝ խմբակների բազմանը:</p>	

Ենթաձրագիր 4.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Արենի
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-01
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ Ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Արենի
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	01.04.12-10.04.12 01.07.12-01.09.12 01.09.12-30.09.12
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	«Կանանց և աղջիկների միամսյակին նվիրված միջոցառում» «Ուլունքագործության դասընթացների և ցուցահանդեսի կազմակերպում» «Համայնքի երեխաների գեղագիտական դաստիարակության զարգացման օժանդակում»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	105900 ՀՀ դրամ 168000 ՀՀ դրամ 640000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	102000 ՀՀ դրամ 69300 ՀՀ դրամ 500000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1, 585, 200 ՀՀ դրամ

Փուլ 1

Ծրագրի նպատակը

Գնահատել և արժևորել համայնքաբնակ կանանց դերակատարությունը, նպաստել գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը:

Ամփոփ նկարագրություն

Ծրագրով ՀԵՆԱ անդամներն հարցազրույցներ են վերցրել համայնքի բազմազավակ 20 մայրերից, բացահայտել բազմազավակ ընտանիքների խնդիրները, ՏԻՄ-ի և համապատասխան ուշադրությունը հրավիրել այդ ընտանիքների խնդիրների վրա: Համայնքի մշակույթի տանը կազմակերպվել է մայրության տոնին նվիրված միջոցառում, որտեղ ցուցադրվել են հարցազրույցներից պատրաստված տեսաֆիլմ, որից հետո համայնքի շնորհալի երեխաները մայրության և գեղեցկության տոնի առթիվ ասմունքել, երգել և պարել են:

Փուլ 2

Ծրագրի նպատակը

Արենի գյուղի երիտասարդ կանանց և աղջիկների համար ստեղծել մասնագիտական և գեղագիտական կրթության այլընտրանքային հնարավորություններ:

Ամփոփ նկարագրություն

Համայնքաբնակ 20 աղջիկ 2 ամիս շարունակ պարապմունքների միջոցով զարգացրել են իրենց կարողություններն ու հմտությունները հուլունքագործության ոլորտում: Համայնքում կազմակերպվել է ձեռքի աշխատանքների ցուցահանդես, որը լավ հնարավորություն էր ձեռագործ արվեստը լայն տարածում ստանալու, նոր սերունդներին փոխանցելու, ինչպես նաև գումար վաստակելու համար:

Փուլ 3

Ծրագրի նպատակը

Արենի համայնքի երեխաների գեղագիտական դաստիարակության զարգացում և համայնքի մշակութային ավանդույթների վերականգնում:

Ամփոփ նկարագրություն

Արենի համայնքի պարի խումբը իր 65 անդամի համար ձեռք է բերել պարային հագուստներ, իսկ համայնքի մանկական երգչախումբի 15 անդամի համար՝ համերգային հագուստներ: Ծրագրի շնորհիվ ակտիվացել է համայնքի մշակութային կյանքը: Խմբերն այսուհետ հնարավորություն ունեն մասնակցելու մարզային, ազգային և միջազգային մակարդակի մրցույթների, փառատոների և համերգների, ինչը նպաստում է նաև համայնքի հեղինակության բարձրացմանը, մշակութային ավանդույթների նկատմամբ երեխաների և երիտասարդների հետաքրքրության մեծացմանը, որը նաև գեղեցիկական կրթության հիանալի հնարավորություն է:

Ենթաճրագիր 5.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գոմք
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-04
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գոմք
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	02.04.12-12.04.12 21.05.12-31.05.12 01.09.12-30.09.12
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	«Կանանց միամսյակին նվիրված միջոցառումներ» «Հրաժեշտ դպրոցին միջոցառումներ» «Ուրախ մարզադպրոց»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	145000 ՀՀ դրամ 100000 ՀՀ դրամ 505400 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2 Փուլ 3	90000 ՀՀ դրամ 40000 ՀՀ դրամ 211730 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1, 092, 130 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Մեծարել գյուղի կանանց, կտրել նրանց գյուղի հոգսաշատ առօրյայից, գնահատել գյուղի կանանց մեծ դերակատարությունը համայնքի կյանքում:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի ընթացքում համայնքի շնորհալի երեխաները նկարների և շարադրությունների միջոցով անդրադարձել են «Գյուղի կինը» թեմային՝ մեծարելով կանանց և մայրերին: Իսկ համայնքապետարանի շենքում կազմակերպել են մայրության տոնին նվիրված միջոցառում, ուր համայնքի շնորհալի երեխաները երգի, պարի, ասմունքի միջոցով շնորհավորել են համայնքի կանանց: Ծրագրի արդյունքում համայնքի կանայք զգացին իրենց նկատմամբ ուշադրություն, մեծացավ համայնքի բնակիչների մոտիվացիան, հասարակական կյանքին մասնակցելու, սեփական նախաձեռնություններով հանդես գալու ցանկությունը:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Ոգևորել և առանձնահատուկ շնորհավորել գյուղի շրջանավարտներին, ինչը նոր կյանքի ճանապարհին համայնքի կողմից կարևոր և ուշադիր քայլ կլինի:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի արդյունքում համայնքի դպրոցի դահլիճում ՀԵՆԱ-ն շրջանավարտների համար կազմակերպել էր միջոցառում, ցուցադրել երեխաների կողմից նախապես նկարված «Իմ հարազատ գյուղական դպրոցը» թեմատիկ նկարների ցուցահանդես, կազմակերպվել «Լավագույն դպրոց, ուսուցիչ, աշակերտ, ծնող» մոմինացիաներով մրցանակաբաշխություն: Երեխաների կողմից ցուցադրած լավագույն պարային և երաժշտական, հումորի և ասմունքի համարները յուրովի շուք հաղորդեցին միջոցառմանը:</p> <p>Փուլ 3 Ծրագրի նպատակը Նպաստել Գոմք համայնքի երեխաների առողջ ապրելակերպին ու ֆիզիկական դաստիարակությանը՝ ստեղծելով շարժուն խաղերի հնարավորություններ:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի արդյունքում համայնքի երեխաները ունեն ակտիվ մարզվելու, խաղալու և ժամանցի հնարավորություններ: Այժմ համայնքային զարգացման դրամաշնորհային ծրագրով կառուցված մանկական խաղահրապարակը գործում է ավելի արդյունավետ ու լիարժեք՝ ընդգրկելով բոլոր տարիքի երեխաներին և նաև երիտասարդներին:</p>	

Ենթաճրագիր 6.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Բարձրունի
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-07
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Բարձրունի
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	01.04.12-07.04.12 15.06.12-30.06.12
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Ցերեկույթ՝ նվիրված համայնքի կանաց մեծարմանը» «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման միջոցառում»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	159000 ՀՀ դրամ 114000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	57400 ՀՀ դրամ 60000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	390,400 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Միջոցառման նպատակը գյուղի բազմաչարչար կանանց ու նրանց խնդիրներին ուշադրություն հրավիրելն է և նրանց արժևորելը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի արդյունքում սահմանամերձ ու բազմաթիվ խնդիրներ ունեցող գյուղական համայնքի կանայք իրենց զգացին արժանապատիվ և մեծարված, կանայք, ովքեր համայնքի պատմության մեջ մեծ դեր են ունեցել՝ ուսուցիչներ, հողի աշխատավորներ, բուժաշխատողներ, պատերազմի վետերաններ, բազմազավակ մայրեր՝ նպաստելով նրանց ոգևորվածությանը և համայնքային կյանքին հետագա մասնակցության:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Մեծարել գյուղի շնորհալի երիտասարդներին և աջակցել նրանց կողմնորոշվելու ճիշտ մասնագիտության ընտրության մեջ:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի ընթացքում ՀԵՆԱ-ն երիտասարդների համար կազմակերպեց մասնագիտական կողմնորոշման հանդիպում: Հյուրերն իրենց փորձը, խորհուրդները տվեցին երիտասարդներին, նրանց կողմնորոշեցին ճիշտ մասնագիտություն ընտրելու հարցում, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը գտնի իր արժանի տեղը այս կյանքում: Արդյունքում սահմանամերձ գյուղի երիտասարդներն իրենց զգացին արժանապատիվ և մեծարված: Միջոցառումը հերթական անգամ բարձրացրեց ՀԵՆԱ-ի հեղինակությունը և դերը համայնքում:</p>	

Ենթաճյուղ 7.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-03
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	01.04.12-07.04.12 01.09.12-30.09.12
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Կանանց տոնին նվիրված միջոցառում» «Գյուղի օրվան նվիրված միջոցառում»

Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	107000 ՀՀ դրամ 698000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	54250 ՀՀ դրամ 290000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1,149,250 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Կանանց միանյակի շրջանակներում կազմակերպել գյուղի կանանց նվիրված միջոցառումներ, ակտիվացնել հասարակական և մշակութային կյանքը համայնքներում և նպաստել կանանց ու նրանց խնդիրների նկատմամբ ուշադրության ձևավորմանը, հաճելի պահեր պարգևել գյուղի կանանց:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի շրջանակներում համայնքապետարանի դահլիճում կկազմակերպվել է կանանց տոնին նվիրված միջոցառում: Միջոցառման արդյունքում համախմբվեցին համայնքի երիտասարդություն, ակտիվացավ համայնքի մշակութային կյանքը, շարունակվում են պահպանվել ազգային ու պետական տոներն ու ավանդույթները:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Համախմբել համայնքը «Համայնքի օր» միջոցառման շնորհիվ և դա դարձնել ավանդույթ, ակտիվացնել հասարակական և մշակութային կյանքը համայնքներում:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի արդյունքում ՀԵՆԱ-ի կողմից նախաձեռնած «Համայնքի օր» միջոցառումը դարձավ ավանդական տոն՝ համախմբելով երիտասարդությանը, ակտիվացնելով համայնքի հասարակական և մշակութային կյանքը:</p>	

Ենթաժրագիր 8.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Հերիեր
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-2012-05
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Հերիեր
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	01.04.12-20.04.12 22.05.12-01.06.12
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Կանանց տոնին նվիրված միջոցառում» «Ձեզ տեսնենք, աղջիկներ» «Նկարում են մեր երեխաները» մանկական մրցույթ-փառատոն
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	100 000 ՀՀ դրամ 75 000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	50 000 ՀՀ դրամ 30 000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	255, 000 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Ակտիվացնել համայնքի կանանց, նրանց կտրել կենցաղային հոգսերից, բացահայտել համայնքի շնորհալի կանանց:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ծրագրի ընթացքում ՀԵՆԱ-ն կազմակերպել է «Ձեզ տեսնենք կանայք» միջոցառումը, որի արդյունքում համայնքի կանայք որոշ չափով կտրվեցին իրենց առօրյա հոգսերից և համախմբվեցին համայնքի շուրջ:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Աշխուժություն մտցնել երեխաների կյանքում, նրանց պաշտպանությանը նվիրված օրը դարձնել իսկական տոն,</p>	

ինչպես նաև բացահայտել շնորհալի երեխաներին և համապատասխան ուշադրություն հրավիրել նրանց նկատմամբ:

Ամփոփ նկարագրություն

Հերիերի ՀԵՆԱ-ն երեխաների պաշտպանության օրվան նվիրված կազմակերպել էր «Նկարում են մեր երեխաները» մրցույթ-փառատոնը, որին մասնակցել են համայնքի 68 երեխա: Ծրագրի արդյունքում երեխաները համախմբվեցին համայնքի շուրջ, բազում հաճելի պահեր ունեցան, բացահայտվեցին ու խրախուսվեցին համայնքի շնորհալի երեխաները:

Ենթաճրագիր 9.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-G-2013-01
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արծվանիկ
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	2013թ. հունվար-ապրիլ 2013թ. հունիս-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Իրազեկ և համախմբված երիտասարդություն» «Պատանի բնասերները»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	323000 ՀՀ դրամ 677000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	158000 ՀՀ դրամ 270000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1.428.000 ՀՀ դրամ

Փուլ 1

Ծրագրի նպատակը

Ակտիվացնել ու խթանել կամավորների մասնակցությունը համայնքային նախաձեռնությունների կազմակերպման և իրականացման գործընթացում, նպաստել համայնքաբնակների իրազեկության բարձրացմանը աշխարհի, հանրապետական և տեղական լրատվամիջոցների հրապարակումների վերաբերյալ, ձեռք բերել կարողություններ և հմտություններ՝ ձեռքի աշխատանքի և սեղանի դիզայնի վերաբերյալ:

Ամփոփ նկարագրություն

Ակտիվացել է ՀԵՆԱ-ի անդամների մոտիվացիան, մասնակցությունը հասարակական նախաձեռնությունների կազմակերպման գործընթացում, զարգացել է ՀԵՆԱ-ի լրատվական խմբի կարողությունները, ավելացել է համայնքի կամավորների թիվը, համայնքի կանայք ու աղջիկները ձեռք են բերել ձեռքի աշխատանքի և սեղանի դիզայնի հմտություններ ու կարողություններ:

Փուլ 2

Ծրագրի նպատակը

Ակտիվացնել ու խթանել կամավորների և ՀԵՆԱ-ի նոր անդամների մասնակցությունը համայնքային նախաձեռնությունների կազմակերպման և իրականացման գործընթացում, բարելավել համայնքի երիտասարդների ամառային հանգիստը, լուծել մշակութային և բնապահպանական խնդիրներ, անդրադարձ կատարել պատմական արժեքներին:

Ամփոփ նկարագրություն

Ակտիվացել է ՀԵՆԱ-ի անդամների մոտիվացիան, մասնակցությունը հասարակական նախաձեռնությունների կազմակերպման գործընթացում: ՀԵՆԱ-ի անդամները մշակում են բնապահպանական խնդիրների լուծման նախաձեռնություններ, բարելավել է համայնքի աղբահանության հարցը: Համայնքում կենցաղային աղբի տեղափոխման համար ՏԻՄ-ի կողմից հատկացված է աղբահավաք մեքենա օժանդակ բանվորով, արդյունքում համայնքն ունի մաքուր տեսք:

Ենթաճրագիր 10.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-G-2013-02
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Աշոտավան
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	2013թ. փետրվար-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Ճանաչենք մեր հայրենիքը» «Նախաձեռնում ենք և մասնակցում»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	500000 ՀՀ դրամ 576000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	310000 ՀՀ դրամ 175000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը Փուլ 1 Փուլ 2	1.076.480 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Աշոտավան համայնքի երիտասարդներին մասնակից դարձնել համայնքի պատմամշակութային հուշարձանների և արժեքների պահպանման և ճանաչման գործին:</p> <p>Ամփոփ նկարագրություն Բարձրացել է համայնքի երիտասարդների մասնակցությունը համայնքի պատմամշակութային վայրերի մաքրման, բարեկարգման և պահպանման գործում, պատրաստվել և համայնքում տարածվել է պոստերներ, տեղեկատվական թերթիկներ: Բարձրացվել է համայնքի երիտասարդության և, առհասարակ, համայնքաբնակների իրազեկությունը համայնքի պատմության, համայնքի ներկայի և ապագայի խնդիրների վերաբերյալ:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Նպաստել երիտասարդների խնդիրների լուծմանը Աշոտավան համայնքում՝ բարձրացնելով երիտասարդների մասնակցությունը սպորտային և մշակութային միջոցառումներին:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ակտիվացել է համայնքի մշակութային կյանքը: Համայնքի նկարչական խմբակի ձևավորումը և գործունեությունը նպաստեց երեխաների գեղագիտական զարգացմանը, մինչ այդ համայնքում որևէ խմբակ չկար: Խմբակի երեխաները փորձառու մասնագետի մոտ նկարչական հքտություններ ստանալուց հետո համայնքում կազմակերպել են ցուցահանդեսներ:</p>	

Ենթաձրագիր 11.

Համայնքի անունը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-G-2013-08
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	2013թ. փետրվար-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը	«Կանաչ համայնք» «Ակտիվ համայնք»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	399000 ՀՀ դրամ 600000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	187000 ՀՀ դրամ 206000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը Փուլ 1 Փուլ 2	1.392.000 ՀՀ դրամ
Փուլ 1 Ծրագրի նպատակը Բարձրացնել համայնքաբնակների պատասխանատվության զգացումը համայնքի շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական խնդիրների լուծման գործում: Ամփոփ նկարագրություն Իրականացվել են բնապահպանական աշխատանքներ, համայնքը մաքրվել է աղբից, տեղադրվել են 15 աղբամաններ, համայնքն այժմ ունի մաքուր և խնամված փողոցներ: Իրականացվել է ծառատունկ, որը համայնք մտնող ճանապարհ-ծառուղին կապշտպանի քամուց և բքից՝ ճանապարհը դարձնելով անցանելի: Փուլ 2 Ծրագրի նպատակը Նպաստել երեխաների զբաղվածության հնարավորությունների ապահովմանը Սպանդարյան համայնքում: Ամփոփ նկարագրություն Համայնքի երիտասարդ աղջիկների շրջանում ձևավորվել է «Հմուտ ձեռքեր» խմբակը: Խմբակի գործունեության համար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ և ձեռք են բերվել անհրաժեշտ նյութեր ու գործիքներ՝ հեյլուն, ասեղ, մկրատ, թել, արհեստական բամբակ և այլն:	

Ենթաճրագիր 12.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Արենի
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-G-2013-03
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Արենի
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	2013թ. փետրվար-ապրիլ 2013թ. հունիս-օգոստոս
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Տեղկատվությունը որպես համայնքի հզորացման գործիք» «ՀԵՆԱ Փառատուն՝ Վայոց Ձոր-2013»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	577000 ՀՀ դրամ 423000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	235000ՀՀ դրամ 175000 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը Փուլ 1 Փուլ 2	1.410.000 ՀՀ դրամ
<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Նպաստել Արեւի համայնքում հասարակական կայանի ակտիվացմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ համայնքային ամսաթերթի տպագրման և վեբկայքի գործարկման միջոցով:</p> <p>Ամփոփ նկարագրություն Բարձրացել է համայնքի բնակիչների իրազեկվածությունը համայնքում կատարվող իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև ՏԻՄ-ի և ՀԵՆԱ-ի գործունեության թափանցիկությունը, ինչը նպաստում է նրանց հեղինակության բարձրմանը: Համայնքի երիտասարդ լրագրողները և երիտասարդ ստեղծագործողները այսուհետ ունեն ինքնադրսևորման հնարավորություն:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Վայոց Ձորի մարզի երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացումը, երիտասարդությանը հուզող խնդիրների բացահայտումը և մարզի զարգացման հեռանկարում երիտասարդության դերակատարության բարձրացումը: Ամփոփ նկարագրություն Վայոց Ձորում առաջին անգամ անցկացվեց երիտասարդական նմանատիպ փառատոն-համաժողով, որն, անպայման, համայնքի համար կդառնա ավանդական տոն, կմիանան նորանոր երիտասարդական կազմակերպություններ, ՀԿ-ներ, կրթական հաստատություններ: Վայոց Ձորի մարզի 6 շահառու համայնքների ակտիվ երիտասարդական խմբերը հնարավորություն կունենան ներկայացնելու ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրենց համայնքներում իրականացված ծրագրերը, իրենց նախաձեռնությունները՝ դրանով փոխանակելով իրենց փորձը և խթանելով երիտասարդական-կամավորական-հասարակական ակտիվությունը նաև մարզի այլ համայնքներում Մեծացել է մարզի գյուղական երիտասարդության և ՀԵՆԱ-ների հեղինակությունն ու ազդեցությունը, ինչպես նաև հետագա մասնակցությունը իրենց համայնքների, մարզի զարգացմանը: Քննարկումների արդյունքում բացահայտվել են մարզի գյուղական երիտասարդությանը հուզող հիմնախնդիրները: Մեծացել է միջհամայնքային մակարադակով երիտասարդների շփումները, համագործակցության և հետագա գործունեության շրջանակը:</p>	

Ենթաձրագիր 13.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Բարձրունի
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-G-2013-04
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Բարձրունի
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	2013թ. հունվար-ապրիլ 2013թ. հունիս-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Մարզական նվաճումներին ընդառաջ» «Ճանաչենք մշակութային արժեքները՝ ստեղծելով նոր արժեքներ և մասնակցելով ՀԵՆԱ-2013 մարզային փառատոնին»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	585000 ՀՀ դրամ 415000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	234000 ՀՀ դրամ 166000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը Փուլ 1 Փուլ 2	1.400.000 ՀՀ դրամ

<p>Փուլ 1 Ծրագրի նպատակը Նպաստել Բարձրունի համայնքում մարզական կյանքի ակտիվացմանը և երեխաների ու երիտասարդների մարզական նվաճումներին:</p> <p>Ամփոփ նկարագրություն Ձեռք է բերել մարզական գույքը, մարզահագուստը և այլ անհրաժեշտ պարագաներ, երիտասարդների շրջանում կազմվել են տղաների և աղջիկների՝ վոլեյբոլի, ֆուտբոլի, բասկետբոլի, շախմատի և սեղանի թենիսի մարզական քիմեր:</p> <p>Կազմակերպել է ներհամայնքային և միջհամայնքային մարզական միջոցառումներ:</p> <p>Փուլ 2 Ծրագրի նպատակը Նպաստել Բարձրունի համայնքի երիտասարդների իրազեկվածությանը Հայաստանի պատմամշակութային արժեքների վերաբերյալ և համայնքի երեխաների գեղագիտական կրթությանը:</p> <p>Ամփոփ նկարագրություն Նպաստել համայնքի երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացմանը, երիտասարդությանը հուզող խնդիրների բացահայտմանը և մարզի զարգացման հեռանկարում երիտասարդության դերակատարության բարձրացմանը՝ ՀԵՆԱ-2013 համաժողով-փառատոնին համայնքի ներկայացուցիչների մասնակցության միջոցով:</p> <p>Բարձրունի համայնքի 10-16 տարեկան 15 երեխաներ ստացել են ասեղնագործության/գորելենագործության հքտություններ ու կարողություններ:</p> <p>Բարձրունի համայնքի 16-22 տարեկան 16 երիտասարդներ մասնակցել են դեպի Սյունիքի պատմամշակութային հուշարձաններ կազմակերպվող էքսկուրսիային:</p> <p>Համայնքի 10 երիտասարդներ և 20 շնորհալի պատանիներ կմասնակցեն ՀԵՆԱ 2013 Վայոց Ձորի երիտասարդական համաժողով-փառատոնին:</p>
--

Ենթաձրագիր 14.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-G-2013-05
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Գետափ
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	2013թ. հունվար-ապրիլ 2013թ. հուլիս-օգոստոս
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Հին և նոր ավանդույթներ» «ՀԵՆԱ Փառատոն՝ Վայոց Ձոր-2013 և Մանկական Ճամբար»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	678000 ՀՀ դրամ 322000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	290000 ՀՀ դրամ 130000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը Փուլ 1 Փուլ 2	1.420.000 ՀՀ դրամ

Փուլ 1**Ծրագրի նպատակը**

Համայնքում նշել պետական-ազգային տոները՝ ձևավորելով նոր ավանդույթներ և նոր նշակույթ Գետափի համայնքում՝ պահպանելով նաև հները:

Ամփոփ նկարագրություն

Միջոցառումները համախմբեցին համայնքի բնակչությանը՝ տարեցներին և երիտասարդներին, կանանց և երեխաներին, տեղական իշխանավորներին և համայնքի հասարակ բնակիչներին:

ՀԵՆԱ-ն ձեռք է բերել կազմակերպչական հմտություններ, փորձառություն:

Մեծացել են համայնքում նշակութային և հասարակական կյանքի ակտիվությունը՝ ապահովելով ազգային ու պետական տոներն ու ավանդույթները՝ կրելով շարունակականություն:

Փուլ 2**Ծրագրի նպատակը**

Վայոց Ձորի մարզի երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացումը, երիտասարդությանը հուզող խնդիրների բացահայտումը և մարզի զարգացման հեռանկարում երիտասարդության դերակատարության բարձրացումը: Գետափ գյուղի երեխաների համար ստեղծել նախադպրոցական կրթության և դաստիարակության հնարավորություններ՝ ամառային ճամբարի միջոցով:

Ամփոփ նկարագրություն

Վայոց Ձորում առաջին անգամ կանցկացվի երիտասարդական մամանտիպ փառատոն-համաժողով, որը ավանդույթ կդառնա համայնքի կյանքում՝ տարեց-տարի միանալով նորանոր երիտասարդական կազմակերպություններ, ՀԿ-ներ, կրթական հաստատություններ:

Վայոց Ձորի մարզի 6 շահառու համայնքների ակտիվ երիտասարդական խմբերը հնարավորություն ունեցան ներկայացնելու ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրենց համայնքներում իրականացված ծրագրերը, իրենց նախաձեռնությունները՝ դրանով փոխանակելով իրենց փորձը և խթանելով երիտասարդական-կամավորական-հասարակական ակտիվությունը նաև մարզի այլ համայնքներում:

Մեծացել է մարզի գյուղական երիտասարդության և ՀԵՆԱ-ների հեղինակությունն ու ազդեցությունը, ինչպես նաև հետագա մասնակցությունը իրենց համայնքների զարգացմանը:

Մեծացել է միջհամայնքային մակարդակով երիտասարդների շփումները, համագործակցության և հետագա գործունեության շրջանակը:

Ենթաժրագիր 15.

Համայնքի անունը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Հերիեր
Պայմանագրի համարը	ARM-C2-GCD-S-CVI-YCAC-G-2013-07
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Հերիեր
Ծրագրի տևողությունը Փուլ 1 Փուլ 2	2013թ. հունվար-ապրիլ 2013թ. հունիս-օգոստոս
Ծրագրի անվանումը Փուլ 1 Փուլ 2	«Ակտիվ համայնքային կյանք» «ՀԵՆԱ Փառատոն՝ Վայոց Ձոր-2013»
Դրամաշնորհի չափը Փուլ 1 Փուլ 2	570000 ՀՀ դրամ 430000 ՀՀ դրամ
Համայնքի ներդրումը Փուլ 1 Փուլ 2	228000 ՀՀ դրամ 175000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը Փուլ 1 Փուլ 2	1.403.000 ՀՀ դրամ

Փուլ 1**Ծրագրի նպատակը**

Ակտիվացնել Հերիեր համայնքի հանրային կայքը՝ տարբեր նախաձեռնությունների կազմակերպման և իրականացման միջոցով:

Ամփոփ նկարագրություն

Բարձրացել է համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքային իրադարձություններին:

Մեծացել է համայնքի երիտասարդների կազմակերպչական, առաջնորդության կարողությունները, հասարակական աշխատանքի փորձառությունը:

Բարձրացել է ՏԻՄ-ի և ՀԵՆԱ-ի համագործակցությունը:

Փուլ 2**Ծրագրի նպատակը**

Վայոց Ձորի մարզի երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացումը, երիտասարդությանը հուզող խնդիրների բացահայտումը և մարզի զարգացման հեռանկարում երիտասարդության դերակատարության բարձրացումը:

Ամփոփ նկարագրություն

Վայոց Ձորում առաջին անգամ կանցկացվի երիտասարդական նմանատիպ փառատոն-համաժողով, որը ավանդույթ կդառնա համայնքի կյանքում՝ տարեց-տարի միանալով նորանոր երիտասարդական կազմակերպություններ, ՀԿ-ներ, կրթական հաստատություններ:

Վայոց Ձորի մարզի 6 շահառու համայնքների ակտիվ երիտասարդական խմբերը հնարավորություն ունեցան ներկայացնելու ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ իրենց համայնքներում իրականացված ծրագրերը, իրենց նախաձեռնությունները՝ դրանով փոխանակելով իրենց փորձը և խթանելով երիտասարդական-կամավորական-հասարակական ակտիվությունը նաև մարզի այլ համայնքներում:

Մեծացել է մարզի գյուղական երիտասարդության և ՀԵՆԱ-ների հեղինակությունն ու ազդեցությունը, ինչպես նաև հետագա մասնակցությունը իրենց համայնքների զարգացմանը:

Մեծացել է միջհամայնքային մակարդակով երիտասարդների շփումները, համագործակցության և հետագա գործունեության շրջանակը:

 **Համտես-փառատոնի ադմինիստրատիվ աջակցություն**

Պայմանագրի համարը	ARM- C1-PS-EOF-S-2013-03
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Ծրագրի տևողությունը	2012թ հոկտեմբեր - նոյեմբեր
Դրամաշնորհի չափը	1.120.000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակ

Ներկայացնել «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության»/ՔՀՏԻԱ/ քառամյա ծրագրի միջանկյալ արդյունքները:

Ծրագրի շահառուները

ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի 16 համայնք

Արդյունքներ

«Հանրային երկխոսության և համայնքային զարգացման համաժողով. համայնքային բարիքների համտեսի փառատոն և ցուցահանդես» թեմայով երկօրյա ցուցահանդեսը լավ հնարավորություն էր ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ ՔԻ-ի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության»/ՔՀՏԻԱ/ քառամյա ծրագրի միջանկյալ արդյունքների ամփոփման համար: Համաժողովին մասնակցել են ՔԻ-ի վերոնշյալ ծրագրի շահառու 43 համայնքի ներկայացուցիչներ: Երկօրյա համաժողովի առաջին մասը նվիրված էր ՔՀՏԻԱ ծրագրի 2 տարվա աշխատանքների, հաջողությունների, քաղած դասերի ներկայացումներին, իսկ երկրորդ մասը համայնքային բարիքների

համտեսի փառատոն-ցուցահանդեսն էր, որը տեղի ունեցավ Սիրահարների այգում՝ ՔԻ-ի կողմից նախապես մշակված ձևաչափով. յուրաքանչյուր համայնք ներկայացել էր իր տարածաշրջանին բնորոշ ուտեստներով, խմիչքներով և մշակութային համարներով:

ԳՈՒՄ ՀԿ-ն ադմինիստրատիվ աջակցություն է ցուցաբերել երկօրյա համաժողովի կազմակերպչական աշխատանքներին: Կազմակերպել է Վայոց Ձորի և Սյունիքի մարզի ՔԻ-ի շահառու 16 համայնքի ներկայացուցիչների տեղափոխման աշխատանքները/թվով 100 հոգի/:

ԳՈՒՄ ՀԿ-ի օպերատիվ աշխատանքի շնորհիվ մասնակիցները ժամանակին տեղ են հասել և ապահով վերադարձել: Համտեսի փառատոնի ողջ ընթացքը արձանագրվել է ԳՈՒՄ ՀԿ-ի «ԿԱՄՔ+» թերթի աշխատակցի կողմից: Համաժողովի կազմակերպիչները և մասնակից համայնքների ներկայացուցիչները, ինչպես նաև անցորդներն իրենց տպավորությունների մասին կիսվել են «ԿԱՄՔ+» թերթի հետ: Կատարված հարցազրույցները տպագրվել են «ԿԱՄՔ+» թերթի 48/49-րդ համարում:

Թերթի նշյալ համարի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ այս հղումով http://www.gumiso.am/uploads/community_development.pdf :

➦ Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն

Պայմանագրի համարը	ARM-C2-GCSO-S-USG-2013-01
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	Սյունիք և Վ. Ձորի մարզեր
Ծրագրի տևողությունը	2012թ.հոկտեմբեր– 2013թ.սեպտեմբեր 2013թ.հոկտեմբեր- 2014թ. հուլիս
Դրամաշնորհի չափը	3.492.000 ՀՀ դրամ 3.45.000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1.364.600 ՀՀ դրամ 2.003.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	4.856.600 ՀՀ դրամ 5.453.000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակ

Լուսաբանել համայնքային և միջհամայնքային զարգացման գործընթացների և ՔՀԿ-ների ծավալած գործունեությունը, շահառու համայնքների ՀԵՆԱ-ների և նրանց կողմից համայնքային նախաձեռնությունների իրականացման գործընթացները, ինչպես նաև ներկայացնել ԳՈՒՄ ՀԿ-ի գործունեությունը դոնորներին, գործընկերներին և շահառուներին՝ ապահովելով թափանցիկություն և հաշվետվողականություն:

Ծրագրի շահառուներ

ՀՀ համայնքների բնակիչներ, ՏԻՄ-երի, ՀԱԽ-երի, ՀԵՆԱ-ների ներկայացուցիչներ

Արդյունքներ

ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացվող «Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն» ծրագրի իրականացման ընթացքում ՀԿ-ի «Կամք+» թերթի տպագրման և տարածման միջոցով ստեղծվել է միասնական տեղեկատվական դաշտ Սյունիքի և Վ. Ձորի մարզերի ՔԻ շահառու համայնքների միջև:

Ծրագրի ընթացքում պատրաստվել, տպագրվել և շահառուների շրջանում տարածվել է «Կամք+» թերթի 20 թողարկում՝ 2012թ՝ 9 թողարկում, 2013թ՝ 11: Թերթերը բաշխվել են ՀՀ Սյունիքի և Վ. Ձորի մարզերի 16, ինչպես նաև ՔԻ շահառու ՀՀ մյուս համայնքների բնակիչների շրջանում:

Թերթի թողարկումները նվիրվել են ՔԻ-ի «Քաղաքացիական հասարակության և ՏԻՄ աջակցության» ծրագրի շրջանակներում շահառու համայնքներում տեղի ունեցող համայնքային զարգացման գործընթացների լուսաբանմանը՝ ներառելով ՀԱԽ-երի, ՀԵՆԱ-ների կողմից իրականացված նախաձեռնությունները, ՏԻՄ խրախուսման ծրագրերը, Հարավ-հյուսիս և Հյուսիս-հարավ փորձի փոխանակման ուսուցողական այցերը, ՏԻՄ-երի վերապատրաստման դասընթացները:

Հարկ է նշել, որ թերթի վերոնշյալ համարներն ունեցել են հանրապետական ընդգրկվածություն:

Նշյալ ժամանակահատվածում տպագրվել և տարածվել են նաև 2012թ. մայիսի 6-ին տեղի ունեցած Ազգային ժողովի և 2013թ. փետրվարի 18-ին ՀՀ նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ Սյունիքի մարզի ՔՀԿ-ների ներգրավվածության լուսաբանմանը նվիրված «Կամք+» թերթի հատուկ համարներ:

«Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն» ծրագրի արդյունքում պատրաստվել և տպագրվել է նաև ԳՈՒՄ ՀԿ-ի 2012-2013թթ գործունեության հաշվետվությունը:

Ծրագրի արդյունքում բարձրացել է ՀՀ ՔԻ-ի շահառու համայնքների բնակիչների իրազեկությունը համայնքային զարգացման գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորվել է միասնական տեղեկատվական դաշտ շահառու համայնքների համայնքային կառույցների և համայնքաբնակների միջև: Ծրագիրը գտնվում է իրականացման փուլում, վերջնական արդյունքները կամփոփվեն ԳՈՒՄ ՀԿ-ի 2014թ. տարեկան հաշվետվության մեջ:

Թերթի բոլոր համարների էլեկտրոնային տարբերակները կարող եք գտնել «Կամք+» թերթի բլոգում՝ <http://kamqplus.blogspot.com/>:

✚ Համայնքային մոբիլիզացման միջոցառումների կազմակերպում և իրականացում ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում

Պայմանագրի համարը	WVA/NO OPS/TR-12/002
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Հայաստան
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի, Տավուշի մարզեր
Ծրագրի տևողությունը	2012թ. հունվար-մայիս
Դրամաշնորհի չափը	2,950,600 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Համայնքային մոբիլիզացման միջոցառումների կազմակերպում Տավուշի մարզի Իջևան, Բերդ և Սյունիքի մարզի Մեղրի համայնքներում:

Ծրագրի շահառուներ

ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերի համայնքաբնակներ, բուժօժանայություններ ստացողներ, բուժօժանայություններ տրամադրողներ, բուժհաստատությունների ղեկավարներ

Արդյունքներ

Նախաձեռնությունն իրականացվել է ՎՎ Հայաստանի «Առողջություն ընտանիքների համար» ծրագրի շրջանակներում: Ծրագրի արդյունքում իրականացվել է 26 ֆոկլուս-խմբային քննարկում/Տավուշ 20, Սյունիքի մարզ 6/ համայնքների անդամների, ծառայություն մատուցողների շրջանում՝ ընտանեկան առողջապահական հիմնական ծառայություններից օգտվելու իրավասության և պարտականությունների վերաբերյալ:

Ծրագրի արդյունքում 2012թ. յուրաքանչյուր շահառու համայնքի համար Առողջության առաջնային պահպանման կենտրոնների/ ԱՄԴԿ-ների կողմից առաջնային օղակի բուժօժանայությունները բարելավելու նպատակով պատրաստվել են աշխատանքային ծրագրեր: Յուրաքանչյուր համայնքում համայնքաբնակների, ՏԻՄ-երի, դպրոցների և ԱԽ-ների ակտիվ ներկայացուցիչներից ձևավորվել են մոնիտորինգային հանձնախմբեր, որոնք կրթվել են հավասարը՝ հավասարին մեթոդով: Հանձնախմբերն իրականացրել են ԱՄԴԿ-ների կողմից մատուցված ծառայությունների մոնիտորինգ և գործողությունների պլանի կատարման մակարդակի վերահսկում:

ԱՄԴԿ-ների, համայնքներում ակտիվ խմբերի և ՏԻՄ-երի միջև ծավալվել է երկխոսություն, որի արդյունքում ԱՄԴԿ-ների համայնքաբնակների և ՏԻՄ ներկայացուցիչների կողմից վերանայվել և բարելավվել են երեխաներին և նրանց ընտանիքներին անդամներին տրամադրվող առաջնային օղակի բուժօժանայությունները:

Ծրագրի ընթացքում կազմակերպվել են կլոր-սեղան հանդիպումներ Իջևանում, Բերդում և Մեղրիում, որոնց մասնակցել են նաև Սյունիքի և Տավուշի մարզերի մարզպետարանների առողջապահության և սոցիալական խնդիրների վարչության պատասխանատուները, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ, առողջապահության ոլորտի փորձագետներ և մարզի համայնքային ԱՄԴԿ-ների տնօրեններ և պատասխանատուներ: Հանդիպումների արդյունքում վերհանված խնդիրները հավաքագրվել են, պատրաստվել է դրանց լուծումներին ուղղված առաջարկությունների փաթեթ համայնքային, մարզային և ազգային մակարդակներում:

ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ՀԱՍԱՐԱՎԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԻՍ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացում՝ ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության

Պայմանագրի համարը	Sisian ADP/CBO-02/FY12 WVA/SIS ADP/CBO-02/FY14 WVA/SIS ADP/CBO-02/FY14
Դոնոր կազմակերպությունը	Վորլդ Վիժն Հայաստան
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններ ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի, Սիսիանի և Կապանի տարածաշրջաններ
Ծրագրի տևողությունը	2011թ. հոկտեմբեր-2012թ. սեպտեմբեր 2013թ. հոկտեմբեր -2014թ. սեպտեմբեր
Դրամաշնորհի չափը	13.883.455 ՀՀ դրամ 4.462.000 ՀՀ դրամ Կապան-2.171.000 ՀՀ դրամ Սիսիան- 2.291.000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

- Նպաստել Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացմանը՝ ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության:
- Նպաստել համայնքների զարգացմանը՝ շահերի պաշտպանության և համայնքային մասնակցության գործիքների կիրառմամբ:

Համագործակից կազմակերպություն

- Վորլդ Վիժն Սիսիանի ՏՁԾ
- Վորլդ Վիժն Կապանի ՏՁԾ

Ծրագրի շահառուները

Սյունիքի մարզի Գորիսի, Սիսիանի և Կապանի տարածաշրջանների 41 համայնքների բնակիչներ

Արդյունքներ

2012թ. ԳՈՒՄ ՀԿ-ն շարունակել է 2009թ. ՎՎ Սիսիանի ՏՁԾ-ի հետ ձևավորված համագործակցությունը, որի շրջանակներում ՀԿ-ն խթանել է Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի 5, Սիսիանի տարածաշրջանի 19 համայնքների ՏԻՄ-երի, դպրոցների խորհրդակցական և կառավարման մարմինների /ԱԽ, ԾԽ, ՄԽ, ԴԽ/ կարողությունների զարգացման գործընթացը՝ իրականացնելով դասընթացներ, խորհրդատվություններ, աշխատանքային հանդիպումներ, մարզային համաժողովներ:

Ընդլայնելով գործընկերության շրջանակը՝ 2013 թվականին վերոնշյալ ծրագրի շրջանակներում ընդգրկվել է նաև ՎՎ-ի Կապանի ՏՁԾ-ի հետ:

Ծրագրի շրջանակներում 2012-2013թթ ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն շարունակել է ԱԽ-ների կարողությունների զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը: 2012թ. դեկտեմբերի 22-ին ՎՎ Սիսիանի ՏՁԾ-ի և ԳՈՒՄ ՀԿ-ի աշխատանքի արդյունքում Սյունիքի մարզի Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների 20 դպրոցների ԱԽ-ներից ձևավորվեց Սյունիքի Աշակերտական խորհուրդների/ԱԽ ցանցը, իսկ 2013թ. ցանցին միացան նաև ՎՎ Կապանի ՏՁԾ-ի շահառու 12 դպրոցները: ԳՈՒՄ ՀԿ-ն հանդիսանում է Սյունիքի ԱԽ ցանցի խորհրդատուն, որի հետևողական աշխատանքի արդյունքում ցանցի ներսում ձևավորվել է չորս աշխատանքային հանձնախումբ՝ Նախաձեռնություններ ու

քարոզարշավներ, Արտաքին կապեր և համագործակցություն, Մեդիա և հաղորդակցում, Իրավունքներ և շահերի պաշտպանություն :

Իր աջակից/ՎՎ Սիսիանի և Կապանի ՏԶԾ-ներ/ և խորհրդատու/ԳՈՒՄ ՀԿ/ կազմակերպությունների օժանդակությամբ նորաստեղծ ցանցը մշակել և մեծ հաջողությամբ իրականացրել է մի շարք հետաքրքիր նախաձեռնություններ, ինչպիսիք են օրինակ՝ «Մաքուր և կանաչապատ համայնք» ակցիա, «Ամանորը և Սուրբ ծնունդը իմ համայնքում», «Սուրբ զատիկ» «Հունիսի 1-ը՝ Երեխաների իրավունքների պաշտպանության օր», «Քաղաքացիական հասարակության օր», «Տեղական ինքնակառավարման օր» և այլն :

Խորհրդատուների աջակցությամբ ցանցը ստեղծել է իր «Արձագանք» թերթը, բուկլետը, ֆեյսբուքյան էջը, բլոգը՝ <http://axcanc.blogspot.com>, որոնց միջոցով պարբերաբար լուսաբանվում են ցանցի կողմից իրականացված բոլոր նախաձեռնությունները:

2013թ. ԳՈՒՄ ՀԿ-ի, ՎՎ-ի Սիսիանի և Կապանի ՏԶԾ-ների համագործակցության շնորհիվ Սյունիքի Ախ ցանցի համար կազմակերպվել են «Մենք ենք մեր ապագան» թեմայով ամառային և աշնանային ճամբարներ՝ նպատակ ունենալով միավորել Սյունիքի Ախ ցանցի երկու/Գորիս-Սիսիան և Կապան/ կողմերը՝ շեշտադրելով թիմային աշխատանքը, առաջնորդությունն ու համագործակցությունը, ինչպես նաև զարգացնել Ախ ցանցի աշխատանքային խմբերի կարողությունները, նպաստել նրանց 2013-2014 ուստարվա աշխատանքային պլանի կատարողականության բարձրացմանը:

Աջակից և խորհրդատու կազմակերպությունների օգնությամբ Ախ ցանցի անդամները հնարավորություն են ստացել մասնակցելու հանրապետական ընդգրկվածություն ունեցող մի քանի նախաձեռնությունների /«Մեդիա ամառային դպրոց», «Ակտիվ երիտասարդների և աշակերտական խորհուրդների համահայկական համաժողով», «Հայացք ապագային» էքսպո-համաժողով/ զարգացնելով իրենց կարողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների, հանրությանը ներկայանալու և հաղորդակցման ոլորտներում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև ենթածրագրեր, որոնք ներկայացվում են ստորև, իսկ արձանագրված հաջողակ պատմությունները ներառված են «Հաջողակ պատմություններ բաժնում»:

****Ենթածրագիր***

«Շահագրգիռ կողմերը միասին հանուն Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի հզորացման»

Ծրագրի տևողությունը - 2011 փետրվար-2013թ. հունիս

Ծրագրի նպատակը

Բարելավել Հայաստանում խոցելի երեխաների կենսակերպը՝ հզորացնելով երեխաների պաշտպանության (ԵՊ) համակարգը, ազգային, մարզային և համայնքային մարկարդակներում գործող շահագրգիռ կողմերի կարողությունները՝ Հայաստանի կառավարության հետ սերտ համագործակցությամբ:

Արդյունքները

ԳՈՒՄ ՀԿ-ն ՎՎ Հայաստանի հետ համագործակցության շրջանակներում 2011-2013թթ իրականացրել է «Շահագրգիռ կողմերը միասին հանուն Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի հզորացման» ծրագիրը, որի ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ի երկու աշխատակից՝ վերապատաստվելով որպես սոցիալական աշխատողներ, ուսումնասիրություն են կատարել Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցում՝ փորձելով բացահայտել երեխաներին հատուկ հաստատություն տեղափոխելու ընտանիքների դրդապատճառները: Երեխաների և նրանց ընտանիքների կարիքների գնահատման հիման վրա 36 երեխա ընդգրկվել է բեռնաթափման ծրագրում և վերամիավորվել իրենց ընտանիքներին, ինչպես նաև կանխարգելման բաղադրիչով ծրագրում ընդգրկված 4 երեխա ուղղորդվել Երևան բժշկական հետազոտության և ստացել համապատասխան բուժում:

ՎՎ Հայաստանի աջակցությամբ բեռնաթափված երեխաների ընտանիքները ընդգրկվել են տնտեսական զարգացման ծրագրերի մեջ, ծնողների հետ եռամսյակը մեկ իրականացվել են ծնողական հմտություններ թեմայով վերապատրաստումներ:

Ծրագրի շրջանակներում կանխարգելման աշխատանքներ են իրականացվել Գորիսի տարածաշրջանի Շինուհայր, Խոտ, Յարժիս, Յալիձոր, Քարահունջ համայնքներում և ծրագրի իրականացման ընթացքում այդ համայնքներում հայտնաբերվել է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 75 երեխա և կանխարգելվել նրանց մուտքը դեպի հատուկ հաստատություն:

Այս ընթացքում ձևավորվել է համագործակցություն Օրանժ Արմենիա կազմակերպության հետ և ծրագրի շահառու 4 ընտանիք աջակցություն է ստացել Օրանժ Արմենիայից՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով, ինչպես նաև արձանագրվել են հաջողակ պատմություններ, որոնց կարող եք ծանոթանալ հաշվետվության հաջողակ պատմությունների բաժնում:

Կանխարգելված երեխաների ընտանիքներին ևս ՎՎ-ի կողմից տրամադրվել են սոցիալ-տնտեսական աջակցությունների փաթեթներ:

Ծրագրի արդյունքում սերտ համագործակցություն է ձևավորվել Սյունիքի մարզի Ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, համայնքապետարանների, հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովների հետ:

****Ենթածրագիր .***

▪ Բարելավված հանրային ծառայություններ

Ծրագրի տևողությունը 2011 սեպտեմբեր-2013թ. սեպտեմբեր

Ծրագրի նպատակը

Բարելավել հանրային ծառայությունների հասանելիությունը և որակը:

Ծրագրի շահառու համայնքները

Խոտ, Յարժիս, Դարբաս, Շաքի, Շաղատ, Տոլորս, Բռնակոթ, Անգեղակոթ, Սառնակունք, Գորայք

Արդյունքներ

«Բարելավված հանրային ծառայություններ» նախաձեռնության շրջանակներում ԳՈՒՄ ՅՎ-ն նպաստել է Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների շահառու համայնքներում հանրային ծառայությունների հասանելիության և որակի բարելավմանը:

Ծրագրի շրջանակներում 2012թ. ԳՈՒՄ ՅՎ-ի կողմից իրականացվել է շահառու 10 համայնքի կարողությունների միջանկյալ գնահատում, որի նպատակն էր գնահատել ՏԻՄ-երի կարողությունները և հմտությունները, վերջին մեկ տարվա ընթացքում առկա փոփոխությունները, առաջընթացը, ձեռքբերումները:

Համայնքի կարողությունների գնահատումը կատարվել է ըստ նախապես մշակված գնահատման գործիքի, որը ներառում էր հետևյալ բաժինները.

- Առաջնորդություն և ռազմավարական պլանավորում
- Ծառայությունների մատուցում և որակի վերահսկողություն
- Հաղորդակցություն և արտաքին հարաբերություններ
- Բյուջետավարում և ֆինանսական պլանավորում
- Վարչական կառավարում

Կարողությունների գնահատումն իրականացվել է անհատական հարցազրույցների, կլոր-սեղանների, ինչպես նաև ավագանու անդամների ինքնագնահատման թեստավորման միջոցով, ինչպես նաև ուսումնասիրվել են համայնքների ՏԻՄ-երի կողմից մշակված և գործածվող փաստաթղթերը:

Գնահատման արդյունքում բացահայտված կարիքների հիման վրա ՏԻՄ-երի համար պատրաստվել են կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների պլաններ:

Շահառու համայնքների կրթություն, առողջապահություն և ՏԻՄ ոլորտներում կատարել է կարիքի գնահատում, ըստ նշյալ ոլորտների իրականացրել տարբեր ֆոկուս-խմբային քննարկումներ՝ համայնքապետների, ուսուցիչների, աշակերտների, բուժքույրերի, համայնքաբնակների, մասնակցությամբ: Քննարկումների արդյունքում վերհանված առաջարկությունների հիման վրա 3 ոլորտի /կրթություն, առողջապահություն և ՏԻՄ/ համար ԳՈՒՄ 34-ի կողմից կազմվել են բարեփոխումների ծրագրեր:

Ըստ ՏԻՄ-երի կարողությունների զարգացման պլանի՝ ԳՈՒՄ 34-ն շահառու համայնքների ՏԻՄ-երի կարողությունների զարգացման նպատակով իրականացրել է դասընթացներ ու խորհրդատվություններ հետևյալ թեմաներով՝ «Ավագանու անդամների կարողությունների զարգացում», «ՏԻՄ-ի լիազորություններ», «Ռազմավարական պլանավորում և առաջնորդություն», «Ծրագրերի նախագծում և իրականացում»:

Ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ 34-ի և 44 Սիսիանի ՏՁԾ-ի գործընկերությամբ ստեղծված «Համայնքային զարգացման աջակցության ցանցի»/ՀՁԱՑ անդամ կազմակերպությունները 2012-2013թթ իրականացրել են համայնքային զարգացման գործընկերային նախաձեռնություններ: 2012թ. սեպտեմբերին ՀՁԱՑ-ի անդամ կազմակերպությունների համար ստեղծվել է ինտերնետային կայք՝ www.hamaynq.am, որտեղ ամփոփված են ՀՁԱՑ-ի կողմից իրականացված նախաձեռնությունները: Հարկ է նշել, որ ՀՁԱՑ-ը ձևավորվել է Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում գործունեություն ծավալող 17 ՀԿ-ներից՝ նպաստելու ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի և Գորիսի տարածաշրջանի համայնքների զարգացմանը՝ համայնքային հիմնախնդիրների լուծման գործընթացում ներգրավելով շահագրգիռ բոլոր կողմերին: 2013թ. ՀՁԱՑ-ին միացան Կապանի ՀԿ-ները: ՀՁԱՑ-ի գործընկերությունը համակարգում է ԳՈՒՄ 34-ն:

2012-2013թթ իր գործունեության ընթացքում ՀՁԱՑ-ի կողմից իրականացվել են քաղաքացիական հասարակության ակտիվացման և համայնքային զարգացման տարաբնույթ նախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման օր», «Քաղաքացիական հասարակության օր», «Հունիսի 1» :

2012-2013թթ ԳՈՒՄ 34-ի, 44 Սիսիանի և Կապանի ՏՁԾ-ների համագործակցության շրջանակներում ՀՁԱՑ-ի մասնակցությամբ իրականացվել են «Հանրակրթության ոլորտի մարտահրավերները ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում», «Առողջապահության ոլորտի մարտահրավերները ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում» և «ՏԻՄ ոլորտի մարտահրավերները ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում» թեմաներով մարզային ֆորումներ, որոնց արդյունքում շահագրգիռ կողմերի հետ միասին վերհանվել են վերոնշյալ ոլորտների հիմնախնդիրները, մշակվել դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների փաթեթներ՝ հասցեագրելով դրանք համապատասխան ոլորտներում տեղական, մարզային, ազգային մակարդակներում որոշում կայացնողներին:

2012-2013թթ ընթացքում ՀՁԱՑ-ի անդամ ինը կազմակերպություններ /Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, «Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ, «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ, «Ասպարեզ» ՀԿ, «Բարի երթ» ՀԿ, «Սոսե» կանանց հիմնահարցեր ՀԿ, «Գորիսի նոր սերունդ» ՀԿ, «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ, Սիսիանի մ/ճ/ 44 Սիսիանի ՏՁԾ-ի կողմից տրամադրված գործընկերային դրամաշնորհների շրջանակներում իրականացրել են համայնքային զարգացմանն ուղղված նախաձեռնություններ:

ՀՁԱՑ-ի անդամ կազմակերպությունների նախաձեռնություններն ուղղվել են կրթության, առողջապահության և ՏԻՄ ոլորտներում բացահայտված խնդիրների լուծմանը:

Ստորև ներկայացված են 2012-2013թթ. համայնքային զարգացման աջակցության ցանցի/ՀՁԱՑ անդամ կազմակերպությունների իրականացրած համայնքային զարգացման նախաձեռնությունները:

Բոլոր նախաձեռնություններն իրականացվել են գործընկերային սկզբունքներով: 44 ՄՏՁԾ-ի կողմից տրամադրված համայնքային զարգացման դրամաշնորհները չեն ներառել անգամ աշխատակազմի պահպանման ծախսեր:

✓ **2012-2013թթ Համայնքային զարգացման աջակցության ցանցի/ՀԶԱՑ անդամ կազմակերպությունների իրականացրած նախաձեռնություններ**

Ենթաժողովրդ 1

Կազմակերպության անվանումը	«Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏԶԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գյ. Սառնակունք, Գորիայք, Անգեղակոթ, Սպանդարյան, Իշխանասար, Բալաք, Լծեն, Շամբ, Շաքի, Տոլորս, Մուցք, Շաղատ, Բռնակոթ, Լոր, Աղիտու, Գետաթաղ, Սալվարդ, Աշոտավան
Ծրագրի տևողությունը	2012թ. օգոստոս-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը	«Թափանցիկ հանրային ծառայություն»
Դրամաշնորհի չափը	796.400 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	165.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	961.400 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Աջակցել Սիսիանի տարածաշրջանի 18 համայնքներում հանրային ծառայությունների ոլորտ տեղեկատվության մատչելիության ապահովմանը: Տեսանյութերի, քննարկումների միջոցով հասարակական հնչեղություն հաղորդել հանրային ծառայությունների մատուցման ոլորտի խնդիրներին, հանրությանը տեղեկացնել հանրային ծառայությունների էներգամատակարարման, ջրամատակարարման ոլորտներում ծառայության մատուցման վիճակին համապատասխան, օրենսդրությամբ:</p> <p>Ծրագրի արդյունք Սառնակունք, Գորիայք, Անգեղակոթ, Սպանդարյան, Իշխանասար, Բալաք, Լծեն, Շամբ, Շաքի, Տոլորս, Մուցք, Շաղատ, Բռնակոթ, Լոր, Աղիտու, Գետաթաղ, Սալվարդ, Աշոտավան համայնքներում իրականացվել է հետազոտություն հարցաթերթիկով հարցումներ բնակիչների հետ և հարցազրույցներ համայնքային իշխանության ներկայացուցիչների, հսկիչների հետ: Նկարահանվել է 2 տեսանյութ, որտեղ բնակիչ-սպառողներն իրենց դժգոհությունը կամ գոհունակությունն են հայտնում հանրային ծառայության ոլորտի մատուցման որակի մասին և տեղադրվել է gorispressclub.blogspot.com կայքէջերում, ծրագրից դուրս պատրաստվել են հոդվածներ, տեղադրվել gorispressclub.blogspot.com ու Hetq.am կայքում:</p>	

Ենթաժողովրդ 2

Կազմակերպության անվանումը	«Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏԶԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Գորայք, Տոլորս, Շաղաթ, Խոտ, Հարժիս
Ծրագրի տևողությունը	2013թ. հունիս-սեպտեմբեր
Ծրագրի անվանումը	«Մշակույթը որպես համայնքի առաջընթացի հնարավորություն»
Դրամաշնորհի չափը	621.700 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել թիրախ 5 համայնքների մշակութային կյանքի ակտիվացմանը՝ բարձրացնելով մշակութային ոլորտում ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակը:</p> <p>Ծրագրի արդյունք Իրականացվել է «Մշակութային գործունեության իրականացման հնտություններ» թեմայով երկօրյա դասընթաց ծրագրի թիրախ 5 համայնքների մշակույթի ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ նրանց կարողությունների զարգացման նպատակով: Մշակվել է թիրախ 5 համայնքների մշակույթի ոլորտի տիպային աշխատանքային պլան, պատրաստվել ծրագրի թիրախ 5 համայնքների մշակույթի ոլորտի աշխատակիցների աշխատանքային նկարագրերը: Թիրախ 5 համայնքներում ձևավորվել են նախաձեռնող խմբեր: Բոլոր համայնքներում կազմակերպվել և իրականացվել են «Մշակութային օրը համայնքում» թեմայով համայնքային միջոցառումներ:</p>	

Ենթաժողովրդի 3

Կազմակերպության անվանումը	«Սալվարդ» գյուղական զարգացման հիմնադրամ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏԶԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գյ. Աշոտավան, Բռնակոթ, Տոլորս, Աղիտու, Շամբ, Դարբաս, Լոր, Շաքի, Անգեղակոթ, Շաղաթ, Սառնակունք, Գորայք, Հարժիս, Խոտ, Հալիձոր, Շինուհայր, Քարահունջ համայնքներ
Ծրագրի տևողությունը	2013թ. մարտ-հունիս
Ծրագրի անվանումը	«Իրազեկ և առողջ համայնք»
Դրամաշնորհի չափը	702.567 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	190.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	892.567 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել համայնքներում սովորողների առողջության պահպանմանը և պետստենդերի ողջ ծավալով իրականացմանը:</p> <p>Ծրագրի արդյունք Ծրագրի իրականացման արդյունքում շահառու համայնքների դպրոցների տնօրենների կողմից բարձրացել է սովորողների առողջության պահպանման վերաբերյալ վերահսկողությունը, ցուցաբերվում է ավելի հետևողական վերաբերմունք: Սովորողների առողջության պահպանման վերաբերյալ իրազեկությունը բարձրացել է նաև ծնողների և համայնքաբնակների շրջանում, վերջիններս այսուհետ կպահանջեն ավելի որակյալ ծառայություններ:</p>	

Ենթաժողովրդի 4.

Կազմակերպության անվանումը	«Ասպարեզ» ՀԿ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏԶԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գյ. Գորայք, Խոտ, Աշոտավան, Հալիձոր
Ծրագրի տևողությունը	2013թ. մարտ-հունիս
Ծրագրի անվանումը	«Հանրային ծառայությունների բարելավում»
Դրամաշնորհի չափը	798.000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	603 000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1.401 000 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել ՀՀ Սյունիքի մարզի Խոտ, Հարժիս, Գորայք, Շաքի համայնքներում ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների բարելավման ֆոնդահայթայթման ռազմավարությունների մշակման և ներդրման գործընթացներին:</p> <p>Ծրագրի արդյունք Բարձրացվել է թիրախ համայնքների անդամների իրազեկությունը համայնքի տարեկան բյուջեի և քառամյա զարգացման ծրագրերի, համայնքում այլընտրանքային ֆոնդերի ներդրումների վերաբերյալ: Մշակվել են ֆոնդահայթայթման ռազմավարություններ ծառայությունների բարելավման ուղղությամբ: Համայնքի ավագանու կողմից հաստատվել է համայնքի ֆոնդահայթայթման ռազմավարությունները:</p>	

Ենթաժողովրդի 5

Կազմակերպության անվանումը	«Բարի երթ» ՀԿ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏԶԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, գյ. Շինուհայր, Հալիձոր, Շաքի
Ծրագրի տևողությունը	2013թ. մարտ-հունիս
Ծրագրի անվանումը	«Գրադարանները՝ մարդկային հոգու գանձարաններ»

Դրամաշնորհի չափը	1.060.100 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	543.800 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1.603.900 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Բարելավել համայնքների դպրոցների գրադարանների աշխատանքը՝ մշակելով և ներդնելով գրադարանների գործունեության նոր մեխանիզմներ, ժամանակակից տեխնոլոգիաներ:</p> <p>Ծրագրի արդյունք Գրադարանները ունեն գործունեության հստակ աշխատանքային և միջոցառումների պլան: Շահառու համայնքների գրադարանները հազեցվել են համակարգչային տեխնիկայով, միացել են համացանցին: Գրադարանների համար ձեռք են բերվել գրականություն, որի արդյունքում էլ ավելացել են գրադարաններից օգտվող աշակերտների, ուսուցիչների, ծնողների թիվը:</p>	

Ենթաձրագիր 6

Կազմակերպության անվանումը	«Սոսե» կանանց հիմնահարցեր ՀԿ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏԶԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Բռնակոթ, Անգեղակոթ, Շաքի, Շինուհայր, Քարահունջ
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-հունիս
Ծրագրի անվանումը	«Առողջ նախակրթարան»
Դրամաշնորհի չափը	1 202 700 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	672 800 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1 875 500 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել ՀՀ Սյունիքի մարզի 5 համայնքների նախակրթարաններում բժշկական սպասարկման ապահովմանը:</p> <p>Ծրագրի արդյունքը Բարձրացել է թիրախ 5 համայնքների իրազեկությունը նախակրթարան հաճախող երեխաների ստուգման կարգի, բժշկական ծառայությունից օգտվելու երեխաների իրավունքների, խնդրի կարևորության վերաբերյալ: Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների 5 գյուղական համայնքների ավագանիների կողմից քննարկվել և ընդունվել է որոշումներ՝ նախակրթարաններում բուժքույրերի հաստիքների անհրաժեշտության հարցը և բյուջեում կատարվել է փոփոխություն:</p>	

Ենթաձրագիր 7

Կազմակերպության անվանումը	«Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏԶԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս և Սիսիան
Ծրագրի տևողությունը	2013թ. ապրիլ-հունիս
Ծրագրի անվանումը	«Մշակույթը որպես համայնքի առաջընթացի հնարավորություն»
Դրամաշնորհի չափը	799.000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	430.600 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1 229 600 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել համայնքների մշակութային կյանքի ակտիվացմանը, միջհամայնքային մշակութային համագործակցության զարգացմանը՝ բարձրացնելով մշակութային ոլորտում ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակը:</p> <p>Ծրագրի արդյունքը Իրականացվել է թիրախ 4 համայնքների մշակույթի ոլորտի ներկայացուցիչների կարողությունների զարգացում: Համայնքային մշակութային միջոցառումների, ուսուցողական խմբերի, ակումբների աշխատանքների պլանավորում և կազմակերպում: Պատրաստվել և համայնքի ղեկավարին, ավագանու անդամներին և ՀՀ Սյունիքի մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնին է ներկայացվել «Մշակութային զարգացում» փաթեթ-առաջարկի:</p>	

Ենթաձրագիր 8

Կազմակերպության անվանումը	Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏՁԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Աշոտավան, Հալիձոր և Շինուհայր համայնքներ
Ծրագրի տևողությունը	2013թ. մարտ-հունիս
Ծրագրի անվանումը	«Հնուտ Ձեռքերը դպրոցում»
Դրամաշնորհի չափը	799.000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	680.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1.479.000 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Ձարգացնել դպրոցի կառավարման մարմինների միջև համագործակցությունը՝ խթանելով համատեղ աշխատանքի մեխանիզմները:</p> <p>Ծրագրի արդյունքը Սյունիքի մարզի Սիսիանի թիվ 5, Աշոտավան, Հալիձոր և Շինուհայր համայնքների դպրոցներում ստեղծվել են ԱԽ-ների «Հնուտ Ձեռքեր» ակումբներ և այդ ակումբներին կից աջակցող խմբեր: Ձարգացել են ԱԽ-ների «Հնուտ Ձեռքեր» ակումբների անդամների կարողությունները, նախաձեռնողականությունը, երևակայությունը, ստեղծագործական մոտեցումները: Բարձրացել է ԿԳՆ, մարզային և տեղական իշխանությունների հետաքրքրությունը ԱԽ-ների ակումբների գործունեության նկատմամբ:</p>	

Ենթաժողովրդ 9

Կազմակերպության անվանումը	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ Սիսիանի մասնաճյուղ
Դոնոր կազմակերպությունը	ՎՎ Սիսիանի ՏՁԾ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Դարբաս, Բռնակոթ, Անգեղակոթ, Շաքի համայնքներ
Ծրագրի տևողությունը	2013թ. մարտ-հունիս
Ծրագրի անվանումը	«Համայնքային ծառայությունների բարելավում»
Դրամաշնորհի չափը	548,000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	770 ,000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	1,318,000 ՀՀ դրամ
<p>Ծրագրի նպատակը Նպաստել ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս, Բռնակոթ, Անգեղակոթ, Շաքի համայնքներում համայնքի անդամների իրավունքների պաշտպանությանը համայնքում մատուցվող ծառայությունների ոլորտում:</p> <p>Ծրագրի արդյունքը Բարձրացել է համայնքում կամավորության մակարդակը ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների բարելավման գործում: Բարձրացել է համայնքի անդամների իրազեկությունը ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի և համայնքի անդամների իրավունքների վերաբերյալ: Բարձրացել է համայնքի անդամների մասնակցությունը ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների վերահսկման գործում: Մշակվել են ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների բարելավման նոր ծառայությունների վերաբերյալ կանոնակարգեր:</p>	

🚩 Ակտիվ քաղաքացիներ-զարգացած համայնքներ

Պայմանագրի համարը	ARM/C2-E-L-2012-22
Դոնոր կազմակերպությունը	Քաունթերփարթ ինթերնեշնլ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Ծրագրի տևողությունը	2012թ.մարտ -հունիս
Դրամաշնորհի չափը	9 696 900 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1 902 400 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	11 599 300 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Նպաստել ՀՀ թիվ 38 ընտրատարածքում /Սյունիքի մարզի Կապանի և Մեղրու տարածաշրջաններ/ ԱԺ ընտրությունների օրինականությանը՝ խթանելով քաղաքացիների իրազեկությունը և ակտիվ մասնակցությունը:

Համագործակից կազմակերպություն

- «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն»
- « Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն»
- «Կամք+» թերթ

Շահառուներ

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի և Մեղրիի տարածաշրջանների համայնքների բնակիչներ

Արդյունքներ

2012թ. մայիսի 6-ին ՀՀ ԱԺ-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԳՈՒՄ ՀԿ-ն «Ակտիվ քաղաքացիներ-գարգացած համայնք» նախաձեռնությամբ Սյունիքի մարզի թիվ 38 ընտրատարածքում/Կապանի և Մեղրու տարածաշրջաններ/ իրականացրեց ԱԺ-ի ընտրությունների ընթացքի դիտարկում:

Ծրագրի իրականացման փուլում ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից հավաքագրել են ՀՀ թիվ 38 ընտրատարածքի /Կապան և Մեղրի/ տարածաշրջաններից երիտասարդներ, դիտորդի վերապատրաստման դասընթացներ անցել՝ ԱԺ-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու համար: Ծրագրի իրականացման ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն համագործակցության հուշագրեր է կնքել «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» և «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ների հետ Կապանի և Մեղրիի տարածաշրջաններում ծրագրի իրականացման ընթացքը կազմակերպելու նպատակով: ԱԺ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Կապանում և Մեղրիում ձևավորվել են դիտորդական խմբեր, որոնց համար ԳՈՒՄ ՀԿ-ն իրականացրել է վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման դասընթացներից հետո կազմակերպվել է ԳՈՒՄ ՀԿ-ի դիտորդական խմբի հավատարմագրումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Արդյունքում ԿԸՀ-ի կողմից հավատարմագրվել է Մեղրիում 30, Կապանում՝ 81 դիտորդ՝ ստանալով դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքը փաստող վկայականներ:

2012թ. մայիսի 6-ին՝ ՀՀ ԱԺ-ի ընտրությունների օրը, ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից վերապատրաստված 111 դիտորդ դիտարկել է ԱԺ-ի ընտրությունների ընթացքը Սյունիքի մարզի թիվ 38 ընտրատարածքում: Թիվ 38 ընտրատարածքը ընդգրկում է 76 ընտրատեղամաս, որից 16-ը տեղակայված է Մեղրիի տարածաշրջանի համայնքներում, 60-ը՝ Կապանի տարածաշրջանի համայնքներում: 30 դիտորդ դիտորդական առաքելություն է իրականացրել Մեղրիի տարածաշրջանում ընդգրկված 16 ընտրատեղամասում, Կապանի տարածաշրջանի 60 ընտրատեղամասում ընտրությունների ընթացքը դիտարկել է 81 դիտորդ:

Ընտրությունների օրը ԳՈՒՄ ՀԿ-ի ընտրական ծրագրի աշխատակազմը և «Կամք+» թերթի խմբագրակազմը շրջել են թիվ 38 ընտրատարածքի գրեթե բոլոր ընտրատեղամասերում՝ դիտարկելով ինչպես ընտրությունների ընթացքը, այնպես էլ դիտորդների աշխատանքը:

Դիտորդները մեծ պատասխանատվությամբ են իրականացրել իրենց աշխատանքը, ամբողջ օրը համապատասխան հերթափոխով աշխատել են ընտրատեղամասերում, արագ արձագանքել բոլոր խախտումներին, որոնք արագ տարածվել հետևյալ կայքերի միջոցով՝ www.iditord.org, www.irazek.am :

«Ակտիվ քաղաքացիներ-գարգացած համայնքներ» նախաձեռնության շրջանակներում ԳՈՒՄ ՀԿ-ն իր գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ 2011թ. ընթացքում Սյունիքի մարզի Սիսիանի, Գորիսի, Կապանի, Մեղրիի տարածաշրջանների համայնքներում համայնքային ֆորումների, հանդիպումների արդյունքում բացահայտված համայնքային հիմնախնդիրները հասցեագրել է թիվ 37 և թիվ 38 ընտրատարածքներում ԱԺ-ի ընտրությունների ժամանակ առաջադրված թեկնածուներին և կուսակցությունների ներկայացուցիչներին: ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից այդ հիմնախնդիրներից առանձնացվել են խնդիրներ, որոնք առավել ընդհանուր են Սյունիքի մարզի Գորիսի, Սիսիանի, Կապանի և Մեղրիի տարածաշրջանների համայնքների համար:

ԳՈՒՄ ՀԿ-ն համոզված էր, որ Սյունիքի մարզի համայնքներում վերհանված հիմնախնդիրների փաթեթը ԱԺ-ի ընտրություններին մասնակից կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի և մեծամասնական ընտրակարգով

առաջադրված թեկնածուների ուշադրությանը ներկայացնելով՝ հնարավոր կլինի նպաստել, որ մոտ ապագայում ձևավորվելիք օրենսդիր իշխանության միջոցով նշված հարցերից շատերն իրենց լուծումները գտնեն:

Հիմնախնդիրների լուծման վերաբերյալ կուսակցությունների և թեկնածուների դիրքորոշումները տպագրվել են «Կամք+» թերթի ընտրական երկրորդ համարում, որը տպագրվել է 2000 տպաքանակով և տարածվել ՀՀ Սյունիքի մարզի շահառու համայնքների բնակչության շրջանում:

Թերթի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ <http://kamqplus.blogspot.com/>:

«Ակտիվ քաղաքացիներ-գարգացած համայնքներ 2»

Պայմանագրի համարը	ARM-C2-E-S-2013-08
Դոնոր կազմակերպությունը	Քաունթերփարթ ինթերնեշնլ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ
Ծրագրի տևողությունը	2012թ.-դեկտեմբեր-2013թ. փետրվար
Դրամաշնորհի չափը	7,772,570 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1,562,450 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	9,335,020 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Իրականացնել դիտորդական առաքելություն ՀՀ թիվ 37 և 38 ընտրատարածքների թվով 156 ընտրատարածքներում/Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Կապան և Մեղրի տարածաշրջաններ/:

Համագործակից կազմակերպություն

- «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
- «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
- Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ
- «Հարմոնիա» ՀԿ
- «Կամք+» թերթ

Շահառուներ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Կապան և Մեղրի տարածաշրջանների համայնքների բնակիչներ

Արդյունքներ

ԳՈՒՄ ՀԿ-ն «Ակտիվ քաղաքացիներ-գարգացած համայնք 2» նախաձեռնության շրջանակներում 2013թ. ՀՀ նախագահական ընտրությունների օրը Սյունիքի մարզի թիվ 37 և թիվ 38 ընտրատարածքներում ընդգրկված 156 ընտրատեղամասերում իրականացրել է դիտորդական առաքելություն:

Կապանի և Մեղրու տարածաշրջաններում դիտորդների հավաքագրման և ծրագրի արդյունավետ իրականացման համար ԳՈՒՄ ՀԿ-ն «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» և «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ների հետ նախապես ձևավորված համագործակցությունն ամրագրել է հուշագրով:

ԳՈՒՄ ՀԿ-ի նշյալ համայնքներում արդեն իսկ ձևավորված գործընկերության շնորհիվ Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Կապանի և Մեղրի տարածաշրջաններում հավաքագրվել է 223 երիտասարդ, ովքեր ԳՈՒՄ ՀԿ-ի փորձառու դասընթացավարների կողմից անցել են վերապատրաստման դասընթացներ, պատրաստվել որպես որակյալ դիտորդներ:

Վերապատրաստման դասընթացներից հետո ԳՈՒՄ ՅԿ-ի դիտորդական խումբը մասնակցել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի/ԿԸՅ կողմից կազմակերպված ստուգարքին, հավատարմագրվել՝ ստանձնելով ընտրական գործընթացը դիտարկելու ու հնարավոր խախտումներն արձանագրելու, դրանք կանխելու բարդ ու պատասխանատու գործընթացը:

ԿԸՅ-ի կողմից հավատարմագրվել է ԳՈՒՄ ՅԿ-ի կողմից վերապատրաստած 223 դիտորդ: 2013թ. փետրվարի 18-ին՝ ՀՀ նախագահական ընտրությունների օրը, ԳՈՒՄ ՅԿ-ի 223 դիտորդ Սյունիքի մարզի թիվ 37 և 38 ընտրատարածքների 156 ընտրատեղամասում դիտարկել է նախագահական ընտրությունների ողջ ընթացքը:

Ընտրությունների օրը ԳՈՒՄ ՅԿ-ի ընտրական ծրագրի աշխատակազմը և «Կամք+» թերթի խմբագրակազմը շրջել են թիվ 37 և թիվ 38 ընտրատարածքի գրեթե բոլոր ընտրատեղամասերում՝ դիտարկելով ինչպես ընտրությունների ընթացքը, այնպես էլ դիտորդների աշխատանքը: Լրագրողներն աշխատել են ինչպես ընտրատեղամասերում, այնպես էլ դրսում, իրականացրել հարցարարույցներ ընտրական հանձնաժողովների նախագահների, վստահված անձանց, համայնքաբնակների հետ:

Դիտորդները մեծ պատասխանատվությամբ են իրականացրել իրենց աշխատանքը, ամբողջ օրը համապատասխան հերթափոխով աշխատել են ընտրատեղամասերում՝ արձանագրելով բոլոր խախտումները:

Դիտորդները սպասել են ընտրությունների արդյունքների ամփոփմանը և ձեռք բերել համապատասխան արձանագրությունների քաղվածքները:

Ընտրություններից հետո դիտորդները տարածքային համակարգողներին են հանձնել իրենց հաշվետվություններն ու ընտրությունների արդյունքների ամփոփման արձանագրությունների քաղվածքները, իսկ արձանագրած ընտրախախտումներն ու ընտրությունների ընթացքի մասին իրենց կարծիքներն ու տպավորությունները տպագրվել են «Կամք+» թերթի հատուկ թողարկման մեջ, որի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ «Կամք+» թերթի բլոգից՝ http://www.gumiso.am/uploads/Election_2013.pdf:



ՏԻՍ ՈԼՈՐՏԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Պայմանագրի համարը	ARM/G3/GCSO/S/LGT/2012/01
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան գրասենյակ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ ողջ տարածք
Ծրագրի տևողությունը	2011թ. դեկտեմբեր -2012թ. սեպտեմբեր
Դրամաշնորհի չափը	8 670 960 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1 931 320 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	10 602 280 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Կազմակերպել և իրականացնել վերապատրաստման փորձնական դասընթացներ տեղական ինքնակառավարման մարմինների համար Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածներում:

Ծրագրի շահառուները

Ծրագրի շահառուներն են Քաունթերփարթ ինթերնեշնլի համագործակից 43 համայնքների համայնքապետներ, համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, ավագանու անդամներ

Արդյունքներ

Ծրագիրն ընդգրկում էր Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային մասերը, և աշխատանքները համակարգվում էին Քաունթերփարթի ինթերնեշնլի գործընկեր կազմակերպությունների կողմից /ԳՈՒՄ ՅԿ, ՅԿ կենտրոն,

ՔԶՅԴ/։ Վերջիններիս ներգրավվածությունը հնարավորություն տվեց ծածկել Հայաստանի բոլոր մարզերը ընդգրկող 43 համայնքները։

Ծրագրի առաջին փուլում գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվել է տեղական դասընթացավարների ընտրություն, որի արդյունքում ՀՀ-ի կենտրոնական, հյուսիսային և հարավային հատվածներում պատրաստվել է տեղական փորձագետ-դասընթացավարների ցանկ /հյուսիսային հատվածում՝ 23, կենտրոնականում՝ 22 և հարավայինում՝ 21 փորձագետ-դասընթացավար/։

Ծրագրի ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ի և գործընկեր կազմակերպությունների կողմից դիտարկվել են ՏԻՄ կարողությունների զարգացմանն ուղղված թեմատիկ մոդուլները։

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Դասընթաց դասընթացավարների համար»/(ToT) թեմայով 8-ժամյա երկօրյա դասընթաց տարբեր բնագավառների տեղական մասնագետների (ինչպես օրինակ՝ իրավաբանների, ֆինանսական մասնագետների, հասարակայնության հետ կապերի մասնագետների, կադրերի պատասխանատուների և այլոց) համար։

Դասընթացները 3 էին և ընդգրկում էին Հայաստանի հարավային, կենտրոնական և հյուսիսային հատվածները։ Դասընթացները կազմակերպվել են ԳՈՒՄ ՀԿ-ի, ՀԿ կենտրոնի և ՔԶՅԴ-ի գրասենյակներում։ Դասընթացներին մասնակցել են հարավում՝ 20, հյուսիսում՝ 18, կենտրոնում՝ 18 մասնակիցներ։

ՏԻՄ կարողությունների զարգացման դասընթացների թիրախային խմբերը ՔԻ-ի շահառու համայնքների համայնքապետարանների ներկայացուցիչներն էին։

Ծրագրի իրականացման ընթացքում 2012թ. փետրվար և սեպտեմբեր ամիսներին իրականացվել են Տեղական ինքնակառավարման և համակարգչային հմտությունների վերաբերյալ վերապատրաստման պիլոտային դասընթացներ՝ Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածներում։ Իրականացվել է պիլոտային կողմնորոշիչ դասընթաց ավագանու անդամների համար։

Դասընթացներն իրականացվել են «Ուրբան» հիմնադրամի կողմից մշակված տեղական ինքնակառավարման գործառնության ոլորտների վերաբերյալ, համակարգչային վերապատրաստման, ավագանու անդամների կողմնորոշիչ դասընթացների մոդուլներով, որից հետո ԳՈՒՄ ՀԿ-ն 2012թ. փետրվարի 15-ից սեպտեմբերի 15-ը կազմակերպել է մոդուլների փորձարկման դասընթացներ Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածներում։ Մոդուլների փորձարկման դասընթացներն իրականացրել են ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից ընտրված և ՔԻ-ի կողմից հավանության արժանացած դասընթացավարները։

ԳՈՒՄ ՀԿ-ի, ՀԿ կենտրոնի և ՔԶՅԴ-ի համակարգմամբ Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածներում իրականացվել են վեց 5-օրյա վերապատրաստման փորձնական դասընթացներ տեղական ինքնակառավարման ոլորտում և 2-օրյա դասընթացներ համակարգչային հմտությունների վերաբերյալ։

Վերոնշյալ դասընթացներն իրականացվել են Հայաստանի հյուսիսային հատվածի՝ Արմավիրի, Կոտայքի, Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Լոռու մարզերի՝ Լուկաշին, Կոտայք, Մարալիկ, Իջևան, Արագած, Սուևեր, Ալավերդի, Դեբեդ համայնքների համայնքապետների համար, ինչպես նաև Հայաստանի կենտրոնական և հարավային մարզերի՝ Վայոց Ձոր, Սյունիք, Գեղարքունիք և Արագածոտն, Գետափ, Արծվանիկ, Խնձորեսկ, Աշոտավան, Լճաշեն, Սուևեր համայնքների ավագանիների, համայնքապետարանների աշխատակիցների համար։

Ծրագրի արդյունքում ծրագրային թիմի կողմից պատրաստվել են 20 հոգանոց բաղկացած փորձագետ-դասընթացավարների խմբեր՝ Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածներում, ովքեր ծրագրի ընթացքում վերապատրաստվելուց հետո մատուցել են ՏԻՄ-երի, ավագանիների կարողությունների զարգացման և համակարգչային դասընթացներ։

«ՏԻՄ–երի համար վերապատրաստման դասընթացների իրականացում»

Պայմանագրի համարը	ARM-C3-GCSO-S-LGT-2013-02
Դոնոր կազմակերպությունը	Քաունթերփարթ ինթերնեշնլ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ
Ծրագրի տևողությունը	2013թ. մայիս-օգոստոս
Դրամաշնորհի չափը	6.497.640 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1.340.500 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	7.838.140 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բարելավել Հայաստանի հարավային մարզերի համայնքների ՏԻՄ-երի ինստիտուցիոնալ կարողությունները՝ կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ համայնքապետների, համայնքի ավագանիների և համայնքապետարանների աշխատակազմերի ներկայացուցիչների համար:

Համագործակից կազմակերպություն

- «Սիսիանի համայնքների միություն»

Հահառուներ

Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի ՔԻ-ի շահառու՝ Շինուհայր, Հալիծոր, Քարահունջ, Սիսիան, Սպանդարյան, Կապան, Մեղրի, Վայք, Գոմք, Բարձրունի համայնքների ՀԱԽ-երի և ՏԻՄ-երի ներկայացուցիչներ

Արդյունքներ

Ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ՀԿ-ի և «Սիսիանի համայնքների միության» համագործակցությամբ իրականացվել են «Ավագանու կարողությունների զարգացում» թեմայով երկօրյա կողմնորոշիչ դասընթացներ Սյունիքի մարզի Քարահունջ, Շինուհայր, Հալիծոր, Սիսիան, Սպանդարյան, Կապան, Մեղրի և Վայոց Ձորի մարզի Վայք, Բարձրունի ու Գոմք համայնքների նորընտիր ավագանու անդամների համար:

Իրականացվել են ՏԻՄ վերապատրաստման հնգօրյա դասընթացներ և համակարգչային վերապատրաստման երկօրյա դասընթացներ վերոնշյալ համայնքների համայնքապետների և ՏԻՄ-երի ներկայացուցիչների համար:

Բոլոր դասընթացներն իրականացրել են ՏԻՄ կարողությունների զարգացման ծրագրի առաջին փուլի ժամանակ ՔԻ-ի կողմից համապատասխան վերապատրաստում անցած փորձառու դասընթացավարները: Դասընթացներն իրականացվել են 2012 թ. ՔԻ-ի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի մշակած ուսումնական ծրագրերով:

Ծրագրի իրականացման ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն համագործակցել է շահառու բոլոր համայնքների համայնքապետարանների, միջհամայնքային միավորումների/«Սիսիանի համայնքների միություն»/ և տարածաշրջանում իր գործընկեր ՀԿ-ների/«Կապանի կանանց զարգացման ռեսուրս կենտրոն», «Մեղրու կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» և կրթական կազմակերպությունների/Սիսիանի թիվ 3 ավագ դպրոց, Վայքի ավագ դպրոց/ հետ, որոնք աջակցել են ԳՈՒՄ ՀԿ-ին դասընթացների իրականացման համար համապատասխան տարածքի տրամադրման և ընդմիջումների կազմակերպման աշխատանքներում:

Ծրագրի արդյունքում Հայաստանի հարավային մարզերի՝ Սյունիք և Վայոց Ձոր, ՔԻ շահառու 14 համայնքում վերապատրաստվել է 62 նորընտիր ավագանու անդամ և 75 ՏԻՄ ներկայացուցիչ: Վերապատրաստում անցած բոլոր մասնակիցներին տրվել են ուսումնական ձեռնարկներ և վերապատրաստումը փաստող վկայականներ:

ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից պատրաստվել է ծրագրի իրականացման ընթացքը լուսաբանող «Կամք+» թերթի հատուկ համար, որն անդրադարձել է նաև Հայաստանի կենտրոնական և հյուսիսային մարզերի՝ ՔԻ-ի շահառու համայնքներում ԳՈՒՄ ՀԿ-ի գործընկեր «ՀԿ կենտրոնի» և «Արմավիրի զարգացման» կենտրոնի կողմից իրականացված ՏԻՄ-երի կարողությունների զարգացման ծրագրին: Թերթի էլեկտրոնային տարբերակը կարող եք գտնել հետևյալ հղումով՝ <http://kamqplus.blogspot.com/>:

🚩 «ՏԻՄ-երի վերապատրաստման դասընթացների իրականացում 2»

Պայմանագրի համարը	ARM-C3-GCSO-S-LGT-2014-02
Դոնոր կազմակերպությունը	Քառուներփարթ ինթերնեշնլ

Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ
Ծրագրի տևողությունը	2013թ. դեկտեմբեր-2014թ. հունիս
Դրամաշնորհի չափը	8.099.900 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	3.111.760 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	11.211.660 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բարելավել Հայաստանի հարավային մարզերի համայնքների ՏԻՄ-երի և ՀԱԽ-երի ինստիտուցիոնալ կարողությունները՝ կազմակերպելով ՏԻՄ-երի համար խորացված վերապատրաստման դասընթացներ և իրականացնելով կարողությունների զարգացման նպատակային ծրագրեր:

Համագործակից կազմակերպություն

- «Սիսիանի համայնքների միություն»

Շահառուներ

Հայաստանի հարավային մարզերի՝ ՔԻ-ի շահառու 14 համայնքի ՀԱԽ-երի և ՏԻՄ-երի ներկայացուցիչներ

Արդյունքներ

2013թ. դեկտեմբերին ԳՈՒՄ ՀԿ-ն ՔԻ-ի ֆինանսական աջակցությամբ սկսել է իրականացնել «ՏԻՄ-երի վերապատրաստման դասընթացների իրականացում 2» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- ✓ իրականացնել ՏԻՄ ոլորտի 4 հնգօրյա և համակարգչային հմտությունների 4 երկօրյա վերապատրաստման դասընթացներ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի՝ ՔԻ շահառու 14 համայնքի ՀԱԽ-երի ներկայացուցիչների համար
- ✓ իրականացնել ՏԻՄ ոլորտի 5 մեկօրյա խորացված դասընթացներ վերոնշյալ համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչների համար
- ✓ տրամադրել ՏԻՄ-երի կարողությունների զարգացման փոքր դրամաշնորհներ
- ✓ իրականացնել փորձի փոխանակման նպատակային ծրագրեր:

Ծրագիրը գտնվում է իրականացման փուլում և վերջնական արդյունքները կներառվեն ԳՈՒՄ ՀԿ-ի 2014թ. տարեկան հաշվետվության մեջ:

«Առողջության պահպանման իմ իրավունքը»

Պայմանագրի համարը	ARM-DG-HRRL-2014-05
Դոնոր կազմակերպությունը	Քաունթերփարթ ինթերնեշնլ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ
Ծրագրի տևողությունը	2013թ. հոկտեմբեր – 2014թ. մայիս
Դրամաշնորհի չափը	7.523.320 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1.981.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	9.504.320 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Նպաստել գյուղական համայնքների բնակաչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը:

Շահառուներ

ՀՀ Սյունիքի մարզի 7/Շինուհայր, Հալիծոր, Քարահունջ, Խնծորեսկ, Սպանդարյան, Աշոտավան, Արծվանիկ/ Տավուշի մարզի 3/Այգեհովիտ, Գանձաքար, Լուսածոր և Վայոց Ձորի մարզի 5 գյուղական համայնքների/ Գոմք, Բարձրունի, Գետափ, Արենի, Հերիեր/ բնակիչներ

Արդյունքներ

ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի ծրագրի շահառու 12 համայնքներում իրականացվել են ֆոկլուս-խմբային քննարկումներ և սոցիոլոգիական հարցումներ՝ բացահայտելու գյուղական համայնքներում բուժկետերի կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու հասանելիությունն ապահովող կարիքները:

Ֆոկլուս-խմբային քննարկումների և սոցիոլոգիական հարցումների արդյունքների հիման վրա ծրագրի վերահսկման և գնահատման/ՎԳ մասնագետի կողմից պատրաստել է վերլուծություն:

2013թ. դեկտեմբերին Գորիս և Վայք քաղաքներում կազմակերպվել են մարզային ֆորումներ, որոնց մասնակցել են շահառու համայնքների ՀԱԽ-երի ներկայացուցիչներ, բուժկետերի, ամբուլատորիաների բժիշկներ և բուժաշխատողներ Սյունիքի և Վայոց Ձորի մարզպետարանների առողջապահության վարչության ներկայացուցիչներ: Մարզային ֆորումները նպատակ ունեին ծրագրի շահագրգիռ կողմերին ներկայացնել ֆոկլուս-խմբային քննարկումների և սոցիոլոգիական հարցումների վերլուծությունների արդյունքները և հավաքագրվել վերհանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ տեղական, մարզային և ազգային մակարդակներում: Հավաքագրված առաջարկությունների հիման վրա ԳՈԻՄ ՀԿ-ի կողմից կատարաստվի առաջարկությունների փաթեթ և կներկայացվի համապատասխան ոլորտում որոշումներ կայացնողներին:

Ծրագիրը գտնվում է իրականացման փուլում և վերջնական արդյունքները կներառվեն ԳՈԻՄ ՀԿ-ի 2014թ. կարեկան հաշվետվության մեջ:

«Պաշտպանված լինելու իմ իրավունքը»

Պայմանագրի համարը	SG-GORIS
Դոնոր կազմակերպությունը	«Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության հայկական մասնաճյուղը
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս
Ծրագրի տևողությունը	2013թ. դեկտեմբեր-2014թ. ապրիլ
Դրամաշնորհի չափը	1.600.000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1.511.520 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	3.111.520 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բացահայտել անչափահասների նկատմամբ կիրառվող բռնությունները, նպաստել դրանց կանխարգելմանը և իրենց իրավունքների վերաբերյալ անչափահասների իրազեկության բարձրացմանը:

Համագործակից կազմակերպություն

- ՎՎ Հայաստանի Սիսիանի և Կապանի ՏՁԾ-ներ
- Սյունիքի ԱԽ ցանց

Շահառուներ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի, Գորիսի և Կապանի տարածաշրջանների 32 համայնքի անչափահասներ

Արդյունքներ

Ծրագրի համակարգողի կողմից հստակեցվել են շահառու դպրոցների աշակերտների, համայնքաբնակների թիվը, պատրաստվել շահառուների ցանկ:

ԳՈՒՄ ՀԿ Վ/Գ մասնագետի կողմից պատրաստվել է հարցաթերթ, որով իրականացվել են հարցումներ շահառու դպրոցների 6-12-րդ դասարանների աշակերտների, ուսուցիչների և համայնքաբնակների շրջանում /ծնողներ, այլ անդամներ/ պարզելու երեխաների նկատմամբ կիրառվող բռնության դեպքերը, ինչպես նաև հարցվողների դիրքորոշումը երեխաների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների նկատմամբ:

ԳՈՒՄ ՀԿ-ն կազմակերպել է հանդիպում, որի ժամանակ ծրագրի փորձագետը իրազեկել է Սյունիքի ԱԽ ցանցի անդամներին հարցաթերթը ճիշտ լրացնելու, հարցում իրականացնելու սկզբունքներին, կանոններին և նրբություններին, այնուհետև ցանցի անդամների օգնությամբ հարցաթերթերը բաժանվել են համայնքներին՝ ըստ նախապես հստակեցված համայնքաբնակների թվի:

Ծրագիրը գտնվում է իրականացման փուլում, վերջնական արդյունքները կամփոփվեն ԳՈՒՄ ՀԿ-ի 2014թ. կարեկան հաշվետվության մեջ:

«Ես կարող եմ»

Պայմանագրի համարը	SCI84000165/SG-03950
Դոնոր կազմակերպությունը	«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս
Ծրագրի տևողությունը	2013թ. դեկտեմբեր -2014թ. օգոստոս
Դրամաշնորհի չափը	11.729.000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1.587.000 ՀՀ դրամ
Համագործող կազմակերպության /ընկերության ներդրում	5.228.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	18.544.000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց /ՀՈՒԱ/ ներգրավմանը աշխատանքային գործունեության մեջ և հասարակական կյանքում:

Համագործակից կազմակերպություն

- «Ջբաղվածության պետական ծառայություն» գործակալության Գորիսի զբաղվածության տարածքային կենտրոն,
- Սոցիալական ապահովության պետական ծառայության Գորիսի տարածքային կենտրոն,
- Ներառական կրթության աջակցության ցանց/ՆԿԱՑ

Ծրագրի շահառուները – Հաշմանդամություն ունեցող անձիք

Արդյունք

- ԳՈՒՄ ՀԿ-ն ծրագրի իրականացումը սկսել է 2013թ. դեկտեմբերից: Ծրագրով նախատեսված է՝
- ✓ գնահատել ՀՈՒԱ-ների անհատական կարիքները՝ հնարավոր աշխատանքի ոլորտները հստակեցնելու նպատակով,
 - ✓ զարգացնել ՀՈՒԱ-ների աշխատանքային, հասարակական-քաղաքական գործունեության կարողություններն ու հմտությունները,
 - ✓ ՀՈՒԱ-ներին տեղավորել աշխատանքի և ներգրավել հասարակական գործունեության մեջ:
- Ծրագիրը գտնվում է իրականացման փուլում, վերջնական արդյունքները կներառվեն 2014թ. տարեկան հաշվետվության մեջ:

✚ **ԳՈՒՄ ՍՊԸ-ի 2012-2013ԹԹ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԳՈՒՄ ՀԿ-ն 2003 թվականին հիմնադրել է ԳՈՒՄ ՍՊԸ-ն, որի 100% բաժնետերը ԳՈՒՄ ՀԿ-ն է: ՍՊԸ-ն ստեղծվել է կազմակերպության ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով:

2005 թվականից սկսած ԳՈՒՄ ՍՊԸ-ն մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- դասընթացներ,
- խորհրդատվություններ,
- կազմակերպությունների կարողությունների գնահատում,
- համակարգչային ծառայություններ,
- ռեսուրս կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններ,
- հրատարակչություն:

ԳՈՒՄ ՍՊԸ-ն մատուցում է ծառայություններ ԳՈՒՄ ՀԿ-ի ռազմավարական նպատակային խմբերի (քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, Տեղական ինքնակառավարման մարմիններ, կրթական ոլորտի հաստատություններ, համայնքի անդամներ) համար:

✚ **Կրթական ոլորտի դասընթացներ ու խորհրդատվություններ**

- Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների կարողությունների զարգացում
- Դպրոցի ղեկավարում և կառավարում
- Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության ընթացակարգերի մշակում և ներդրում
- Աշակերտական խորհուրդների մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացներին
- Ծնողական խորհուրդների մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացներին
- Դպրոցի զարգացման ծրագրերի կազմում
- Ֆինանսական կայունության ապահովում, արտաբյուջետային ֆոնդերի ստեղծում
- Աշակերտական խորհուրդների ներքին և արտաքին հաղորդակցման կարողությունների զարգացում
- Ծրագիր-առաջարկների նախագծման հմտություններ և այլն:

✚ **Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) ուղղված ծառայություններ**

- **Դասընթացներ և խորհրդատվություններ**
 - «ԴԿՏՀ-ի տեղակայում և ուսուցում»
 - «Դպրոցի ժողովրդավար կառավարում. աշակերտական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարմանը»
 - «Դպրոցի ժողովրդավար կառավարում. ծնողական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարմանը»
 - «Աշակերտական խորհրդի գործունեության տարեկան գործողությունների պլանի մշակում»
 - «Աշակերտական խորհրդի կարողությունների զարգացում. աշխատանքների պլանավորման և ծրագիր-առաջարկների պատրաստման հմտություններ»
 - «Արդյունավետ աշակերտական խորհուրդների ցանցի ձևավորում, կանոնակարգի և աշխատանքային պլանի մշակում»
 - «Հանրակրթական դպրոցների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների մեթոդներ»
 - «Ուսանողների զբաղվածության հնարավորությունների և արտադրական պրակտիկայի խթանում»
 - «Տեղական դիտորդները ԱԺ 2012 ընտրություններում»
 - «Օրենսդրական օրակարգի քննարկման օր աշխատանքային խմբի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի շուրջ»
 - «Համայնքային նախաձեռնությունների նախագծում և իրականացում»
 - «Ծրագիր-առաջարկ պատրաստելու հմտություն»
 - «Վերահսկում և գնահատում»
 - «Համայնքային մոբիլիզացում»
 - «Առաջնորդություն և կառավարում»
 - Համայնքային զարգացում և մոբիլիզացում,
 - «Կամավորների ներգրավում և կառավարում»

- «Ծրագրային համառոտագրի և առաջարկների մշակում»
- «Քաղաքացիական հասարակությունը և ՀԵՆԱ-ների դերը համայնքում»
- «Հաղորդակցություն և առաջնորդման հմտություններ»
- «Ֆոնդահայթայթում»
- «Անդամություն, անդամության զարգացում»
- «a High tech մարքեթինգ և վաճառքների հմտություններ»
- «Ներկայացման հմտություններ»
- «Շահերի պաշտպանության գործընթացի առանձնահատկությունները գործընկերությամբ իրականացվող ծրագրերում»

✚ **Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ ու խորհրդատվություններ**

- ՏԻՄ-ի օրենսդրություն
- Առաջնորդություն
- Ռազմավարական պլանավորում
- Հանրային ծառայությունների մատուցում և որակի գնահատում
- Համագործակցություն և գործընկերություն
- Հաղորդակցում. Աշխատանք ԶԼՄ-ների հետ (PR)
- Համայնքի բյուջե
- համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարում
- Գնումների գործընթացի կազմակերպում
- Մասնակցային և թափանցիկ կառավարում
- Ավագանու անդամների կարողությունների զարգացում և այլն:
- «ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների բարելավման քարոզարշավներում հանրային քաղաքականության մշակման մեթոդներ»
- «ՏԻՄ լիազորություններ. համայնքի քառամյա զարգացման պլան, համայնքային բյուջե և տարեկան աշխատանքային պլան: ՏԻՄ աշխատանքների համայնքային մասնակցության մեթոդներ»

✚ **«Կամք+» թերթ**

2006թ. հուլիսի 14-ին ԳՈՒՄ ՀԿ-ի նախաձեռնությամբ հիմնադրվեց «Կամք+» թերթը: Նույն թվականի սեպտեմբերին լույս տեսավ թերթի անդրանիկ համարը:

«Կամք+» թերթի նպատակներն են՝

- ապահովել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը,
- շահառուներին հնարավորություն տալ թերթի միջոցով իրենց խոսքը ուղղել հասարակությանն ու իրենց շահառուներին,
- խթանել ՀՀ-ում ժողովրդավարության, խոսքի ազատության կայացման գործընթացները:

2006-2011թթ տպագրվել է «Կամք+» թերթի 38 համար:

2011թ. ստեղծվել է նաև «Կամք+»-ի՝ <http://kamqplus.blogspot.com/> բլոգը, որտեղ տեղադրված են թերթի էլեկտրոնային տարբերակները:

2012թ. տպագրվել է «Կամք+» թերթի 9 համար «Հանրային իրազեկությունը՝ որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն» ծրագրի շրջանակներում և 5 հատուկ համար՝ «Ազատ քաղաքացիներ զարգացած համայնքներ» ընտրական նախաձեռնության ընթացքում :

2013թ. տպագրվել է «Կամք+» թերթի 11 հատուկ համար:

2012-2013ԹԹ ԳՈՒՄ ՄՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

• Ծառայությունների մատուցման պայմանագիր- WVA/KAP ADP/02/FY13

Ծառայության տևողությունը -2012թ նոյեմբեր-2013թ. սեպտեմբեր

Պատվիրատու- Վորլդ Վիժն Հայաստան, Կապանի ՏՁԾ

Ծառայության նկարագիր – Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն նախ ուսումնասիրել է ՎՎ Կապանի ՏՁԾ-ի շահառու համայնքների դպրոցների ԱԽ-ների, ԾԽ-ների, ԴԽ-ների տնօրենների, փոխտնօրենների և հաշվապահների զարգացման կարիքները և զարգացրել նրանց կարողությունները դասընթացների, աշխատանքային հանդիպումների, խորհրդատվության, փորձի փոխանակման այցերի կազմակերպման տեսքով և աջակցել այս կառույցների կողմից ներկայացված ծրագիր-առաջարկներին:

Պայմանագրի գինը – 1.593.000 ՀՀ դրամ

• Ծառայությունների մատուցման պայմանագիր-WVA/YER ADP/TR-13/001(RB) 2 LOTS

Ծառայության տևողությունը –2012թ. նոյեմբեր-2013թ. հունիս

Պատվիրատու- Վորլդ Վիժն Հայաստան, Երևանի ՏՁԾ

Ծառայության նկարագիր – Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն իրականացրել է ՎՎ Երևանի ՏՁԾ-ի շահառու թիվ 84, 85, 103, 127 և 136 դպրոցների ԱԽ-ների կարողությունների զարգացում, փոքր ծրագիր-առաջարկներ պատրաստելու և իրականացնելու համար տրամադրել նրանց անհրաժեշտ խորհրդատվություններ:

Պայմանագրի գինը- 1.792.000 ՀՀ դրամ

• Ծառայությունների մատուցման պայմանագիր - WVA/YER ADP/TE-14/001/FY14

Ծառայության տևողությունը- 2013թ. դեկտեմբեր-2014 հունիս

Պատվիրատու- Վորլդ Վիժն Հայաստան, Երևան ՏՁԾ

Ծառայության նկարագիրը- Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն իրականացրել է ՎՎ Երևանի ՏՁԾ-ի Քանաքեռ-Զեյթուն վարչական համակարգի շահառու թիվ 84, 85, 103, 127 և 136 դպրոցների ԱԽ-ների ցանցի ձևավորման, փոքր ծրագրերի մշակման և իրականացման, ԱԽ ցանցի աշխատանքների կազմակերպմանն ուղղված գործողություններ: Զարգացրել է դպրոցի կառավարման համակարգի չափորոշիչներին համապատասխան Ծնողական խորհուրդի կարողությունները/ԾԽ՝ ապահովելով Ծնողների մասնակցությունը և ներգրավվածությունը դպրոցի կառավարման գործընթացներում՝ ի նպաստ դպրոցում երեխաների համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև 85, 127 դպրոցներում զարգացրել է դպրոցի կառավարման համակարգի չափորոշիչներին համապատասխան Մանկավարժական խորհրդի/ՄԽ կարողությունները՝ շեշտադրելով մասնակցային կառավարումը և գործունեության կազմակերպման համագործակցային և նորարարական եղանակները:

Պայմանագրի գինը – 13,582,500 ՀՀ դրամ

Աշակերտական խորհուրդների/ԱԽ կարողությունների զարգացում- 4,547,500 ՀՀ դրամ

Ծնողական խորհուրդների/ԾԽ կարողությունների զարգացում - 6,863,000 ՀՀ դրամ

Մանկավարժական խորհուրդների/ՄԽ կարողությունների զարգացում - 2,172,000 ՀՀ դրամ

• Ծառայությունների մատուցման պայմանագիր – WVA/TAV/SER/01/FY

Ծառայության տևողությունը- 2013թ. նոյեմբեր-?

Պատվիրատու - Վորլդ Վիժն Հայաստան, Տավուշ ՏՁԾ

Ծառայության նկարագիրը – Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն ՎՎ Տավուշի ՏՁԾ-ի հինգ դպրոցների ԱԽ-ների համար կազմակերպել է «ԱԽ-ների կարողությունների զարգացում. ԱԽ ձևավորման և աշխատանքների պլանավորման հմտություններ» թեմայով երկօրյա դասընթաց:

Պայմանագրի գինը – 926,000 ՀՀ դրամ

• Ծառայությունների մատուցման պայմանագիր- LG 23092013

Ծառայության տևողությունը- 2013թ. օգոստոս-2013թ նոյեմբեր

Պատվիրատու- Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստան

Ծառայության նկարագիր– Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն ադմինիստրատիվ աջակցություն է տրամադրել «Հաճախորդների սպասարկում» թեմայով դասընթացների իրականացման գործընթացներում:
Պայմանագրի գինը – 225,800 ՀՀ դրամ

• **Ծառայությունների մատուցման պայմանագիր -250913-02**

Ծառայության տևողությունը- 2013 օգոստոս- 2013թ. հոկտեմբեր

Պատվիրատու- Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստան

Ծառայության նկարագիր – Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն ցուցաբերել է ադմինիստրատիվ աջակցություն երկօրյա համաժողովի կազմակերպչական աշխատանքներին: Կազմակերպել է Վայոց Ձորի և Սյունիքի մարզի ՔԻ-ի շահառու համայնքների ներկայացուցիչների տեղափոխման աշխատանքները/թվով 100 հոգի/:

Պայմանագրի գինը – 1.503.500 ՀՀ դրամ

• **Ծառայությունների մատուցման պայմանագիր - 2013/2**

Ծառայության տևողությունը – 2013 հունիս 1-ից -2013թ. հունիսի 30-ը

Պատվիրատու- Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստան

Ծառայության նկարագիր - Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն իրականացրել է «Շահերի պաշտպանության խորացված երկօրյա դասընթաց»:

Պայմանագրի գինը – 120.000 ՀՀ դրամ

• **Սուբսիդիայի տրամադրման պայմանագիր**

Ծառայության տևողությունը -2013թ. մարտի 28-ից- 2013թ. դեկտեմբերի 31-ը

Պատվիրատու- ՀՀ մշակույթի նախարարություն

Ծառայության նկարագիր – Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն շարունակել է «Կամք+» թերթի տպագրությունը:

Պայմանագրի գինը – 400.000 ՀՀ դրամ

• **Ծառայությունների մատուցման պայմանագիր- 01/2013**

Ծառայության տևողությունը- 2013թ. մարտի 1-ից- 2013թ. դեկտեմբերի 31-ը

Պատվիրատու-Սալվարդ» գյուղական զարգաման հիմնադրամ

Ծառայության նկարագիր – Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն «Սալվարդ» գյուղական զարգաման հիմնադրամին տրամադրել է ներքոնշյալ թեմաներով դասընթացներ

- Կարգեր և ընթացակարգեր
- Խորհրդի զարգացում
- Խորհրդի ղեկավարման կարգեր և ընթացակարգեր
- Առաջնորդություն և կառավարում
- Կատարողականության գնահատում
- Հաշվետվողականության համակարգ
- Ապահովել հետադարձ կապ և ընթացիկ խորհրդատվություն
- Վերահսկում և գնահատում
- ՏԻՄ ոլորտի ՇՊ դասընթաց
- Չափորոշիչների մշակում

Պայմանագրի գինը – 1.176.000 ՀՀ դրամ

• **Ծառայությունների մատուցման պայմանագիր- E150413-3**

Ծառայության տևողությունը – 2013թ. ապրիլի 15-ից- 2013թ. մայիսի 1-ը

Պատվիրատու- Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստան

Ծառայության նկարագիր – Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն աջակցել է Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Օրենսդրական օրակարգի քննարկման օր» մարզային քննարկման կազմակերպչական աշխատանքներին/մասնակիցների տեղափոխություն, ընդմիջում, տարածքի վարձակալում և այլն/: Մարզային քննարկումը կազմակերպվել էր 2013թ. ապրիլի 19-ին Ջերմուկում:

Պայմանագրի գինը – 2.076000 ՀՀ դրամ

• **Ծառայությունների մատուցման պայմանագիր** – WVA/APR ADP/TR-13/001

Ծառայության տևողությունը – 2013թ. փետրվարի 15-ից- 2013թ. օգոստոսի 25-ը

Պատվիրատու- Վորլդ Վիժն Հայաստան, Ապարան ՏՁԾ

Ծառայության նկարագիր –

Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն ՎՎ Ապարանի ՏՁԾ-ի շահառու /Ապարանի թիվ 2, Ապարանի ավագ, Հարթավան, Ափնագյուղ, Ծաղկաշեն, Քուչակ/ դպրոցներում իրականացրել է «Աշակերտական, ծնողական և մանկավարժական խորհուրդների հզորացում և զարգացում» թեմայով դասընթացներ, որոնց արդյունքում բարձրացել է նրանց դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացներում:

ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացված դասընթացներն են՝

«Հանրակրթական դպրոցներում արտադասարանական և արտադպրոցական կազմակերպումը»

«Աշակերտների մասնակցությունը դպրոցի կառավարմանը. Աշակերտական խորհուրդ»

«Աշակերտական խորհուրդների ընտրությունների կազմակերպում»

«Աշակերտական խորհուրդների գործունեության տարեկան գործողությունների պլանի մշակում»

«Ծնողական խորհրդի կարողությունների զարգացումը. ծնողական խորհրդի ձևավորման և աշխատանքային պլանավորման հմտություններ»

«Մանկավարժական խորհրդի կարողությունների զարգացումը. ծնողական խորհրդի ձևավորման և աշխատանքային պլանավորման հմտություններ»

«Աշակերտական և ծնողական խորհուրդների գործունեության հաջողությունները, դժվարությունները. հնարավորություններ և լուծման ուղիներ»

Պայմանագրի գինը -1.737.000 ՀՀ դրամ

• Ծառայությունների մատուցման պայմանագիր- 01/2013

Ծառայության տևողությունը – 2013թ. փետրվարի 1-ից- 2013թ. փետրվարի 20-ը

Պատվիրատու- «Կապանի Տարածաշրջանի Ջարգացման» Հիմնադրամ

Ծառայության նկարագիր – Սույն պայմանագրով ԳՈՒԿ ՀԿ-ն «Կապանի Տարածաշրջանի Ջարգացման» Հիմնադրամի համար իրականացրել է «Համայնքային զարգացում և համախմբում», «Ծրագիր-առաջարկի պատրաստման հմտություններ» մեկօրյա դասընթաց:

Պայմանագրի գինը – 155,000 ՀՀ դրամ

• Ծառայությունների մատուցման պայմանագիր – WVA/STEP ADP/FY13

Ծառայության տևողությունը – 2013թ. հունվարի 21-ից- 2013թ. մարտի 15-ը

Պատվիրատու- Վորլդ Վիժն Հայաստան, Ստեփանավանի ՏՁԾ

Ծառայության նկարագիր –Սույն պայմանագրով ԳՈՒՄ ՀԿ-ն ՎՎ Ստեփանավանի ՏՁԾ-ի շահառու համայնքների դպրոցների ԱԽ-ների համար իրականացրել է ԱԽ-ների կարողությունների զարգացման և հզորացման դասընթացներ:

Պայմանագրի գինը – 340.000 ՀՀ դրամ

ԳՈՒՄ ՀԿ-ի 2012թ.-ի Ֆինանսական հաշվետվություն

N	Ծրագրերի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	Դրամաշնորհների գումարների նվազում			
			Նվազումներ	Ծառայություններ	Ներդրումներ	Ներդրումներ
1	Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացում՝ ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության	ՎՎ	15.426.162ՀՀ դրամ = 38.364 ԱՄՆ դոլար			

2	Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ/ԴԿՏՀ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ	14.027.510ՀՀ դրամ = 34.886 ԱՄՆ դոլար				
3	Ակտիվ քաղաքացիներ-զարգացող համայնքներ	ՔԻ	9.696.900 ՀՀ դրամ = 24.166 ԱՄՆ դոլար				
4	Տրամադրել աջակցություն համայնքային և կամավորական նախաձեռնությունների իրականացմանը Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում/ ՀԱԽ	ՔԻ	16.912.669 ՀՀ դրամ = 42.061 ԱՄՆ դոլար				
5	Տրամադրել աջակցություն համայնքային և կամավորական նախաձեռնությունների իրականացմանը Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում/ ՀԱԽ	Ջինիշյան հիշատակի հիմնադրամ	1.070.000 ՀՀ դրամ = 2.661 ԱՄՆ դոլար				
6	Համայնքային զարգացման և քաղաքացիական հասարակության աջակցության ծրագրերի ադմինիստրատիվ աջակցություն	ՔԻ	28.129.119 ՀՀ դրամ = 69.956 ԱՄՆ դոլար				
7	Ուսուցիչների և դեռահասների ներուժի զարգացման միջոցառումների իրականացում «Դեռահասների առողջություն» թեմայով	ՎՎ	4.809.700 ՀՀ դրամ = 11.961 ԱՄՆ դոլար				
8	Համայնքային մոբիլիզացման միջոցառումների կազմակերպում և իրականացում Տավուշի և Մեղրիի համայնքներում	ՎՎ	2.950.600 ՀՀ դրամ = 7.338 ԱՄՆ դոլար				
9	ՏԻՄ կարողությունների զարգացում	ՔԻ	3.802.960 ՀՀ դրամ = 9.458 ԱՄՆ դոլար				
10	Տրամադրել ադմինիստրատիվ աջակցություն համայնքային և քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված գործողությունների իրականացմանը Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում/ՀԱԽ	ՔԻ	5.543.300 ՀՀ դրամ = 13.786 ԱՄՆ դոլար				
11	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում	ԾԻԳ	1.710.112 ՀՀ դրամ = 4.253 ԱՄՆ դոլար				
12	Ակտիվ քաղաքացիներ-զարգացող համայնքներ-2	ՔԻ	3.886.285 ՀՀ դրամ = 9.665 ԱՄՆ դոլար				

13	Հանրային իրազեկությունը՝ որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն	ՔԻ	1.746.000 ՀՀ դրամ = 4.342 ԱՄՆ դոլար			
14	Համտես-փառատոնի արմինիստրատիվ աջակցություն	ՔԻ	1.120.000 ՀՀ դրամ = 2.785 ԱՄՆ դոլար			
Ընդամենը			110.831.317 ՀՀ դրամ 271.631 ԱՄՆ դոլար			

🇦🇲 ԳՈՒՄ ՍՊԸ-ի 2012թ. ֆինանսական հաշվետվություն

N	Պատվիրատու	Ծառայության տ»սակը	ԵԿԱՍՈՒՏՆԵՐ
1			
	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	«a High tech նարքետինգ և վաճառքների հնտություններ» թեմայով դասընթացներ /30ժամ/	800 000
	«ՀԿ Կենտրոն» ԶԶ ՀԿ	Մոդուլի մշակում Մոդուլի վերամշակում Համայնքային զարգացում և մոբիլիզացում, Կանավորների ներգրավում և կառավարում, Ծրագրային համառոտագրի և առաջարկների մշակում, քաղաքացիական հասարակությունը և ՀԵՆԱ դերը համայնքում, Հաղորդակցություն և առաջնորդման հնտություններ, Ֆոնդահայթայթում համայնքային զարգացման ծրագրեր, Անդամություն, անդամության զարգացում և կառավարում դասընթացների կազմակերպում	3 459 000
	«Քաունթերփարթ Ինթերնեշնլ» Հայաստանյան նորկայացուցչություն	Մարզային կոնֆերանսի կազմակերպում Երիտասարդական առաջնորդության ամառային ճամբարի կազմակերպում ՀԶ մշակութային ծրագրի աջակցություն և կազմակերպում Թիրախ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների միջանկյալ գնահատում Օրենսդրական օրակարգի քննարկման օր աշխատանքային խմբի կրթության, գիտության մշակույթի և սպորտի հարցերի շուրջ Դասընթացի ընդմիջումների կազմակերպում	8 810 244
	«Գործընկերություն ուսուցում» ՀԿ	Զեռնարկի տպագրություն և Բուկլետի տպագրում «Կամք+» թերթի հավելված Նյութերի բազմացում Վկայականի տպագրություն Ուղեցույցի տպագրություն Վեբ կայքի պատրաստում	2 487 150
	«Հոլսի կամուրջ» ՀԿ	«Արդյունավետ աշակերտական խորհուրդների ցանցի ձևավորում, կանոնակարգի և աշխատանքային պլանի մշակում» թեմայով խորհրդատվություն	350 000

<p>«Սավարդ» գյուղական զարգացման հիմնադրամ</p>	<p>«ՏԻՄ-կողմից մատուցվող ծառայությունների բարելավման քարոզարշավներում հանրային քաղաքականություն մշակման մեթոդներ» թեմայով խորհրդատվություն /4 ժամ/ «ՏԻՄ-կողմից մատուցվող ծառայությունների բարելավման քարոզարշավներում հանրային քաղաքականություն մշակման մեթոդներ և ներկայացման հմտություններ» թեմայով խորհրդատվություն «Վերահսկում և գնահատում» թեմայով դասընթաց</p>	<p>170 000</p>
<p>«Վոլդ վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ Սիսիանի ՏԶԾ</p>	<p>Ծառայությունների մատուցում դասընթացի կազմակերպում ձեռնարկի տպագրություն</p>	<p>192 500</p>
<p>«Վոլդ վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղ Տավուշ</p>	<p>Երկօրյա դասընթաց Տավուշ ՏԶԾ-ի հինգ դպրոցների աշակերտական խորհուրդների համար «Աշակերտական խորհրդի կարողությունների զարգացում. Ախ ձևավորման և աշխատանքների պլանավորման հմտություններ» թեմայով և երկու դպրոցների ծնողական խորհուրդների համար «Ծնողական խորհուրդ ձևավորում և զարգացում. Ծխ ձևավորման և աշխատանքների պլանավորման հմտություններ» թեմայով</p>	<p>626 000</p>
<p>«Վոլդ վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ Կապանի ՏԶԾ</p>	<p>«Աշակերտական խորհրդի կարողությունների զարգացում. աշխատանքների պլանավորման և ծրագիր-առաջարկների պատրաստման հմտություններ» 3 օրյա դասընթաց</p> <p>«ՏԻՄ լիազորություններ. համայնքի քառամյա զարգացման պլան, համայնքային բյուջե և տարեկան աշխատանքային պլան: ՏԻՄ աշխատանքաներին համայնքային մասնակցության մեթոդներ» 3 օրյա դասընթաց</p> <p>Նյութերի բազմացում /29նարդ *40էջ/</p> <p>«Ծնողական խորհրդի ձևավորումը և գործունեության կազմակերպումը» թեմայով 2-օրյա դասընթաց թիրախ դպրոցների ծնողական խորհուրդների նախագահների և տնօրենի ՄԿԱ գծով տեղակալների մասնակցությամբ:</p> <p>«Ախ տարեկան աշխատանքային պլանների պատրաստում » թեմայով 1 օրյա աշխատանքային հանդիպում՝ Ախ նախագահների և տնօրենի ՄԿԱ գծով տեղակալների մասնակցությամբ</p>	<p>1 575 600</p>

	<p>«ԾԽ տարեկան աշխատանքային պլանների պատրաստում» թեմայով 4 ժամյա աշխատանքային հանդիպում՝ ԾԽ նախագահների և տնօրենի ՄԿԱ գծով տեղակալների մասնակցությամբ</p> <p>«Հանրակրթական դպրոցների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը» թեմայով երկօրյա դասընթաց տնօրենի ՄԿԱ գծով տեղակալների մասնակցությամբ:</p> <p>«Ծրագիր-առաջարկ պատրաստելու հմտություններ» թեմայով երկօրյա դասընթաց թիրախ դպրոցների խորհուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ</p> <p>Իրականացնել «Համայնքային նախաձեռնությունների նախագծում և իրականացում» թեմայով երկօրյա դասընթաց թիրախ դպրոցների ԱԽ ներկայացուցիչների մասնակցությամբ</p>		
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղ /Ալավերդի	ԴԿՏՀ-ի տեղակայում, ուսուցում, խորհրդատվություն	445 000	
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղ/Երևան	<p>«Աշակերտական խորհրդի ստեղծում Երևանի ՏՁԾ տարածքում գտնվող թիվ 103 ավագ դպրոցում»</p> <p>«Ծնողների մասնակցությունը դպրոցի կառավարմանը. Ծնողական խորհուրդը դպրոցի կառավարման համակարգում» թեմայով երկօրյա դասընթաց</p> <p>Տրամադրել առցանց և անմիջական խորհրդատվություն Ծնողական խորհրդի ընթացիկ գործունեության և տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ</p> <p>«Ծրագիր-առաջարկների պատրաստման հմտություններ» թեմայով եռօրյա դասընթաց</p> <p>Խորհրդատվության տրամադրում՝ դրամաշնորհային հայտերի պատրաստմանը աջակցելու համար</p>	2 298 000	
«ՊՐԱԳՄԱ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ամերիկյան ընկերության հայաստանյան մասնաճյուղ	«Ուսանողների զբաղվածության հնարավորությունների և արտադրական պրակտիկայի խթանման» դրամաշնորհային հայտի ներկայացման և հարց ու պատասխանի հանդիպման կազմակերպում	35 000	
«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն	<p>«Դպրոցի ժողովրդավար կառավարում. աշակերտական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարմանը»</p> <p>«Դպրոցի ժողովրդավար կառավարում. ծնողական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարմանը» թեմաներով դասընթացներ /8 ժամ/</p> <p>«Աշակերտական խորհրդի գործունեության տարեկան գործողությունների պլանի մշակում» թեմայով աշխատանքային հանդիպում</p> <p>«Դպրոցի ժողովրդավար կառավարում. աշակերտական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարմանը»</p> <p>«Դպրոցի ժողովրդավար կառավարում. ծնողական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարմանը» թեմաներով դասընթացներ /8 ժամ/</p>	420 000	
Քաղաքացիական զարգացման համագործակցության հիմնադրամ	«Ներկայացման հմտություններ» թեմայով դասընթաց	22 000	

ՀՀ Կոտայքի մարզի ք. Արուսյանի կրթահամալիր ՊՈԱԿ	ԴԿՏՀ-ի տեղակայում, ուսուցում	37 000
Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամ	«Տեղական դիտորդները ԱԺ 2012 ընտրություններում» թեմայով եռօրյա դասընթաց	648 000
Համակարգչային դասընթաց	Անհատական դասընթացներ	100 000
Մշակույթի նախարարություն ոչ պետ. մամուլի հրատարակում	«Կամք+» թերթի հավելված	400 000
Այլ ծառայություն		12 226
ԸՆԴՀԱՆՈՒՐ		22 887 720

ԳՈՒՄ ՀԿ/ՄՊԸ 2012-2013ԹԹ ՀԱՋՈՂԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՈՒՆԵՑԱՆՔ ԳԻՏԱԿԻՑ ԸՆՏՐՈՂՆԵՐ...

2012թ. մայիսի 6-ին ՀՀ ԱԺ-ի խորհրդարանական ընտրության նախաշեմին մթնոլորտն եռեփվում էր քաղաքական և քաղաքացիական մեծ ակտիվությամբ:

Բոլոր ընտրությունների նման, այս մեկը ևս խոստումնալից էր. ամենքին համակել էր բարի և լուսավոր փոփոխությունների հաստատման շղարշը:

Տարիների չարված և անհնարին թվացող աշխատանքներն ԱԺ-ի խորհրդարանական ընտրության մասնակից կուսակցությունների և մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների նախընտրական ծրագրերում, տպագրական նյութերում պատկերված էին գունավոր, հեշտ և իրագործելի տողերով:

Հեռուստատեսությունը, տպագիր մամուլը, ինչպես նաև հասարակական վայրերը վերածվել էին նախընտրական քարոզարշավների համար անփոխարինելի հավաքատեղիների:

Քաղաքական ակտիվությանը համընթաց քայլեցին նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները/ՔՀԿ՝ իրականացնելով տարաբնույթ ընտրական նախաձեռնություններ:

Ամփոփելի է այն փաստը, որ ամեն ընտրություն իր հետ բերում է քաղաքացիական մեծ ակտիվություն: ՀԿ-ները հանդես են գալիս նախընտրական նախաձեռնություններով՝ փորձելով հնարավորինս ընտրական գործընթացը դարձնել թափանցիկ և ժողովրդավար:

ԳՈՒՄ ՀԿ-ն ընտրական նախաձեռնություններ իրականացնելու արդեն բավականին մեծ փորձ ունի: 2012թ. մայիսի 6-ին ՀՀ ԱԺ-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԳՈՒՄ ՀԿ-ն «Ակտիվ քաղաքացիներ-զարգացած համայնք» նախաձեռնությամբ թիվ 38 ընտրատարածքում/Կապանի և Մեղրու տարածաշրջաններ/ իրականացրեց ԱԺ-ի ընտրությունների ընթացքի դիտարկում:

ԳՈՒՄ ՅԿ-ի նախաձեռնությամբ Սյունիքի մարզի Կապան և Մեղրի քաղաքների 111 երիտասարդներ դիտորդական առաքելություն իրականացնելու համար անցան վերապատրաստման դասընթացներ, հավատարմագրվեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի/ԿԸՀ-ի կողմից:

Երիտասարդները 2012թ. մայիսի 6-ին Սյունիքի մարզի թիվ 38 ընտրատարածքում անաչառ ծառայեցին իրենց առաքելությանը՝ դիտարկելով ԱԺ-ի ընտրությունների ընթացքը:

«Առաջին անգամ մասնակցեցի ընտրություններին և դիտարկեցի ընտրությունների ողջ ընթացքը: Հնարավորինս օպերատիվ եմ աշխատել՝ հետաքննողի սուր աչքով պայքարելով մարդկանց կողմից կամա թե ակամա իրականացված ընտրախախտումների դեմ: Կանխել եմ չորս ընտրախախտում՝ հավատարիմ մնալով կոչմանս, որի համար ոգևորությունս աննկարագրելի էր:

Ողջ ընթացքում ձգում էի գործիս կարևորությունն ու արժեքը», - այսպես է բնութագրում իր առաքելությունը ԳՈՒՄ ՅԿ-ի դիտորդ Կարմեն Մարտիրոսյանը:

Դիտորդները մեծ պատասխանատվությամբ իրականացրեցին իրենց աշխատանքը, ամբողջ օրը համապատասխան հերթափոխով աշխատել են ընտրատեղմասերում, արագ արձագանքել բոլոր խախտումներին, որոնք արագ տարածվել են համացանցով՝ www.iditord.org, www.irazek.am, ինչպես նաև տպագրվել է ԳՈՒՄ ՅԿ-ի «Կամք+» թերթի հատուկ թողարկման մեջ:

Ամենակարևոր ձեռքբերումն այն էր, որ արդյունքում ունեցանք գիտակից ընտրողներ...

Առանցքում ունենալով ՏԻՄ-երի կարողությունների զարգացումը

Հայաստանում տեղական ինքնակառավարման ինստիտուտը գտնվում է կայացման փուլում: Ինչ խոսք, նկատելի են թերի կողմեր, որոնց շտկման համար բավականին աշխատանք և համապատասխան փորձ է պետք:

ՏԻՄ-ն ամուր կամուրջ է քաղաքացու և պետության միջև՝ կոչված բարելավելու բնակչին մատուցվող հանրային ծառայությունների որակն ու մատչելիությունը: ՏԻՄ-ն է այն կառույցը, որ ջանում է հաստատել մասնակցային կառավարում և հիմք դնել բարեկեցիկ և ժողովրդավար հասարակության:

Տեղական ինքնակառավարման կայացման գործընթացում իրենց ինքնատիպ աջակցությունն են բերում քաղաքացիական հասարակական կառույցները/ՔՀԿ-ներ՝ իրականացնելով ոլորտի զարգացման տարաբնույթ նախաձեռնություններ:

2012թ. ԳՈՒՄ ՅԿ-ն իր գործընկերներ՝ «ՀԿ կենտրոնի» և ՔԶՀՀ-ի համագործակցությամբ Քաունթերփարթ ինթերնեշնլի/ՔԻ-ի աջակցությամբ իրականացրեց «ՏԻՄ ոլորտի կարողությունների զարգացման» ծրագիրը, որն ենթադրում էր Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածների՝ ՔԻ-ի շահառու 43 համայնքապետների, համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների, ավագանու անդամների համար իրականացնել փորձնական դասընթացներ: Դասընթացներն իրականացվել են ծրագրի գործընկեր «Ուրբան» հիմնադրամի կողմից մշակված տեղական ինքնակառավարման գործառնության ոլորտների վերաբերյալ, համակարգչային վերապատրաստման, ավագանու անդամների կողմնորոշիչ դասընթացների մոդուլներով:

Ծրագրի արդյունքում 2013թ. ՔԻ-ի կողմից վերապատրաստված փորձագետ-դասընթացավարները Հայաստանի հյուսիսային, հարավային և կենտրոնական հատվածների՝ ՔԻ շահառու համայնքներում իրականացրել են ՏԻՄ-երի, ավագանիների կարողությունների և համակարգչային հմտությունների զարգացման դասընթացներ, որոնք անշեղորեն, իրենց հետքը կթողնեն տեղական ինքնակառավարման մարմինների հետագա աշխատանքների արդյունավետ իրականացման գործընթացում:

«ՏԻՄ-երի վերապատրաստման դասընթացներն ուղղակիորեն վերաբերում էին տեղական ինքնակառավարմանը: Ցանկացած վերապատրաստում խիստ անհրաժեշտ է մեզ: Մեր աշխատանքում հաճախ են հանդիպում նրբություններ, որոնք պարզաբանման և ճիշտ մոտեցման կարիք ունեն: Դասընթացները հնարավորություն են տալիս ձեռք բերել որոշ հմտություններ, որոնց կիրառումը հետագայում հեշտացնում է մեր աշխատանքը», - ասում է ՏԻՄ կարողությունների զարգացման դասընթացի մասնակից Էդգար Լևոնյանը:

Նպաստենք աղքատության նվազեցմանը՝ աջակցելով ամեն անգամ մեկ ընտանիքի

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՅԿ-ն 2012թ. սեպտեմբերին ստացել է աջակցություն /նոր և օգտագործված հագուստի տեսքով/ ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում գործող Focus On Children Now բարեգործական հիմնարկի կողմից իր

շահառու սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրելու նպատակով: Focus On Children Now բարեգործական հիմնարկի առաքելությունն է հնարավոր եղած միջոցներով օգտակար լինել Հայաստանի և Արցախի նյութապես անապահով պայմաններում գտնվող անհատներին և ընտանիքներին:

Focus On Children Now բարեգործական հիմնարկի կողմից ԳՈՒՄ ՀԿ-ն ստացել է 15 փաթեթ հազուստ: ԳՈՒՄ ՀԿ-ի շահառուների ցանկն ընդգրկում են Վորլդ Վիժն Հայաստան ՄԲԿ-ի աջակցությամբ իրականացվող «Շահագրգիռ կողմերը միասին հանուն Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի հզորացման» ծրագրի շրջանակներում Գորիսի և հարակից Շինուհայր, Խոտ, Հալիձոր, Քարահունջ և Հարժիս համայնքներում բացահայտված սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքները:

2012թ. սեպտեմբերի 8-ին ԳՈՒՄ ՀԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել աջակցությունների տրամադրումը շահառու ընտանիքներին, որին մասնակցել են նաև Focus On Children Now բարեգործական հիմնարկի նախագահ Կարինե Աբուլյանը, կազմակերպության Լոս Անջելեսի և

հայաստանյան գրասենյակների ներկայացուցիչներ: Աջակցությունների տրամադրման գործընթացին մասնակցել է նաև Հալիձոր համայնքի Խաղաղության կորպուսի կամավորը:

Շահառուների հետ շատ անմիջական զրույց ունեցավ Focus On Children Now բարեգործական հիմնարկի նախագահ Կարինե Աբուլյանը, նա մասնավորապես ասաց. «Այս փաթեթները ձեզ համար պատրաստել են հայ դպրոցականները, խնդրում են նայել և մեզ ասել, արդյոք դրանք գործածական են ձեզ համար, մենք ուզում ենք իմանալ ձեր կարծիքը, որպեսզի հետագայում ավելի լավացնենք մեր ծրագիրը: Մենք հույս ունենք, որ Հայաստանը և հայերս շուտով կարիք չենք ունենա օգտագործված հագուստի: Բայց այս պահին, երբ գիտենք, որ շատերը կարիք ունեն, մենք շատ ուրախ ենք, որ զոնե մի քիչ կարող ենք օգնել ձեզ: Արդեն վեց տարի է, որ մեր կազմակերպությունը մարդասիրական օգնություն է տրամադրվում է Հայաստանին, որը երկու նպատակ է հետապնդում. առաջինը՝ այդպիսով կապ է հաստատվում Հայաստանում և Ամերիկայում ապրող երեխաների միջև, դպրոցահասակ երեխան անձամբ մասնակցում է փաթեթների պատրաստմանը՝ զիտակցելով, որ օգնում է հայաստանցի որևէ երեխայի, երկրորդը՝ օգնում ենք Հայաստանում կարիքավոր ընտանիքներին, ովքեր կարող են գործածել մեր ուղարկած հագուստը»:

Աջակցությունից օգտվեցին Գորիսի քաղաքի սոցիալապես անապահով 29 ընտանիք: Մնացած փաթեթները տրամադրվել են շահառու գյուղական համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին:

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն իր և իր շահառուների անունից շնորհակալություն է հայտնում Focus On Children Now բարեգործական հիմնարկին համագործակցության և աջակցության համար:

Ի ուրախություն Գոմք համայնքի բնակիչների և ի երջանկություն մանուկների

ՀՀ Վայոց Ձորի Ախտա գետի ափամերձ լանջին ծվարած է Գոմք համայնքը՝անշուք և անպաճույճ գյուղական տներով, ահարկու պատրերազմյան ավերակներով: Գյուղը բնակեցված է հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ Սունգայիթից, Բաքվից և Կիրովաբաթից մազապուրծ փրկված հայերով: Ըստ համայնքի ղեկավար Մխիթար Հովհաննիսյանի՝ 1980-ական թվականներից հետո Գոմք համայնքը նախակրթարան, երեխաների համար խաղահրապարակ, երիտասարդների ժամանցի վայր չի ունեցել: Սահմանամերձ համայնքը կարծես թե

անուշադրության էր մատնված իշխանության կողմից:

2013թ., ի շնորհիվ Քաունթերփարթ ինթերնեշնլի/ՔԻ «Քաղաքացիական հասարակության և ՏԻՄ աջակցման» ծրագրի, համայնքում բացվեց երեխաների համար ցերեկային խնամքի կենտրոն, որի հարևանությամբ կառուցվեց մանկական խաղահրապարակ, ինչպես նաև երիտասարդական կենտրոն:

«Կենտրոնը հնարավորություն տվեց համայնքի 15 երեխայի առօրյան դարձնել համեմատաբար ավելի գունավոր ու գեղեցիկ: Այսօր մեր երեխաներն էլ կարող են կրթվել և զարգանալ եվրոպական շունչ ունեցող նախակրթարանում: Անկարագրելի էր նրանց ոգևորությունը. անձամբ էին կահավորում խաղասենյակները, ներկում խաղահրապարակի ցանկապատները: Շուտով կենտրոնը կհամալրվի գույքով, անհրաժեշտ պարագաներով, և վստահ եմ, երեխաների թիվն ավելի կմեծանա»,-իր ուրախությամբ կիսվում է համայնքի ղեկավար Մխիթար Հովհաննիսյանը:

Գոմքի նախադպրոցական ցերեկային խնամքի կենտրոնի շահագործումից հետո կամավորական հիմունքներով աշխատում էին համայնքի երիտասարդ կանայք և աղջիկները: Առանձնահատուկ սրտացավությամբ ու նվիրվածությամբ աչքի էր ընկնում Նաիրա Մանուկյանը, ով ուներ կենտրոն հաճախող երկու երեխա:

«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնում որոշ ժամանակ աշխատել են կամավոր, հետո՝ հրամանագրվել որպես պետական աշխատող: Գործս կատարում են մեծ սիրով ու պատասխանատվությամբ: Մեծ ակնկալիքներ չունեն,

պարզապես մեծ բավականություն են ստանում որդեգրած առաքելությունից՝ կրթել, դաստիարակել մատաղ սերնդին: Երբ նայում ես երեխաների հայացքներին, ակամայից սիրտդ լցվում է հոգատարությամբ ու անասելի ջերմությամբ...ուզում ես հոգ տանել նրանց մասին, չէ որ խոսքը դեռևս չձևավորված, փոքրիկ մարդ հասկացության մասին է...»,- ասում է Նաիրա Մանուկյան:

Ցերեկային խնամքի կենտրոնը համայնք այցելող հյուրերի համար դարձել է հիմնական տեսարժան վայրը: Այցելուները հիացնունքով են լցվում Նաիրայի նվիրված աշխատանքի, կենտրոնի մաքրության, երեխաների ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների, գեղեցիկ ձևավորումների նկատմամբ:

Կենտրոնն իր հյուրընկալ պատերի ներսում ընդունել է նաև ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության ղեկավար տիկին Կարեն Յիլարդին:

Համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրենի խնդրանք-նամակին պատասխան՝ Վայոց Ձորի մարզպետարանի կողմից 2013թ. սեպտեմբերից Նաիրա Մանուկյանը հրամանագրվեց որպես պետական աշխատող՝ կայուն դարձնելով նախակրթարանի աշխատանքը:

Քի-ի աջակցությամբ հիմնադրված Գոմքի նախադպրոցական երեխաների ցերեկային խնամքի կենտրոնը մշտապես կգործի՝ ի ուրախություն Գոմք համայնքի բնակիչների և ի երջանկություն մանուկների:

Սպորտը՝ առողջ ապրելակերպի գրավական

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի «Աղվան Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի» (ՄՊՍԿ) մարզադահլիճը բարեկարգման, վերանորոգման կարիք ուներ: Կենտրոնում գործում էր սպորտի միայն արևելյան մարտարվեստի խումբը, որովհետև չկային համապատասխան մարզական գույք և սարքավորումներ: Մարզադահլիճը թերբեռնված էր, օգտագործվում էր օրական 1-2 ժամ:

Ինչպես վկայում է Սիսիան համայնքի ղեկավար Աղասի Հակոբջանյանը՝ մարզադահլիճի բացակայությունը արդիական խնդիր էր համայնքի համար, որը պահանջում էր հրատապ լուծում: «Մեր երկրի վաղվա օրը պատկանում է մեր երիտասարդներին, և ամեն բան նախաձեռնում ենք, որ երիտասարդներին կապենք իրենց մայր հողին: Ունենք ֆուտբոլի խմբակ և երաժշտական դպրոց: Առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է սպորտը, որը տանում է դեպի առողջ ապրելակերպ: Վերջերս, համայնքի միջոցներով վերանորոգվեց և բարեկարգվեց «Աղվան Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի» (ՄՊՍԿ) մարզադահլիճը, իսկ որպես հաջողություն ուզում են նշել, որ մեր մեծ գործընկեր Քաունթերփարթ ինթերնեշնլի աջակցությամբ մարզադահլիճի համար ձեռք բերեցինք սպորտային սարքավորումներ, ինչը շատ կարևոր էր մեր համայնքի համար», - ավելացրեց Ա. Հակոբջանյանը:

Կենտրոնի վերանորոգումից հետո 2013թ. Սիսիանի ՀԱԽ-ը ՔԻ-ին ներկայացավ «Սիսիան քաղաքում սպորտի զարգացում» համայնքային զարգացման ծրագրով, որի նպատակն էր աջակցել Սիսիան համայնքում առողջ ապրելակերպի և սպորտի զարգացմանը:

ՀԱԽ-ի իրականացրած ծրագրի շնորհիվ վերանորոգված մարզադահլիճը համալրվեց մարզական գույքով և սարքավորումներով/հեծանիվ, մարզասարք, ուժային մարզասարք, տուռնիկ, ստեպ հեծանիվ, շեյպինգի գնդակ, օղակ, լեն մեջիք, Աբ քիրոլ, մարզաքարեր /գանտել/, սպորտային մատրաս, վազքուղի մարզասարք/:

«Ուզում են շնորհակալություն հայտնել կենտրոնի ստեղծման, մարզագույքով համալրելու համար: Երազում են ճանաչված բռնցքամարտիկ դառնալ», - ասում է շահառու Արմեն Օհանյանը:

Այժմ համայնքի երիտասարդները, սպորտը սիրող ու զանազատող համայնքաբնակներն իրենց ժամանցն անց են կացնում մարզասրահում՝ հավատարիմ մնալով առողջ ապրելակերպի կարգախոսին:

Անկեղծ ու հաճելի գնահատական

Կարեն Հայրապետյանը Գորիսում հայտնի «Կարանդաշ» գրախանութի տնօրենն է: Նրա հետ ծանոթությունը սկսվեց, երբ «Բարի երբ» ՀԿ-ն ԳՈՒԲ ՀԿ-ի և Վորլդ Վիժն Սիսիանի ՏԶԾ-ի աջակցությամբ իրականացնում էր «Գրադարանները՝ մարդկային հոգու զանձարաններ» ծրագիրը Շինուհայրի, Հալիծորի, Շաքիի համայնքների և Սիսիան քաղաքի թիվ 5 դպրոցներում: Ծրագրով նախատեսված գրեմական պիտույքները, գրքերն ու անհարաժեշտ պարագաները գնում էինք «Կարանդաշից»: Ծրագրի վերջում, երբ պիտի կլոր սեղանի հրավիրեցինք շահառու դպրողների տնօրենների, գրադարանավարների, աշակերտական խորհուրդների անդամների, ծնողների, համայնքների ղեկավարների ու մարզպետարանի ներկայացուցիչների, որոշեցինք հրավիրատոմս ուղարկել նաև Կարեն Հայրապետյանին:

Կլոր սեղանի ընթացքում, երբ արդեն ներկայացվել էին ավարտված աշխատանքները, ցուցադրվել ծրագրի ընթացքում կատարված նկարահանումները և պիտի անցնեինք մտքերի փոխանակությանը, նկատեցի, որ գրախանութի տնօրենը անշշուկ դուրս եկավ «Կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամի երկխոսությունների դահլիճից, որտեղ անցկացվում էր մեր կլոր սեղանը:

«Տեսնես ինչու դուրս եկավ: Միթե չհետաքրքրեց նրան մեր կատարած աշխատանքները: Ուրեմն, ինչ որ մի տեղ բացթողում ունենք,- մտածեցի ես՝ շարունակելով ներկաներին պատմել այն աշխատանքների մասին, որ կարողացել էինք իրականացնել ընդամենը 3 ամսվա ընթացքում:

Դուռը բացվեց: Կարեն Հայրապետյանը կրկին ներս մտավ: Թևի տակ ինչ- որ փաթեթ էր: Նստեց իր տեղն ու լուռ լսում էր: Մենք արդեն անցել էինք մտքերի փոխանակությանը: Ձայն խնդրեց:

«Ես անչափ հուզված եմ, - ասաց նա,- հրավերքի համար: Այսպիսի միջոցառման ներկա գտնվելը և՛ պարտավորեցնող է, և՛ հաճելի: Հաճելի, որովհետև, գիտես՝ թո քաղաքում աշխատում են մարդիկ, որոնք լավ գործ են անում: Հանուն երեխաների, հանուն կիրթ ու գրագետ, գրքասեր սերունդ դաստիարակելու: Պարտավորեցնող, որովհետև, մեզանից յուրաքանչյուրն իր պարտքը պիտի համարի իր չափով օգնելու, սատարելու այն դպրոցին ու գրադարանին, այն աշակերտին, որ գրքի կարիք ունի, կարդալու պահանջ: Ես, պարզապես, Ձեզ խնդրում եմ, «Հայաստանի կենդանական աշխարհը» հաստատվոր և շատ օգտակար այս գիրքը «Կարանդակ» գրախանութի կողմից նվիրել այն դպրոցի գրադարանին, որն, իրոք, գրքի կարիք շատ ունի, - ասաց գրախանութի տնօրենը՝ գիրքը մեկնելով ինձ:

Հուզվեցի, ներքուստ հպարտացա, որ իմ քաղաքում ապրում են գիրք սիրող, գրական արժեքներ գնահատող մարդիկ, որոնք կարող են գնահատել կատարված աշխատանքներն ու...

Գիրքը հենց նույն պահին տրամադրեցինք Սիսիանի թիվ 5 դպրոցի գրադարանին:

Դա ծրագրի հիմնալի գնահատականն էր... անկեղծ, անմիջական, անհրաժեշտ, ու ճիշտ պահին կայացրած մի որոշում, որ արժեր բազում մոնիտորինգներ:

Թե ուզում ես երգել լսեն, ժամանակի շունչը դարձիր

ԳՈՒՄ ՀԿ-ն իր ռազմավարական ուղղությունների առանցքում ունենալով կրթության ոլորտը բազմիցս հանդես է եկել կրթական ոլորտի բարեփոխումներին ուղղված նախաձեռնություններով:

Կրթության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման գաղափարը ԳՈՒՄ ՀԿ-ն սկսել է իրագործել դեռևս 2009թ. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացված «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ» (ԴԿՏՀ) նախաձեռնությամբ:

Նախաձեռնության ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի հետ, վերջիններիս փորձագետների կողմից մշակել է դպրոցական մակարդակում դպրոցական ռեսուրսների վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ», որից հետո ինտերնետ կապի միջոցով համակարգից փորձնականորեն օգտվել են Սյունիքի մարզի 6 և Տավուշի մարզի 13 դպրոցներ:

2011թ. ՀՀ ԿԳ նախարարությունը նախաձեռնեց համակարգը ներդնել հանրապետության 105 ավագ դպրոցում: 2012թ. կնքված եռակողմ համաձայնագրի շնորհիվ /ԳՈՒՄ ՀԿ, ԿՏԱԿ, ՊՈԱԿ/ ԴԿՏՀ-ի տեխնիկական շահագործումը հանձնվեց ԿՏԱԿ-ին: Համակարգն այժմ գտնվում է պետական հոգածության տակ, որը կապահովի համակարգի կիրառման կայունությունը ՀՀ հանրակրթական դպրոցներում:

Այս պահի դրությամբ համակարգը կիրառվում է ՀՀ 332 դպրոցում (հիմնական և ավագ):

«Ցանկացած ոլորտում ամենարժեքավոր և հավաստի տեղեկատվությունն առաջնային աղբյուրից ստացված տեղեկատվությունն է: Եթե մինչև ՏՀՏ զարգացումն այն չափազանց ժամանակատար և թանկ գործընթաց էր, ապա այսօր ՏՀՏ-ները թույլ են տալիս առաջնային աղբյուրի տեղեկատվությունն ազրեգացնել և ստանալ հնարավորինս հավաստի և արդյունավետ տվյալներ»-, հավաստիացրեց ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կրթական ծրագրերի ղեկավար Մերի Պողոսյանը:

Ստեղծված համակարգը հնարավորություն է տալիս կառավարել դպրոցի գործունեության վերաբերյալ ողջ տեղեկատվությունը՝ սկսած աշակերտների հաշվառումից՝ վերջացրած ֆինանսատնտեսական կառավարման

գործիքներով: Համակարգը շատ լավ հնարավորություն է ընձեռում ծնողներին առանց դպրոց գնալու, համացանցի միջոցով ամեն օր տեղեկանալ իրենց երեխաների ինչպես ընթացիկ, այնպես էլ՝ ամփոփիչ գնահատականների մասին: «Ինչ խոսք, ծրագրի գաղափարը շատ լավն է և ինչ որ տեղ թեթևացնում է ծնողի աշխատանքը. երեխան հսկողության տակ կլինի, ծնողը ամեն պահ դպրոց չի գա և համակարգչի միջոցով կկարողանա իմանալ երեխայի առաջադիմության, բացակայությունների մասին»,-ծրագրի մասին իր կարծիքն արտահայտեց Երևանի Լևոն Շանթի անվան թիվ 4 դպրոցի տնօրեն Անահիտ Վարդանյանը:

Համակարգն ապահովում է դպրոցի գործունեության վերաբերյալ մուտքագրված ողջ տեղեկատվությունը, նպաստում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Համակարգի առավելությունները շատ են՝ աշակերտների հաշվառում, գնահատականների միջինացում և հաշվարկում, էլեկտրոնային տեղեկատվության տրամադրում, պահպանում և այլն:

«Ես գրեթե երեք օրը մեկ օգտվում եմ համակարգից, բացում, որ ծնողներս տեղեկանան առաջադիմության մասին: Սրանով ես տեսնում եմ իմ գնահատականները, փորձում նախապես հաշվել քառորդս՝ իմանալու, թե որ առարկայի գնահատականներն են ցածր, որ ժամանակին աշխատեմ շտկել դրանք: Ծնողներս աշխատում են և չեն կարողանում հաճախ գալ դպրոց, տեղեկանալ գնահատականներիս և առաջադիմության մասին, և ծրագիրը հնարավորություն է տալիս առանց դպրոց գալու ստանալ անհրաժեշտ ինֆորմացիան»,- Արթուր Մինասյան, Երևանի 135 դպրոցի 9-ա դասարանի աշակերտ, ԱԽ-ի նախագահ:

Բոլոր նախաձեռնությունները մի օր սկսվում, մի օր էլ ավարտվում են: Բայց յուրաքանչյուր նախաձեռնության հաջողությունը կլինի այն, որ ունենա լայն կիրառություն ու շարունակականություն:

ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացված ԴԿՏՀ ծրագիրը հենց այդպիսինն է:

❖ ՀԿ-Ի ԽՈՐՀՈՒՐԴ

Յուրա Պետրոսյան

Իրավաբան

ypetrosyan@mail.ru

Թամարա Աթայան

Կրթականա ոլորտի մասնագետ

eva251318@mail.ru

Էդուարդ Ղուդրունց

Տնտեսագետ

e_ghudrunts@yahoo.com

Գագիկ Թունյան

Բժիշկ

gagik-tunyan@yandex.ru

Սևադա Խոջաբաղյան

Մանկավարժ

khojabaghyan@gmail.com

❖ ՀԿ-Ի 2012-2013ԹԹ ԳՈՒՄ ՀԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Արտաշես Տոռոզյան
ԳՈՒՄ ՀԿ-ի գործադիր տնօրեն
artashes@gumiso.am

Վարդուհի Դադունց
Ծրագրերի զարգացման ղեկավար
vard@gumiso.am

Գարիկ Հովակիմյան
Ֆինանսական ղեկավար
garik@gumiso.am

Արամ Մուսախանյան
Կրթական ծրագրերի մասնագետ
aram@gumiso.am

Աննա Ավետիսյան
Կազմակերպական զարգացման /դասընթացների ղեկավար
anna@gumiso.am

Արթուր Վարդազարյան
ՇՊ մասնագետ
artur@gumiso.am

Աննա Դանիելյան
ԳՈՒՄ ՀԿ ՀՀԿ մասնագետ
annapr@gumiso.am

Սոնա Բաղդասարյան
«Կամք+» թերթի լրագրող
sona@gumiso.am

Գայանե Սողոմոնյան
«Կամք+» թերթի լրագրող
gayane@gumiso.am

Իրինա Դարբինյան
ԳՈՒՄ ՍՊԸ-ի հաշվապահ
irina@gumiso.am

Շահանե Բակունց
Գրասենյակի ղեկավար
shahane@gumiso.am

Ռուզաննա Սողոմոնյան

Սոցիալական աշխատող
ruzan@gumiso.am

Հասմիկ Արզումանյան
Սոցիալական աշխատող
hasmik@gumiso.am

Շուշան Բաբախանյան
Ծրագրերի օգնական
shushan@gumiso.am

Սամսոն Տոռոզյան
Տնտեսվար/վարորդ
samsongum@gmail.com

Նունե Օհանյան
Կրթական ծրագրերի համակարգող
nune@gumiso.am

Հապավումների բառարան

ԱՍՆ ՄՁԳ - Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն

ԳՈՒՄ ՀԿ - «Գործընկերություն եւ ուսուցում» հասարակական կազմակերպություն

ԳՈՒՄ ՍՊԸ - «ԳՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ԶԼՄ - Զանգվածային լրատվական միջոց

ԾԻԳ - Ծրագրերի իրականացման գրասենյակ

ԿԱԻ – Կրթության ազգային ինստիտուտ

ԿԳՆ – Կրթության եւ գիտության նախարարություն

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ՀԱԽ- Համայնքային ակտիվ խումբ

ՀԵՆԱ-Համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակումբ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՀ ԸՕ - Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք

ՀՀԿ – Հասարակության հետ կապեր

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ՇՊ – Շահերի պաշտպանություն

ՇՊՈԿ-Շահերի պաշտպանության ռեսուրս կենտրոններ

ՏԻՍ – Տեղական ինքնակառավարման մարմին

ՓԲԸ - Փակ բաժնետիրական ընկերություն

ՔՀԿ – Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՔՇՊԱԾ – Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր

ՏՀՏ- Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ

ՎՎ ՄԲԿ – Վորլդ Վիժն միջազգային բարեգործական հիմնադրամ

ՎՎ Սիսիանի ՏԶԾ- Վորլ Վիժն Սիսիանի տարածքային զարգացման ծրագիր

ԿՏԱԿ- Կրթական տեխնոլոգիաների աջակցության կենտրոն

ՀԶԱՑ-Համայնքային զարգացման աջակցության ցանց

ՆԿԱՑ-Ներառական կրթության աջակցության ցանց

ԻՏԵԿ- Իրավունքների տեղեկատվական կենտրոն

ՔՀԶԶ- Քաղաքացիական հասարակության զարգացման հիմնադրամ